Сергей Аракелян – доктор юридических наук, ректор академии юстиции РА, профессор кафедры уголовного права ЕГУ

Sergey Araqelyan – Doctor of Legal Sciences, Rector of the Academy of Justice of the RA, Professor at YSU Chair of Criminal Law

Էլ. փոստ՝ sarakelyan@ysu.am, ORCID: <https://orcid.org/0000-0003-0509-7633>.

Նարեկ Հարությունյան – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական

Нарек Арутюнян – Соискатель кафедры уголовного права ЕГУ, следователь 1-го следственного отдела административных районов Кентрон и Норк-Мараш следственного управления города Еревана Следственного комитета РА, советник 3-го класса

Narek Harutyunyan – Applicant at YSU Chair of Criminal Law, Investigator of the 1st Investigation Division of Kentron and Nork-Marash Administrative Districts of the Investigation Department of Yerevan City of the RA Investigative Committee, 3rd Class Counselor

Էլ. փոստ՝ narek.har.v@gmail.com, ORCID: <https://orcid.org/0009-0002-6126-6673>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 13.09.2024

Գրախոսվել է՝ 24.10.2024

Հաստատվել է՝ 15.12.2024

© The Author(s) 2024

Բացի դրանից, հողվածի հեղինակները հատուկ ուշադրություն են հրավիրում նաև այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության հարևան Իրանի Իսլամական Հանրապետության «Իսլամական քրեական պատիժների մասին» օրենքը չի պարունակում անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն սահմանող իրավակարգավորում: Այդ կապակցությամբ ընդգծվում է, որ տվյալ երկիրը դասվում է այն պետությունների շարքին, որտեղ անօրինական միգրացիայի կազմակերպումը չի դիտարկվում որպես հանրորեն վտանգավոր, հանցավոր երևույթ:

Բանալի բառեր - անօրինական միգրացիա, անօրինական միգրացիայի կազմակերպում, քրեական օրենսգիրք, հանցագործություն, քրեական պատասխանատվություն, պատիժ, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություն

Ներածություն

Ժամանակակից աշխարհում միգրացիոն գործընթացները ձեռք են բերել վերազգային բնույթ: Դրանք սկսել են ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն ունենալ բազմաթիվ պետությունների վրա: Բնակչության բնական միգրացիան մի կողմից յուրաքանչյուր մարդու իրավունքն է, իսկ մյուս կողմից՝ գործնականում զգալի նշանակություն ունի ցանկացած պետության (որի վրա տարածվում է) սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական զարգացման համար և էապես ազդում է համապատասխան երկրների գործընկերային հարաբերությունների վրա¹:

Միավորված ազգերի կազմակերպության տվյալներով օրեցօր ահագնացող միգրացիոն գործընթացներում ներգրավված է 218 երկիր: ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության կանխատեսման համաձայն՝ մինչև 2030 թվականը մոլորակի բնակչության միգրացիոն ակտիվության ցուցանիշը կկազմի 300 միլիոն մարդ²:

Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ, օրինական միգրացիայի լայնածավալ տարածումից բացի, ժամանակակից աշխարհում արձանագրվում է նաև այդ երևույթի անօրինական դրսևորումների կայուն աճ: Դրանով պայմանավորված՝ համապատասխան հասարակություններում խորանում է այն հիմնավոր մտահոգությունը, որ շարունակաբար սրվում են սոցիալական, մշակութային, կրոնական աղապտացման, բռնությամբ կատարվող և շահադիտական հանցագործությունների ու հանցավոր այլ դրսևորումների (այդ թվում՝ հանցավոր եկամուտների օրինականացման, կեղծ փաստաթղթերի պատրաստման, օգտագործման և իրացման) աճի հետ կապված խնդիրները³:

¹ Sté u Букалерева Л. А., Угорова Т.Н. Трансграничное перемещение нелегальных мигрантов: особенности уголовно-правового противодействия в странах Евросоюза // Ученые труды Российской академии адвокатуры и нотариата. № 4(67), 2022, էջեր 59-60:

² Sté u Долгова Н. С. Незаконная миграция: актуальные проблемы борьбы в современных условиях. М.: Феникс, 2015, էջ 4:

³ Sté u Кузнецова Н. В. Особенности уголовно-правового противодействия контрабанде мигрантов в

Փորձագետների գնահատմամբ՝ անօրինական միգրացիայի առավել վտանգավոր դրսևորումներ են դրա կազմակերպված ձևերը, որոնք կապված են վերազգային հանցավոր խմբերի գործունեության հետ: Ընդ որում, դրանցից գոյացող հսկայական հանցավոր եկամուտները համադրելի են թմրամիջոցների և զենքի ապօրինի շրջանառությունից առաջացողների հետ: Մասնավորապես, մասնագետների հաշվարկներով անօրինական միգրացիայի կազմակերպմամբ զբաղվող վերազգային հանցավոր խմբերի տարեկան եկամուտների չափը գերազանցում է 12 միլիարդ ԱՄՆ դոլարը⁴:

Քննարկվող բացասական երևույթի դեմ արդյունավետ պայքարի իրավական ապահովման տեսանկյունից, միջազգային իրավական համապատասխան փաստաթղթերից բացի, հատկապես կարևորվում են անօրինական միգրացիայի տարբեր դրսևորումներին հակազդելուն ուղղված ներպետական օրենսդրական կարգավորումները: Ընդ որում, արտասահմանյան երկրների օրենսդրական ակտերն այդ առումով աչքի են ընկնում միգրացիոն կանոնների խախտման քրեականացման տարբեր աստիճանով:

Հիմնական հետազոտություն

Մեր հետազոտության շրջանակներում այդ կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ), Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) պետություններում, ինչպես նաև արտասահմանյան այլ երկրներում (ԱՄՆ, ՉԺՀ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա և այլն) առկա քրեաիրավական համապատասխան կարգավորումների վերլուծությանը: Ընդ որում, ի տարբերություն ԵԱՏՄ երկրների, որոնց պարագայում հանցակազմ, պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց նախատեսող նորմերը կարող են կիրառվել միայն քրեական օրենսգրքում ընդգրկվելուց հետո, թե՛ ռոմանագերմանական և թե՛ անգլոսաքսոնական իրավական ընտանիքների երկրների մեծ մասում գործում են նաև առանձին ոլորտներ կարգավորող այլ (ճյուղային) նորմատիվ իրավական ակտեր, որոնք նաև քրեական պատասխանատվություն են սահմանում դրանցում նախատեսված արգելքները խախտելու համար⁵:

отдельных европейских странах // Материалы XXI Международной научно–практической конференции СибЮИ МВД России. Красноярск, 2018, էջ 151:

⁴ Տե՛ս, օրինակ՝ **Самойлюк Н. В.** Уголовно-правовая характеристика организации незаконной миграции // Миграционное право. 2009, № 4, էջ 7:

⁵ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս, օրինակ՝ **Артемов В. Ю., Власов И. С., Голованова Н. А. и др.**, Миграция и преступность: сравнительно-правовой анализ: Монография / Отв. ред. И.С. Власов, Н.А. Голованова. М.: ИЗиСП, Контракт, 2012 // СПС «КонсультантПлюс», **Краснов А. Ю.**, Государственная политика противодействия незаконной миграции: Дис. ... канд. полит. наук. М., 2010, էջեր 110-128, **Животовская И. Г.** Италия: опыт борьбы с нелегальной иммиграцией. [Электронный ресурс]. Режим доступа: http://www.perspektivy.info/rus/gos/italija_opyt_borby_s_nelegalnoj_immigracijej_2012-01-13.htm

ԵՍՏՄ-ն, ինչպես հայտնի է, միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որը ներկա պայմաններում միավորում է Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը:

Բելառուսի Հանրապետությունում անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն է նախատեսված քրեական օրենսգրքի հոդված 371¹-ով⁶, որի 1-ին մասի համաձայն տվյալ արարքը բնորոշվում է հետևյալ կերպ. «Օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց ապօրինի մուտքը Բելառուսի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետությունում նրանց գտնվելը կամ Բելառուսի Հանրապետության տարածքով նրանց տեղափոխումը (տարանցումը) կազմակերպելը կամ ղեկավարելը կամ դրան նպաստելը»: Այդ արարքի համար որպես պատիժ նախատեսված է կալանքը՝ 1-3 ամիս ժամկետով, կամ ազատության սահմանափակումը՝ մինչև 5 տարի ժամկետով, կամ ազատազրկումը՝ նույն ժամկետով:

Նույն հոդվածի 2-րդ մասն առավել խիստ պատասխանատվություն է սահմանում անօրինական միգրացիայի կազմակերպման համար, որը կատարվել է օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր եղանակով կամ կապված է նրանց նկատմամբ դաժան կամ նրանց պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հետ կամ կատարվել է կրկին անգամ կամ խմբի կողմից նախնական համաձայնությամբ կամ պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնական դիրքն օգտագործելով: Քննարկվող արարքը նշված ծանրացուցիչ հանգամանքներում կատարելը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-7 տարի ժամկետով, և տուգանքով կամ առանց դրա:

Վերը ներկայացված իրավակարգավորումներից կարելի է հետևություն անել, որ Բելառուսի Հանրապետությունում քննարկվող հանցագործությունը ենթադրում է միայն օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց ապօրինի մուտքը ԲՀ, ԲՀ-ում նրանց գտնվելը կամ ԲՀ տարածքով նրանց տեղափոխումը (տարանցումը) կազմակերպելու հետ կապված դրսևորումները: Ընդ որում, քրեաիրավական որևէ նշանակություն չունեն հանցագործության շարժառիթը, նպատակը և եղանակը: Այսինքն՝ անձի (անկախ քաղաքացիությունից կամ դրա բացակայությունից) ելքը ԲՀ-ից, նրա օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելն ապօրինի կազմակերպելը չի կարող պատասխանատվություն առաջացնել տվյալ երկրի քրեական օրենսգրքի հոդված 371¹-ով, ինչին դժվար է համաձայնել:

⁶ Ст' u Уголовный Кодекс Республики Беларусь от 09.07.1999 № 275-3 (с изм. и доп. от 14.03.2023) // <https://pravo.by/document/?guid=3871&p0=hk9900275>

Ղազախստանի Հանրապետությունում անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն է նախատեսված քրեական օրենսգրքի հոդված 394-ով⁷, որի 1-ին մասի համաձայն՝ տվյալ արարքը բնորոշվում է հետևյալ կերպ. «Տրանսպորտային միջոց կամ կեղծ փաստաթուղթ կամ բնակելի կամ այլ տարածք տրամադրելու, ինչպես նաև քաղաքացիներին, օտարերկրացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց Ղազախստանի Հանրապետություն ապօրինի մուտքի կամ ելքի կամ Ղազախստանի Հանրապետության տարածքով ապօրինի տեղաշարժվելու համար այլ ծառայություններ մատուցելու միջոցով անօրինական միգրացիա կազմակերպելը»։ Այս հանցագործությունը պատժվում է տուգանքով՝ մինչև 2 հազար ամսական հաշվարկային ցուցանիշների չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ նույն չափով, կամ հանրային աշխատանքների ներգրավելով՝ մինչև 600 ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մինչև 2 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ նույն ժամկետով, և գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Նույն հոդվածի 2-րդ մասն առավել խիստ պատասխանատվություն է սահմանում անօրինական միգրացիայի կազմակերպման համար, որը կատարվել է անձի կողմից՝ իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: Հանցանքը նշված ծանրացուցիչ հանգամանքներով կատարելը պատժվում է տուգանքով՝ մինչև 5 հազար ամսական հաշվարկային ցուցանիշների չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ նույն չափով, կամ հանրային աշխատանքների ներգրավելով՝ մինչև 1200 ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ նույն ժամկետով՝ մինչև 3 տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով կամ առանց դրա, և գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Նշված հոդվածի 3-րդ մասն առավել խիստ պատասխանատվություն է սահմանում անօրինական միգրացիայի կազմակերպման համար, որը կատարվել է հանցավոր խմբի (Ղազախստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 31-ի 3-րդ մասի համաձայն՝ հանցակցության առավել վտանգավոր ձևն է – Ս.Ա., Ն.Հ.) կողմից: Հանցանքը տվյալ առավել ծանրացուցիչ հանգամանքով կատարելը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-7 տարի ժամկետով, և գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Ներկայացված իրավակարգավորումների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ, նախ, քննարկվող հանցագործությունն առավել մանրամասն է նկարագրված: Մասնավորապես, հոդված 394-ի 1-ին մասը նախատեսում է անօրինական միգրացիայի կազմակերպման առավել տարածված եղանակները՝

⁷ Ст. 1 Уголовный Кодекс Республики Казахстан от 03.07.2014 г. № 226–V (с изм. и доп. от 12.09.2023 г.) // https://online.zakon.kz/Document/?doc_id=31575252

տրանսպորտային միջոց կամ կեղծ փաստաթուղթ կամ բնակելի կամ այլ տարածք տրամադրելը: Ավելին, դրանց ցանկը սպառիչ չէ. մատնանշված է նաև երկիր ապօրինի մուտքի կամ ելքի կամ երկրի տարածքով ապօրինի տեղաշարժվելու համար այլ ծառայություններ մատուցելը: Ընդ որում, նշված հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում ոչ միայն օտարերկրա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, այլև Ղազախստանի քաղաքացիների անօրինական միգրացիան կազմակերպելու համար: Նման մոտեցումը, կարծում ենք, լիովին արդարացված է:

Բացի դրանից, Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ նախատեսված են ինչպես ծանրացուցիչ, այնպես էլ առավել ծանրացուցիչ մի շարք հանգամանքներ, որոնք բխում են միջազգային իրավական համապատասխան կարգավորումներից: Ընդ որում, դա նաև համապատասխան սանկցիաների տարբերակված նախատեսման հիմք է հանդիսացել, ինչը ևս, մեր կարծիքով, լիովին արդարացված է: Միևնույն ժամանակ, սակայն, տվյալ երկրի քրեական օրենսգիրքը պատասխանատվություն չի նախատեսում անձի (անկախ քաղաքացիությունից կամ դրա բացակայությունից)՝ օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում նրա գտնվելն ապօրինի կազմակերպելու համար, ինչին դժվար է համաձայնել:

Ղրղզստանի Հանրապետությունում, ի տարբերություն ԵԱՏՄ այլ պետությունների քրեական օրենսդրության, որտեղ քննարկվող հանցագործությունը տեղ է գտել «Կառավարման կարգի դեմ ուղղված» հանցավոր արարքների շարքում, անօրինական միգրացիայի կազմակերպումը նախատեսված է «Մարդու անձնական ազատության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ գլուխ 25-ում: Այդ հանցագործության համար պատասխանատվություն է նախատեսված Ղրղզստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 168-ով⁸, որի 1-ին մասի համաձայն՝ տվյալ արարքը բնորոշվում է հետևյալ կերպ. «Օգուտ ստանալու նպատակով՝ կամ առանց դրա անօրինական միգրացիա կազմակերպելը կամ միգրանտներին, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ապօրինի ներկրելը կամ արտահանելը կամ տրանսպորտային միջոց կամ կեղծ փաստաթուղթ կամ բնակելի կամ այլ տարածք տրամադրելը, ինչպես նաև Ղրղզստանի Հանրապետություն ապօրինի մուտքի կամ ելքի կամ Ղրղզստանի Հանրապետության տարածքով ապօրինի տեղաշարժվելու կամ տարանցման համար այլ ծառայություններ մատուցելը»: Այդ հանցագործությունը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-5 տարի ժամկետով, և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև 3 տարի ժամկետով:

Նշված հոդվածի 2-րդ մասն առավել խիստ պատասխանատվություն է

⁸ Ст. 168 Уголовный Кодекс Кыргызской Республики от 28.10.2021 г. № 127 (с изм. и доп. от 10.10.2023 г.) // https://online.zakon.kz/Document/?doc_id=36675065

⁹ Ենթադրվում է, որ տվյալ դեպքում խոսքը շահադիտական նպատակի մասին է:

սահմանում նույն արարքի համար, որը կատարվել է՝ 1) երեխայի նկատմամբ, 2) խմբի կողմից, 3) խմբի կողմից նախնական համաձայնությամբ, 4) անձի կողմից՝ իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, 5) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ, 6) անգորշությամբ ծանր կամ առանձնապես ծանր վնաս պատճառելով, 7) կազմակերպված խմբի կողմից կամ 8) հանցավոր համագործակցության կազմում: Հանցանքը վերը թվարկված ծանրացուցիչ հանգամանքներով կատարելը պատժվում է ազատազրկմամբ՝ 5-8 տարի ժամկետով, և գույքի բռնագրավմամբ:

Ներկայացված իրավակարգավորումների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ղրղզստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ ևս քննարկվող հանցագործությունն առավել մանրամասն է նկարագրված: Մինչդեռ, ի տարբերություն Բելառուսի և Ղազախստանի քրեական օրենսդրության, տվյալ դեպքում նախատեսված է նաև հանցագործության նպատակը (օգուտ ստանալը), ինչը, կարծում ենք, լիովին արդարացված է: Մինևնույն ժամանակ, սակայն, անտրամաբանական է թվում անօրինական միգրացիայի կազմակերպումը մարդու անձնական ազատության դեմ ուղղված հանցագործությունների շարքում նախատեսելը: Բանն այն է, որ անօրինական միգրանտները, որպես կանոն, այս կամ այն երկիր անօրինական մուտք կամ ելք են գործում կամ տեղաշարժվում դրա տարածքով իրենց կամքով և նույնիսկ ցանկությամբ: Ավելին, նրանք պատրաստ են լինում նաև վճարել կամ գույքային բնույթի ծառայություն մատուցել դա կազմակերպողներին: Ուստի դժվար է խոսել նշված անձանց ֆիզիկական ազատության դեմ ոտնձգելու մասին:

Բացի դրանից, դժվար է արդարացված համարել նաև Ղրղզստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 168-ի նույն (2-րդ) մասի տարբեր կետերով ծանրացուցիչ այնպիսի հանգամանքների նախատեսումը, ինչպիսիք են քննարկվող հանցանքը՝ խմբի կողմից (2-րդ կետ), խմբի կողմից նախնական համաձայնությամբ (3-րդ կետ), կազմակերպված խմբի կողմից (7-րդ կետ) կամ հանցավոր համագործակցության կազմում (8-րդ կետ) կատարելը: Կարծում ենք՝ առավել արդարացված կլիներ նշված հոդվածի նոր՝ 3-րդ մաս առանձնացնելը և 2-րդ մասում քննարկվող հանցանքը խմբի կողմից, իսկ 3-ում՝ հանցավոր համագործակցության կազմում կատարելը նախատեսելը:

Ռուսաստանի Դաշնությունում անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն է նախատեսված քրեական օրենսգրքի հոդված 322¹-ով¹⁰, որի 1-ին մասի համաձայն՝ տվյալ արարքը բնորոշվում է հետևյալ կերպ. «Օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց ապօրինի մուտքը Ռուսաստանի Դաշնություն, Ռուսաստանի

¹⁰ Ст. 322 Уголовный Кодекс Российской Федерации от 13.06.1996 г. № 63-ФЗ (с изм. и доп. от 25.12.2023 г.) // https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/

Դաշնությունում նրանց ապօրինի գտնվելը կամ Ռուսաստանի Դաշնության տարածքով նրանց ապօրինի տարանցիկ տեղափոխումը կազմակերպելը»։ Տվյալ հանցանքը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով, և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 2 տարի ժամկետով, կամ առանց դրա։

Նշված հոդվածի 2-րդ մասն առավել խիստ պատասխանատվություն է սահմանում նույն արարքների համար, որոնք կատարվել են՝ ա) նախնական համաձայնությամբ խմբի կամ կազմակերպված խմբի կողմից, բ) Ռուսաստանի Դաշնության տարածքում հանցանք կատարելու նպատակով կամ գ) անձի կողմից՝ իր ծառայողական դիրքն օգտագործելով։ Հանցանքը նշված ծանրացուցիչ հանգամանքներով կատարելը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 7 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 500 հազար ռուբլու կամ դատապարտյալի մինչև 3 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա, և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 2 տարի ժամկետով, կամ առանց դրա։

Ներկայացված իրավակարգավորումներից կարելի է հետևություն անել, որ Ռուսաստանի Դաշնությունում ևս քննարկվող հանցագործությունը ենթադրում է միայն օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց ապօրինի մուտքը ՌԴ, ՌԴ-ում նրանց գտնվելը կամ ՌԴ տարածքով նրանց տարանցիկ տեղափոխումը կազմակերպելու հետ կապված դրսևորումները։ Այսինքն՝ անձի (անկախ քաղաքացիությունից կամ դրա բացակայությունից) ելքը ՌԴ-ից, նրա՝ օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելն ապօրինի կազմակերպելը չի կարող պատասխանատվություն առաջացնել տվյալ երկրի քրեական օրենսգրքի հոդված 322¹-ով, ինչպես արդեն նշվել է, դժվար է համաձայնել։

Բացի դրանից, նշված հոդվածի իմաստով նույնպես քրեաիրավական որևէ նշանակություն չունեն հանցագործության շարժառիթը, նպատակը և եղանակը։ Դա ևս, ինչպես արդեն նշվել է, դժվար է արդարացված համարել։

Ինչ վերաբերում է **ԵՄ երկրներին**, ապա հարկ է նշել, որ վիճակագրական համապատասխան ցուցանիշների և փորձագիտական գնահատականների համաձայն՝ օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մեծամասնությունը բնակվում է Ֆրանսիայում, Գերմանիայում, Նիդերլանդներում և Իտալիայում։ Հիշատակված պետություններն առաջատար են նաև անլեգալ միգրանտների քանակով¹¹։ Ուստի այդ առումով առավել նպատակահարմար է նախ և առաջ հատուկ անդրադարձ կատարել հենց նշված երկրների օրենսդրությամբ նախատեսված համապատասխան իրավակարգավորումների քննարկմանը։

¹¹ Ст'ю Уторова Т. Н. Компаративный анализ уголовной ответственности за преступления в сфере миграции: Дис... канд. юрид. наук. М., 2019, էջ 80:

Մասնավորապես, անօրինական միգրացիայի կանխարգելման իրավական միջոցների ֆրանսիական համակարգը ներառում է ինչպես քրեական օրենսգրքի, այնպես էլ մի շարք այլ իրավական ակտերի (աշխատանքային, առևտրային, միգրացիոն օրենսդրության) դրույթները: Ընդ որում, **Ֆրանսիայի** օրենսդրությամբ «անօրինական միգրացիայի կազմակերպում» վերտառությամբ հանցակազմ նախատեսված չէ: Քննարկվող ոլորտում սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարքում տեղ են գտել միգրացիոն կանոնների խախտման, մարդկանց մաքսանենգության, ինչպես նաև կեղծ ամուսնական հարաբերությունների հետ կապված արարքները¹²:

Միգրացիայի ոլորտը կարգավորող հիմնական նորմատիվ ակտը Ֆրանսիայի «Օտարերկրացիների մուտքի, գտնվելու և ապաստանի իրավունքի մասին» օրենսգիրքն է¹³, որը նաև նախատեսում է անօրինական միգրացիայի կազմակերպում հանդիսացող հանցավոր արարքներ և պատիժներ սահմանում դրանց համար: Մասնավորապես, դրա L.622-1 հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից միգրանտներ ներկրելը և Ֆրանսիայի Հանրապետության տարածքում նրանց ապօրինի գտնվելուն նպաստելը պատժվում են ազատազրկմամբ՝ առնվազն 5 տարի ժամկետով, և տուգանքով՝ 30 հազար եվրոյի չափով:

Նշված օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում նաև իրավաբանական անձանց համար: Այսպես, դրա L.625-1 հոդվածի համաձայն՝ տրանսպորտային կազմակերպության կողմից Ֆրանսիայի Հանրապետության տարածք ԵՄ քաղաքացիություն չունեցող անձանց ներկրելը կամ առանց հատուկ թույլտվության և տարանցման փաստաթղթերի երկրի տարածքով նրանց տեղափոխելը պատժվում է տուգանքով՝ 5 հազար եվրոյի չափով՝ յուրաքանչյուր ներկրվող կամ տեղափոխվող անձի համար: Բացի այդ, կարող է նաև կասեցվել համապատասխան կազմակերպության գործունեությունը:

Նույն օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ հանցավոր են համարվում նաև առանց համատեղ բնակվելու մտադրության ամուսնությունը կամ հայրություն (մայրություն) ճանաչելը, եթե այդ գործողությունները կատարվել են քաղաքացիություն կամ կացության կարգավիճակ ձեռք բերելու կամ արտաքսումից խուսափելու նպատակով, ինչպես նաև նշված գործընթացները կազմակերպելը: Այդ արարքները պատժվում են ազատազրկմամբ՝ 5 տարի ժամկետով, և տուգանքով՝ 15 հազար եվրոյի չափով:

Միգրացիոն կանոնները խախտելու որոշ դրսևորումների համար քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև Ֆրանսիայի աշխատանքային օրենսգրքով: Մասնավորապես, դրա L.364-3 (M) հոդվածի համաձայն՝

¹² Տե՛ս Ֆրանսիայի քրեական օրենսգիրք // <https://legislationline.org/france>

¹³ Տե՛ս Кодекс о въезде и пребывании иностранцев и о праве на убежище от 25.11.2004 № 274 // <http://www.legislationline.org/topics/country/30/topic/10>

ԵՄ քաղաքացիություն չունեցող անձին առանց հատուկ թույլտվության աշխատանքի ընդունելը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով, և տուգանքով՝ 15 հազար եվրոյի չափով՝ յուրաքանչյուր ոչ լեգալ աշխատողի համար: Առավել խիստ պատիժ (ազատազրկում՝ մինչև 10 տարի ժամկետով, և տուգանք՝ 100 հազար եվրոյի չափով) է առաջացնում նույն արարքը կազմակերպված խմբի կողմից կատարելը¹⁴:

Գերմանիայում միգրացիոն իրավախախտումների համար քրեական և վարչական պատասխանատվություն է սահմանված «Բնակության, զբաղվածության և Դաշնության տարածքում օտարերկրացիների ինտեգրման մասին» օրենքի գլուխ 9-ում¹⁵: Մասնավորապես, նշված օրենքի հոդված 96-ի դրույթներին համապատասխան՝ երկրի տարածք օտարերկրացիների ապօրինի ներկրման կամ դրան դրդելու համար նախատեսված է այլընտրանքային երկու պատիժ՝ ազատազրկում՝ մինչև 5 տարի ժամկետով, կամ տուգանք: Միաժամանակ, նախատեսված են այդ հանցագործության առավել վտանգավոր տեսակները՝ նույն արարքը շահադիտական նպատակով, կրկին անգամ կամ մեկից ավելի օտարերկրացիների նկատմամբ կատարելը:

Բացի դրանից, Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Ապաստան տրամադրելու մասին» օրենքով քրեական պատասխանատվություն է նախատեսված միգրանտների մաքսանենգության համար¹⁶: Նշված օրենքի դրույթներին համապատասխան՝ միգրանտների մաքսանենգությունը որպես արհեստ կամ կազմակերպված խմբի կողմից կամ զենքի գործադրմամբ կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելով կատարելը, որը մարդու առողջությանը լուրջ վնաս պատճառելու սպառնալիք է պարունակում, պատժվում է ազատազրկմամբ՝ 6 ամսից 10 տարի ժամկետով:

Նույն օրենքը քրեական պատասխանատվություն է սահմանում նաև փախստականի կարգավիճակ ապօրինի ստանալուն նպաստելու համար, որը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 3 տարի ժամկետով, կամ տուգանքով: Նույն արարքը նյութական շահագրգռվածությունից ելնելով, կրկին անգամ կամ մեկից ավելի օտարերկրացիների նկատմամբ կատարելը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով: Մինչդեռ, եթե նշված հանցանքը կատարվում է հատուկ այդ նպատակով ստեղծված բանդայի կողմից, այն

¹⁴ St' u Gesetzgebende Akte Frankreichs und der Schweiz 2005-2006 гг. об иммиграции и интеграции: сборник / перев.-сост. д.ю.н. И.В. Понкин. М.: Институт государственно-конфессиональных отношений и права, 2008, էջ 221:

¹⁵ St' u Gesetz о проживании, занятости и интеграции иностранцев в федеральной территории (Aufenthaltsgesetz – AufenthG) в редакции от 30.10.2017 // Официальный сайт Федерального министерства юстиции и защиты прав потребителей ФРГ // http://gesetze-iminternet.de/aufenthg_2004/BJNR195010004.html#BJNR195010004BJNG000101310

¹⁶ St' u Gesetz о предоставлении убежища (Asylgesetz) // Официальный сайт Федерального Министерства юстиции и защиты прав потребителей // http://gesetze-im-internet.de/asylvfg_1992/

պատժվում է ազատազրկմամբ՝ 6-10 տարի ժամկետով:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում անօրինական միգրացիայի կազմակերպմանն առնչվող այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են խաբեության, բռնության կամ հարկադրանքի այլ եղանակով մարդուն ԳԴՀ տարածքից դուրս հանելը (հոդված 237), փաստաթուղթ կեղծելը (հոդված 275) և հաստատապես հայտնի կեղծ կամ ոչ հավաստի տեղեկություններ պարունակող ծառայողական վկայական կամ այլ փաստաթուղթ ձեռք բերելը կամ իրացնելը (հոդված 276)¹⁷:

Նիդերլանդներում միգրացիայի ոլորտում հանցագործությունների համար պատասխանատվություն է սահմանվում քրեական օրենսգրքով¹⁸: Մասնավորապես, դրա 197a հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում մարդկանց մաքսանենգության համար, որը բնորոշվում է որպես Նիդերլանդների Թագավորություն անձի մուտք գործելուն նպաստելու կամ Թագավորության տարածքով նրա տարանցումը կամ ԵՄ անդամ այլ պետության տարածք մուտք գործելը կազմակերպելու հետ կապված ապօրինի գործողությունների կատարում: Տվյալ արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 4 տարի ժամկետով կամ 5-րդ կատեգորիայի տուգանքով: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն պատիժն է առաջացնում նաև Նիդերլանդներում կամ ԵՄ անդամ կամ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ» արձանագրությունը ստորագրած այլ պետությունում ապօրինի կացության քարտ ստանալուն նպաստելը, որը կատարվել է նյութական շահագրգռվածությունից ելնելով:

Ներկայացված հանցագործությունների առավել վտանգավոր տեսակները նախատեսված են քննարկվող հոդվածի 3-6-րդ մասերով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում վերը նշված հանցանքները պաշտոնական դիրքն օգտագործելով կամ որպես արհեստ կամ խմբի կողմից կատարելը, ինչպես նաև մարդկանց մաքսանենգությունը, որը հանգեցրել է մահվան:

Իտալիայի քրեական օրենսգրքում նույնպես նախատեսված են անօրինական միգրացիայի կազմակերպմանն այս կամ այն կերպ առնչվող հանցագործություններ¹⁹: Մասնավորապես, դրա բաժին 12-ում (Անձի դեմ ուղղված հանցագործությունները) տեղ են գտել հանցակազմեր, որոնք պատասխանատվություն են սահմանում ստրկության վիճակի մեջ դնելու կամ պահելու (հոդված 600) և մարդկանց առևտրի և շահագործման նպատակով նրանց տեղափոխելու (հոդված 601) համար:

¹⁷ Տե՛ս Գերմանիայի քրեական օրենսգիրք // <https://legislationline.org/germany>

¹⁸ Տե՛ս Նիդերլանդների քրեական օրենսգիրք // <https://legislationline.org/netherlands>

¹⁹ Տե՛ս Իտալիայի քրեական օրենսգիրք // <https://legislationline.org/italy>

Մինևույն ժամանակ, սակայն, Իտալիայում միգրացիոն հոսքերը և հասարակությունում եկվորների ինտեգրումը կարգավորող, ինչպես նաև անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն (այդ թվում՝ քրեական) սահմանող հիմնական օրենսդրական ակտերն են 1998 թվականի մարտի 6-ի № 40 և 2002 թվականի հուլիսի 30-ի № 189 օրենքները: Դրանցից առաջինը հայտնի է որպես «Տուրկո-Նապոլիտանո օրենք», իսկ երկրորդը՝ «Բոսսի-Ֆինի օրենք»²⁰:

Վերը նշված իրավական ակտերին համապատասխան՝ միգրացիոն հանցագործություններ են համարվում այն գործողությունները, որոնք ուղղված են օտարերկրյա քաղաքացու անլեգալ մուտքը Իտալիա կամ այլ պետություն քարոզելը, կազմակերպելը կամ ֆինանսավորելը, ինչպես նաև նրան ապօրինի տեղափոխելը: Նշված հանցանքները պատժվում են ազատազրկմամբ՝ 1-5 տարի ժամկետով, և տուգանքով՝ 15 հազար եվրոյի չափով: Մինչդեռ նշված գործողությունները ծանրացուցիչ հանգամանքներում՝ 5 և ավելի անձանց նկատմամբ, տեղափոխվողների կյանքի կամ առողջության համար վտանգավոր պայմաններ ստեղծելով, խմբի կողմից, միջազգային բնույթի տրանսպորտային ծառայություններ կամ կեղծ փաստաթղթեր օգտագործելով կամ գենք գործադրելով կատարելու դեպքերում ազատազրկման ժամկետն ավելանում է՝ կազմելով մինչև 15 տարի²¹:

ԵՄ այլ երկրներում, ինչպես արդեն նշվել է, նույնպես քրեական պատասխանատվություն է նախատեսված անօրինական միգրացիայի կազմակերպման առնչվող հանցանքների համար: Գլխավորապես այն դրսևորվում է միգրանտների մաքսանենգության համար պատիժ սահմանելով: Ընդ որում, որպես կանոն, այդ արարքի հասարակ տեսակը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև երկու տարի ժամկետով, և տուգանքով, որի չափերը կախված են ապօրինի տեղափոխվող անձանց թվից: Բանն այն է, որ տուգանքը վճարվում է յուրաքանչյուր տեղափոխվողի համար առանձին, որի նպատակն է հնարավորինս ոչ շահավետ դարձնել նման արարքների կատարումը²²:

Տվյալ հետազոտության շրջանակներում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև արտասահմանյան այլ երկրներում անօրինական միգրացիայի կազմակերպման համար քրեական պատասխանատվություն սահմանող իրավակարգավորումների ուսումնասիրությունը:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում, օրինակ, դրանք նախատեսված են քրեական օրենսգրքում՝ «Հասարակական կարգի և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ գլուխ 6-ի

²⁰ Տե՛ս նաև **Уторова Т. Н.** Компаративный анализ уголовной ответственности за преступления в сфере миграции. Дис. ... канд. юрид. наук. М., 2019, էջ 89:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջեր 89-90:

²² Տե՛ս նաև **Букалерова Л. А., Уторова Т. Н.** Трансграничное перемещение нелегальных мигрантов: особенности уголовно-правового противодействия в странах ЕС, էջ 65:

§3-ի («Պետական սահմանի ռեժիմի դեմ ուղղված հանցագործությունները») շրջանակներում²³: Մասնավորապես, ՉԺՀ քր. օր.-ի հոդված 318-ը պատասխանատվություն է սահմանում այլ անձի կողմից պետական սահմանն ապօրինի հատելը կազմակերպելու համար, որը պատժվում է ազատազրկմամբ՝ 2-7 տարի ժամկետով, և տուգանքով: Դրան հաջորդող հոդվածներում քրեական պատասխանատվություն է նախատեսված պետական սահմանն ապօրինի հատելու նպատակով խաբեությանմբ անձնագիր, մուտքի արտոնագիր կամ մուտքի (ելքի) այլ փաստաթուղթ ձեռք բերելու համար, որը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 3 տարի ժամկետով, և տուգանքով (հոդված 319), պետական սահմանն ապօրինի հատելու նպատակով կեղծ անձնագիր, մուտքի արտոնագիր կամ մուտքի (ելքի) այլ փաստաթուղթ տրամադրելու համար, որը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով, և տուգանքով (հոդված 320), ինչպես նաև այլ անձին պետական սահմանով ապօրինի տեղափոխելու համար, որը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով, և տուգանքով կամ կալանքով կամ հսկողություն սահմանելով և տուգանքով (հոդված 321):

Անգլոսաքսոնական իրավական ընտանիքի երկրներում անօրինական միգրացիայի կազմակերպման դեմ պայքարի քրեաիրավական միջոցները նախատեսված են ոչ թե քրեական օրենսդրությամբ, այլ տվյալ ոլորտը կարգավորող ինքնուրույն (ոչ կոդիֆիկացված) իրավական ակտերով: Մասնավորապես, միգրացիոն օրենսդրության տարբեր խախտումների համար քրեաիրավական ներգործության միջոցներ են նախատեսվում ԱՄՆ «Իմիգրացիայի և ազգության մասին» օրենքով, Մեծ Բրիտանիայի «Իմիգրացիայի մասին» օրենքով, Կանադայի «Իմիգրացիայի և փախստականների պաշտպանության մասին» օրենքով²⁴:

Այսպես, ԱՄՆ «Իմիգրացիայի և ազգության մասին» օրենքի²⁵ հոդված 274-ը քրեական պատասխանատվություն է նախատեսում անօրինական միգրացիայի կազմակերպման համար, որը պատժվում է բանտարկությամբ՝ մինչև 10 տարի, իսկ այն դեպքերում, երբ հանցավորի գործողությունները հանգեցնում են տուժողի մահվան կամ այլ ծանր հետևանքների՝ մինչև 20 տարի ժամկետով: Նույն օրենքի 274A հոդվածը պատասխանատվություն է սահմանում միգրանտին աշխատանքային գործունեության ապօրինի ներգրավելու համար (կախ-

²³ Տե՛ս Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քրեական օրենսգիրք // <https://asia-business.ru/law/law1/criminalcode/code/#6>

²⁴ Տե՛ս **Урда М. Н.** Уголовная ответственность за организацию незаконной миграции по законодательству зарубежных стран // Публичное право: теория и практика применения. Вестник № 3 / 2017, էջ 45:

²⁵ Տե՛ս Закон США об иммиграции и гражданстве 1990 года (Immigration and Nationality Act 1990) [Электронный ресурс] // Официальный сайт Департамента внутренней безопасности США // <https://www.uscis.gov/ilink/docView/SLB/HTML/SLB/act.html>

ված կրկնակիությունից՝ պատժվում է տուգանքով՝ 250-ից 10 հազար ԱՄՆ դոլարի չափով), իսկ 274C հոդվածը՝ մուտքի, ելքի և երկրում գտնվելու թույլտվություն սահմանող փաստաթուղթ կեղծելու համար (պատժվում է տուգանքով՝ 250-ից 5 հազար ԱՄՆ դոլարի չափով յուրաքանչյուր կեղծված փաստաթղթի համար):

Մեծ Բրիտանիայի «Իմիգրացիայի մասին» օրենքը²⁶ քրեական պատասխանատվություն է նախատեսում անօրինական միգրացիայի կազմակերպմանն առնչվող մի շարք արարքների համար: Մասնավորապես՝ երկրի տարածք օտարերկրացիների ապօրինի մուտք գործելուն ուղղված օգնություն ցուցաբերելու (հոդված 24), ապաստան հայցող անձանց շահադիտական նպատակով օգնություն ցուցաբերելու (հոդված 25), մուտքի արգելքի պարագայում երկիր մուտք գործելուն օժանդակելու (հոդված 25a):

Կանադայի օրենսդրությունն առանձնանում է անօրինական միգրացիային հակազդելուն ուղղված քրեաիրավական տարատեսակ կարգավորումների լայն շրջանակով: Մասնավորապես, «Իմիգրացիայի և փախստականների պաշտպանության մասին» Կանադայի օրենքի²⁷ հոդված 118-ը քրեական պատասխանատվություն է սահմանում առևանգման, խաբեության, մոլորության մեջ գցելու կամ բռնության սպառնալիք գործադրելու եղանակով պետության տարածք անձանց մուտքը կազմակերպելու համար: Տվյալ արարքի կատարման համար շատ խիստ պատիժ է նախատեսված՝ ընդհուպ ցմահ ազատազրկում:

Վերը նշված օրենքի մի շարք այլ հանցակազմերով պատասխանատվություն է նախատեսվում նաև Կանադա մուտք գործելու իրավունք սահմանող փաստաթղթեր չունեցող անձանց տվյալ պետության տարածք ապօրինի մուտք գործելուն հակելու կամ ցանկացած եղանակով նպաստելու տարատեսակ դրսևորումների համար:

Հետաքրքրարժան է նաև, որ մեր հարևան **Իրանի Իսլամական Հանրապետությունում** մինչ օրս չի կատարվել անօրինական միգրացիայի կազմակերպումը քրեականացնելու որևէ փորձ: Մասնավորապես, ԻԻՀ «Իսլամական քրեական պատիժների մասին» օրենքը չի պարունակում տվյալ արարքի համար պատասխանատվություն սահմանող իրավակարգավորում: Այլ կերպ ասած՝ այս երկիրը դասվում է այն պետությունների շարքին, որտեղ անօրինական միգրացիայի կազմակերպումը չի դիտարկվում որպես հանրորեն վտանգավոր երևույթ²⁸:

²⁶ Տե՛ս Закон Великобритании об иммиграции 2016 года (Immigration Act 2016) [Электронный ресурс] // Официальный сайт Национального архива Великобритании // <http://www.legislation.gov.uk/ukpga/2016/19/section/35/enacted>

²⁷ Տե՛ս Immigration and Refugee Protection Act (S.C. 2001) // Government of Canada // URL: <http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/I-2.5/FullText.html>

²⁸ Տե՛ս **Андрюшенков В. А.** Ответственность за организацию незаконной миграции в нормах зарубежного уголовного законодательства // Алтайский юридический вестник № 2 (14) 2016, էջեր 84-85:

Եզրակացություններ

Ամփոփելով հետազոտությունը՝ եզրակացնում ենք.

– Ի տարբերություն Եվրասիական տնտեսական միության երկրների, որոնց պարագայում հանցակազմ, պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց նախատեսող նորմերը կարող են կիրառվել միայն քրեական օրենսգրքում ընդգրկվելուց հետո, թե՛ ռոմանագերմանական և թե՛ անգլոսաքսոնական իրավական ընտանիքների երկրների մեծ մասում գործում են առանձին ոլորտներ կարգավորող այլ (ճյուղային) նորմատիվ իրավական ակտեր, որոնք նաև քրեական պատասխանատվություն են սահմանում դրանցում նախատեսված արգելքները խախտելու համար:

– Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է նախատեսվում ինչպես այլ անձի կողմից պետական սահմանն ապօրինի հատելը կազմակերպելու, այնպես էլ պետական սահմանն ապօրինի հատելու նպատակով խաբեությամբ անձնագիր, մուտքի արտոնագիր կամ մուտքի (ելքի) այլ փաստաթուղթ ձեռք բերելու կամ տրամադրելու և այլ անձին պետական սահմանով ապօրինի տեղափոխելու համար: Նշված հանցագործությունների պարագայում, ազատագրկման կամ կալանքի հետ մեկտեղ, որպես պարտադիր լրացուցիչ պատիժ, սահմանված է տուգանքը:

– Անգլոսաքսոնական իրավական ընտանիքի երկրներում անօրինական միգրացիայի կազմակերպման դեմ պայքարի քրեաիրավական միջոցները նախատեսված են ոչ թե քրեական օրենսդրությամբ, այլ տվյալ ոլորտը կարգավորող ինքնուրույն (ոչ կոդիֆիկացված) իրավական ակտերով: Այսպես, միգրացիոն օրենսդրության տարբեր խախտումների համար քրեաիրավական ներգործության միջոցներ են նախատեսում ԱՄՆ «Իմիգրացիայի և ազգության մասին», Մեծ Բրիտանիայի «Իմիգրացիայի մասին», Կանադայի «Իմիգրացիայի և փախստականների պաշտպանության մասին» օրենքները:

– Մեր հարևան Իրանի Իսլամական Հանրապետության «Իսլամական քրեական պատիժների մասին» օրենքը չի պարունակում անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն սահմանող իրավակարգավորում: Տվյալ երկիրը դասվում է այն պետությունների շարքին, որտեղ քննարկվող արարքը չի դիտարկվում որպես հանրորեն վտանգավոր երևույթ:

СЕРГЕЙ АРАКЕЛЯН, НАРЕК АРУТЮНЯН – Ответственность за организацию незаконной миграции по уголовному законодательству зарубежных стран. – В статье рассматриваются вопросы, связанные с особенностями правовых норм, предусмотренных в уголовных законодательствах ряда зарубежных стран, которые устанавливают ответственность за организацию незаконной миграции. В данной связи проводится анализ соответствующих законодательных актов государств – членов Евразийского экономического союза (ЕАЭС), Европейского союза (ЕС), а также ряда других зарубежных

стран (Соединенных Штатов Америки, Китайской Народной Республики, Великобритании, Канады, Австралии, Исламской Республики Иран).

В частности, подчеркивается, что в отличие от государств – членов Евразийского экономического союза, в большинстве упомянутых зарубежных стран ответственность за рассматриваемое преступление устанавливается не только Уголовным кодексом, но и другими нормативными правовыми актами, регулируемыми отдельные отрасли общественных отношений.

Кроме того, авторы статьи в то же время обращают специальное внимание на то обстоятельство, что в Законе об исламских наказаниях Исламской Республики Иран, соседней с Республикой Армения, не предусмотрены нормы, устанавливающие ответственность за организацию незаконной миграции. В связи с этим подчеркивается, что данная страна относится к тем государствам, в которых организация незаконной миграции не рассматривается как общественно опасное, преступное явление.

Ключевые слова: *незаконная миграция, организация незаконной миграции, уголовный кодекс, преступление, уголовная ответственность, наказание, уголовное законодательство зарубежных стран*

SERGEY ARAKELYAN, NAREK HARUTYUNYAN – Responsibility for the Organization of Illegal Migration under the Criminal Legislation of Foreign Countries. – The article discusses issues related to the peculiarities of legal norms provided for in the criminal legislation of foreign countries, which establish responsibility for the organization of illegal migration. In this regard, an analysis of the relevant legislative acts of the member states of the Eurasian Economic Union, the European Union, as well as a number of other foreign countries (USA, People's Republic of China, UK, Canada, Australia, Islamic Republic of Iran) is carried out.

In particular, it is emphasized that, unlike the countries of the Eurasian Economic Union, in most of the mentioned foreign countries, responsibility for the discussed crime is established not only by the Criminal Code, but also by other legal acts regulating certain spheres.

The authors also pay special attention to the fact that the Law on Islamic Punishments of the Islamic Republic of Iran, neighboring Armenia, does not provide for legal norms establishing liability for the organization of illegal migration. In this regard, it is emphasized that this country is one of those states in which the organization of illegal migration is not considered a socially dangerous, criminal phenomenon.

Key words: *illegal migration, organization of illegal migration, criminal code, crime, criminal liability, punishment, criminal legislation of foreign countries*

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՏԻԳՐԱՆ ՄԻՄՈՆՅԱՆ * 

Երևանի պետական համալսարան

Հափշտակությունները սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հիմնական կորիզն են, դրանց առանցքը, և այս դիտանկյունից քննարկվող երևույթի հասկացության և եղանակների ուսումնասիրությունը միշտ արդիական է և կարևոր:

Սույն հոդվածի շրջանակներում հետազոտվել են ՀՀ նոր (գործող) քրեական օրենսգրքով սահմանված հափշտակության հասկացության և դրա եղանակներին առնչվող որոշ հիմնահարցեր, որոնք բավականաչափ խնդրահարույց են, իսկ դրանց լուսաբանումը, ինչպես նաև հետագա օրենսդրական փոփոխություններին միտված լրամշակման առաջարկներն անհրաժեշտ են և հրատապ:

Հոդվածի նպատակը «հափշտակություն» հասկացության, ավարտի պահի, ինչպես նաև հափշտակության եղանակների օրենսդրական ձևակերպման առկա որոշ հիմնախնդիրներ հետազոտելն է և դրա արդյունքում օրենսդրական ձևակերպումների կատարելագործմանն ուղղված և հրատապ լուծում պահանջող առաջարկներ ներկայացնելն է:

Առանձին պարագրաֆներով քննարկվում են հափշտակության հասկացությունը, դրա ընկալման որոշ առանձնահատկություններ, ինչպես նաև հափշտակության եղանակների օրենսդրական ձևակերպման և որակման խնդիրները:

Հետազոտության առարկան դիտարկվել է համագիտական և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են դոգմատիկ, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտության արդյունքում ներկայացվել են հափշտակության ձևակերպմանը և հափշտակության եղանակներին առնչվող օրենսդրական առաջարկներ՝ միտված դրանց վերաբերյալ քրեաիրավական նորմերի կատարելագործմանը, մասնավորապես նշվել է.

- Օրենսդրական միասնական տրամաբանության ապահովման համատեքստ

* **Տիգրան Միմոնյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ

Тигран Симомян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ

Tigran Simonyan – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Criminal Law

Էլ. փոստ՝ tsimonyan@ysu.am, tvsimonyan@gmail.com, ORCID: <https://orcid.org/0000-0001-8481-5706>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 11.11.2024

Գրախոսվել է՝ 17.11.2024

Հաստատվել է՝ 15.12.2024

© The Author(s) 2024

տում հափշտակության հասկացության մեջ պետք է վերականգնվի շահադիտական դրդման վերաբերյալ նշումը, կամ ՀՀ քրեական օրենսգրքում ընդհանրապես պետք է հրաժարվել նշված դրդման վերաբերյալ զետեղումներից:

- Առաջարկվել է հափշտակությունն ավարտված համարել այն պահից, երբ սեփականատերը կամ գույքի օրինական տիրապետողը զրկվել է նշված գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորությունից:

- Նյութական և դատավարական իրավունքի նորմերում «բնակարան» հասկացության տարբերությունները խնդրահարույց են իրավակիրառ պրակտիկայի համար, հետևաբար անհրաժեշտ է այս հասկացությունը նախատեսել միայն քրեական օրենսգրքում՝ կատարելով համապատասխան լրամշակումներ:

- Առկա իրավակարգավորումների պարագայում ավագակության հանցատեսակի որակյալ դրսևորումների շարքում պետք է նախատեսել «անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով» ծանրացնող հանգամանքը:

- Կրկնաբանությունից խուսափելու նպատակով՝ կոդոպուտի օրենսդրական ձևակերպումը ևս պետք է փոփոխել՝ նշելով՝ «Կոդոպուտը՝ բացահայտ հափշտակությունը»:

- Գողության հանցակազմի որակյալ տեսակներից մեկում «օբյեկտից» եզրույթը խիստ թերի է, այն կարող է առաջ բերել տարամեկնաբանություններ և անհստակություններ: Այս համատեքստում նշված նորմն անհրաժեշտ է լրամշակել՝ նշելով՝ «տուժողի մոտ գտնվող այլ առարկայից» ձևակերպումը, շեշտելով, որ այդ պահոցը գտնվում է անմիջապես տուժողի մոտ, ամրացված է նրա մարմնին կամ հագուստին:

- Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասը պետք է վերաձևակերպել՝ նշելով՝ «Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է նախապես՝ մինչև հանցանքը սկսելը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածը ևս պետք է վերախմբագրել՝ նշելով՝ «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո»: Առկա հասկացությունից անհրաժեշտ է բացառել «փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով» խիստ վիճահարույց ձևակերպումը:

Բանալի բառեր – *հափշտակություն, հափշտակության հասկացություն, հափշտակության ավարտ, շահադիտական դրդում, հափշտակության եղանակներ, բնակարան, ազատ կամք, նյութական և դատավարական ձևակերպումների ներդաշնակություն*

Ներածություն

Հափշտակությունները ավանդաբար համարվում են սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հիմնական կորիզը, դրանց առանցքը, և այս դիտանկյունից քննարկվող երևույթի հասկացության և եղանակների ուսումնասիրությունը միշտ արդիական է ու կարևոր: Գիտական հոդվածի շրջանակներում չի կարող խնդիր դրվել ուսումնասիրելու հափշտակության հասկացության և դրա եղանակների հիմնարար առանձնահատկությունները կամ

քննարկելու դրանց օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի ու հատկանիշների համապարփակ ամբողջությունը, քանզի դա ակնհայտորեն դուրս է սույն ձևաչափի ծավալներից, սակայն ՀՀ նոր քրեական օրենսգրքով սահմանված հափշտակության հասկացության և դրա եղանակներին առնչվող որոշ հիմնահարցեր բավականաչափ խնդրահարույց են, իսկ դրանց լուսաբանումը, ինչպես նաև հետագա օրենսդրական փոփոխություններին միտված լրամշակման առաջարկներն անհրաժեշտ են և հրատապ: Ի մասնավորի՝ հարկ է ընդգծել, որ օրենսդրորեն սահմանված հափշտակության հասկացությունը բավականաչափ հնացած, ռեակցիոն է և չի համապատասխանում իրավունքի զարգացման արդի միտումներին ու մարտահրավերներին: Կարևոր և հրատապ փոփոխություններ են անհրաժեշտ նաև հափշտակությանը վերաբերելի օրենսդրական հասկացությունների և եզրույթների առումով: Բացի այդ, հափշտակության մի շարք եղանակների օրենսդրական նկարագրությունը ևս թերի է, ինչը կարող է հանգեցնել գործնական խնդիրների իրավակիրառ պրակտիկայում: Այս և մի շարք այլ հիմնախնդիրների քննարկմանը և դրանց լուծմանը միտված առաջարկությունների մշակմանն է նվիրված սույն գիտական հոդվածը:

I. Հափշտակության հասկացության վերաբերյալ

ՀՀ քրեական օրենսդրության պատմության մեջ առաջին անգամ նոր քրեական օրենսգրքում տրվել է հափշտակության հասկացությունը, ինչը, անշուշտ, առաջընթաց քայլ է, քանի որ թույլ է տալիս հստակորեն սահմանազատել հափշտակությունները համաբնույթ այլ հանցատեսակներից (օրինակ՝ շորթումից, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելուց և այլն)¹:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 16-րդ կետն ունի հետևյալ բովանդակությունը. «Հափշտակություն՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել»:

Նոր իրավակարգավորմամբ հափշտակության հասկացության մեջ ավանդաբար ներառված շահադիտական շարժառիթի մասին նշում չկա: Որպես նշվածի հիմնավորում, ի թիվս այլնի, կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ թեև հափշտակությունների գերակշիռ մասը կատարվում է շահադիտական դրդումներով, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինն է դառնում այլ շարժառիթներով, օրինակ՝ վրեժի: Սակայն տեսության մեջ բազմիցս նշվել է, որ հափշտակությունը կարող է կատարվել բացառապես շահադիտական

¹ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: Եվրոպայի խորհուրդ, 2022 թ., էջ 315:

դրդումներով, այլապես արարքը պետք է որակվի այլ հանցակազմերի հատկանիշներով, օրինակ՝ ինքնիրավության կամ գույքի ոչնչացման կամ վնասման²: Կարծում եմ, որ ՀՀ քրեական օրենսդրությամբ ամրագրված իրավակարգավորումը կարող էր նախընտրելի լինել, քանի որ հարցին անհրաժեշտ է մոտենալ տուժածի դիտանկյունից, ում համար «միևնույնն է», թե ինչ դրդապատճառներով է գործում հանցավորը, կարևորն այն է, որ անձը զրկվում է սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքներից: Միևնույն ժամանակ, արարքի շարժառիթները բարդ և բազմաշերտ են, ու տրամաբանական է, որ դրանք պետք է դուրս լինեն հափշտակության հասկացության շրջանակներից: Սակայն փաստն այն է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքում ավելի քան հիսուն անգամ օգտագործվում է «շահադիտական» կամ «շահադիտական դրդում» եզրույթը, իսկ 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով տրվել է դրա հասկացությունը՝ «շահադիտական դրդում» իր կամ այլ անձի համար գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղում»:

Այս պարագայում իրավաչափ հարց է ծագում, եթե օրենսդրի կամքն ուղղված է «շահադիտական շարժառիթ» կամ «շահադիտական դրդում» բազմաբովանդակ և խրթին ապացուցելի տարրը հանցագործությունների որակման գործընթացի ծավալից դուրս բերելուն, ապա ինչու է օրենսգրքում այդքան տարածված այս եզրույթը, հակառակ պարագայում անհասկանալի է հափշտակության բուն էությունը կազմող շահադիտական դրդման դուրս մղումը դրա օրենսդրական դեֆինիցիայից: Կարելի է արձանագրել, որ խախտվել է օրենսդրական միասնական տրամաբանությունը, որպիսի պայմաններում, կարծում եմ, հափշտակության հասկացության մեջ պետք է վերականգնվի շահադիտական դրդման վերաբերյալ նշումը, կամ օրենսգրքում ընդհանրապես պետք է հրաժարվել նշված դրդման վերաբերյալ գետեղումներից՝ թողնելով դա պատժի անհատականացման գործընթացի շրջանակներում:

Օրենսդրորեն նշվել է նաև հափշտակության ավարտման պահը: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորը հափշտակված գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում այս կանոնը մշակվել է հայտնի իրավաբան-գիտնական, պրոֆեսոր Գ.Ա. Կրիզերի կողմից և պաշտոնապես ամրագրվել է Գերագույն դատարանի Պլենումի «Պետական և հանրային ունեցվածքի գողության գործերի վերաբերյալ դատական պրակտիկայի մասին» 1972 թվականի հուլիսի 11-ի թիվ 4 որոշման 10-րդ կետով, որը հետևել

² Տե՛ս, օր., **Шеслер. А.В.** Хищения: понятия и признаки file:///C:/Users/Admin/Downloads/hischeniya-ponyatiya-i-priznaki%20(1).pdf (վերջին մուտք՝ 05.08.2024 թ.):

է կոնկրետ գործով կայացված դատական որոշմանը (ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի № 2 տեղեկագիր)³:

Հատկանշական է, որ դեռևս խորհրդային ժամանակաշրջանում ամրագրված նշյալ ժամանակավրեպ մոտեցումը կենսունակ է ճանաչվել նաև ՀՀ գործող օրենսդրությամբ, մինչդեռ, կարծում եմ, պետք է առաջնային դիտվեն անձի սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, որպիսի պայմաններում հափշտակությունը պետք է ավարտված համարվի ոչ թե այն պահից, երբ հանցավորը հափշտակված գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել, այլ այն պահից, երբ սեփականատերը կամ գույքի օրինական տիրապետողը զրկվել է նշված գույքը տնօրինելու կամ օգտագործելու հնարավորությունից, քանի որ այդ պահից սկսած վերջինիս պատճառով է իրական գույքային վնաս: Ընդ որում՝ նշված տեսակետը պաշտպանվում է նաև մի շարք տեսական աղբյուրներում, հատկապես ՌԴ դոկտրինալ շրջանակներում, քանի որ ՌԴ օրենսդրությամբ տրված հափշտակության հասկացության մեջ որևէ նշում չկա հանցավորի կողմից գույքը սեփական հայեցողությամբ օգտագործելու հայեցակարգի վերաբերյալ, սակայն հստակ փաստված է, որ հափշտակության արդյունքում գույքային վնաս պետք է պատճառվի սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողի⁴:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը վերաձևակերպել հետևյալ կերպով. **«Հափշտակություն՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, երբ սեփականատերը կամ գույքի օրինական տիրապետողը (հանցագործությունից տուժածը) զրկվել է նշված գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորությունից»:**

Իհարկե, հափշտակության ավարտման պահի վերաբերյալ անհրաժեշտ է առանձին և ծավալուն գիտական հետազոտություն, սակայն սույն հոդվածի շրջանակներում և քննարկվող համատեքստում նշված մոտեցումը ավելի համահունչ է իրավունքի զարգացման արդի միտումներին, բխում է վերականգնողական արդարադատության գաղափարից և կարող է էապես դյուրացնել հափշտակության տարբեր եղանակների որակման գործընթացը:

Հափշտակության հասկացության, հատկանիշների, դրա տարբեր եղանակներին բնորոշ որակյալ տեսակների քննարկման շրջանակներում հարկ է անդրադառնալ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

³ См. у **Третьяк М. И.** Определение момента окончания хищения предметов, имеющих особую ценность, и других преступлений в судебной практике. <https://cyberleninka.ru/article/n/opredelenie-momenta-okonchaniya-hischeniya-predmetov-imeyuschih-osobuyu-tsennost-i-drugih-prestupleniy-v-sudebnoy-praktike/viewer> (վերջին մուտք՝ 06.08.2024 թ.):

⁴ См. у, օրինակ, <https://cyberleninka.ru/article/n/moment-okonchaniya-hischeniya> (վերջին մուտք՝ 07.08.2024 թ.):

սահմանված բնակարանի հասկացությանը, որով նշվում է. «Բնակարան՝ շինությունը, կառույցը կամ դրանց մասը, որը նախատեսված է կամ օգտագործվում է բնակության համար, համապատասխանաբար դրանց հարող ծածկապատշգամբը, վերնասրահը, պատշգամբը, նկուղը կամ ձեղնահարկը կամ այլ շինությունը կամ կառույցը, որոնցից անարգել մուտք է առկա բնակության համար օգտագործվող կամ նախատեսված շինություն, կառույց կամ դրանց մաս, ինչպես նաև հյուրանոցային համարը, նավախցիկը, հիվանդասենյակը, գնացքի մեկուսացված ճամփորդախցիկը, գետային կամ ծովային նավը կամ այլ տրանսպորտային միջոցը, եթե դրանք մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում են բնակության համար»:

Պետք է փաստել, որ նշված հասկացությունը տարբերվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում զետեղված բնակարանի հասկացությունից, որի 6-րդ հոդվածի 1-ին մասի 56-րդ կետը սահմանում է. «Բնակարան՝ շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության, հանգստի, գույք պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց մասնագիտական կամ այլ պահանջմունքները բավարարելու համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, ավտոտնակը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, դրանց այլ բաղկացուցիչ մասերը, համապատասխանաբար դրանց անմիջական հարող մասնավոր տարածքները, մասնավոր և ծառայողական տրանսպորտային միջոցը, ինչպես նաև աշխատասենյակը»:

Հատկապես խնդրահարույց են քրեական օրենսդրությամբ սահմանված «բնակարան» հասկացության մեջ ներառված այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են՝ **«անարգել մուտք»** կամ **«եթե դրանք մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում են բնակության համար»**: Նշված բնորոշումները կարող են գործնականում խնդիրներ հարուցել: Մուտքի անարգել լինելու հանգամանքը տարամեկնաբանությունների տեղիք կարող է տալ այն դեպքերում, երբ, օրինակ, տեղադրված է դուռ, սակայն այն կողպված չէ, և հանցավորի համար բավական է ուղղակի սեղմել բռնակը, և այն կբացվի: Արդյո՞ք նշված գործողությունը կարող է դիտվել ֆիզիկական ուժի գործադրմամբ արգելքի հաղթահարում: Եթե այո, ստացվում է մի իրավիճակ, որ եթե դուռն ուղղակի փակ է (անգամ առանց կողպելու), ապա նշված տարածքը չի ընդգրկվում «բնակարան» հասկացության ծավալի ներքո, իսկ եթե նույն դուռը բաց է, ընդգրկվում է:

Բավականաչափ վիճահարույց է նաև «եթե դրանք մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում են բնակության համար» ձևակերպումը, որը թվում է հստակ և որոշակի, սակայն ի՞նչ պետք է հասկանալ «օգտագործվում են բնակության համար» բնորոշման ներքո, ո՞ր գործողությունների ամբողջությունն է, որ կարող է վկայել այդ մասին, ընդ որում՝ հանցավորը պետք է գիտակցի այդ

գործողությունների կատարումը, քանզի դա վերածվում է հանցակազմի պարտադիր հատկանիշի, և եթե դրանք չեն ընկալվում հանցավորի կողմից, չեն կարող մեղսագրվել վերջինիս: Օրինակ՝ հանցավորը տեսնում է, որ որևէ անձ ավտոմեքենան վարելու ընթացքում ինչ-որ բան է ուտում կամ խմում, արդյո՞ք սա բավարար է հետագայում այդ մեքենայից կատարված գողությունը քրեական օրենսգրքի հոդված 254-ի 3-րդ մասի 2-րդ կետով որակելու համար:

Կարծում եմ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերում նշված հասկացության տարբերությունները կարող են լրջագույն խնդիրներ առաջացնել իրավակիրառ գործունեության ընթացքում, և անհրաժեշտ է այս հասկացությունը սահմանել միասնական կամ նախատեսել օրենսգրքերից միայն մեկում՝ քրեական օրենսգրքում, սակայն զետեղելով այստեղ ներկայիս քրեական դատավարության օրենսգրքում նշված բնորոշումը, իսկ քրեական դատավարության օրենսդրության պարագայում հղում կկատարվի քրեական օրենսգրքի համապատասխան նորմին:

II. Հափշտակության եղանակների վերաբերյալ

Սույն հոդվածի հիմքում ընկած տրամաբանությունը չի ենթադրում հափշտակության առանձին եղանակների խորքային վերլուծություն, սակայն դրանցում առկա որոշակի խնդրահարույց տարրեր անհրաժեշտ է քննարկել: Քրեական օրենսգրքի հոդված 252-ը պատասխանատվություն է սահմանում ավազակության համար: Հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Ավազակությունը՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հափշտակությունը»: Նոր ձևակերպմամբ ավազակությունը նախատեսվել է նյութական հանցակազմով, ինչը միանշանակ ողջունելի է և լուծում է այս հանցատեսակի որակման բազմաթիվ իրավակիրառական խնդիրներ: Հարկ է նկատել, որ ավազակության հանցատեսակի որակյալ դրսևորումների շարքում չի նախատեսվել «անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով» ծանրացնող հանգամանքը, ինչը որոշակի առումով տարակուսանք է հարուցում, քանի որ նշված ծանրացնող հանգամանքը նախատեսվել է, օրինակ, շորթման հանցակազմում (258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ): Որպես հայեցակարգային մոտեցում ՀՀ քրեական նոր օրենսգրքի հիմքում դրվել էր առանձին հանցակազմ պարունակող արարքները որպես ծանրացնող հանգամանք նախատեսելու անթույլատրելիության սկզբունքը, ուր, սակայն, չի հաջողվել կենսագործել, և բազմաթիվ հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նախատեսվել են առանձին հանցակազմ պարունակող արարքներ:

Այս դիտանկյունից առկա է քրեական օրենսգրքի թե՛ ընդհանուր և թե՛ հատուկ մասերի լրամշակման անհրաժեշտություն այն հաշվով, որ բացառվեն նման ծանրացնող հանգամանքները, և դրանց առկայության պարագայում ա-

որարքը որակվի հանցագործությունների համակցությամբ: Իսկ մինչև նշված փոփոխությունների իրականացումը և կենսագործումը, կարծում եմ, որ ավագակության հանցակազմում ևս պետք է նախատեսվի վերը քննարկվող ծանրացնող հանգամանքը, այլապես օրենսգրքի միասնական տրամաբանությունը խաթարվում է:

Քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Գողոպուտը՝ բացահայտ հափշտակությունը, երբ հանցավորը գիտակցում է, որ արարքը կատարում է բացահայտ»: **Վերլուծելով նշված ձևակերպումը՝ հարկ է արձանագրել, որ այն խիստ թերի է, ոչ իրավաչափ և ակնհայտորեն պարունակում է կրկնաբանություն:** Պետք է նշել, որ հանցագործությունների որակումը անձի կողմից կատարված արարքի և քրեական օրենքով նախատեսված հանցակազմի հատկանիշների միջև ճշգրիտ համապատասխանության հաստատումն ու իրավական ամրագրումն են⁵: Նշվածից ուղղակիորեն բխում է, որ հանցակազմի հատկանիշները պետք է գիտակցվեն հանցավորի կողմից և վերաբերելի չեն հասարակության այլ անդամներին, այսինքն՝ կրկնակի նշումը՝ «...հանցավորը գիտակցում է, որ արարքը կատարում է բացահայտ», որևէ առարկայական նշանակություն չունի, քանի որ բացահայտության հատկանիշը վերաբերելի է հենց հանցավորի սուբյեկտիվ ընկալմանը և չի կարող պրոյեկտվել այլոց նկատմամբ: Այն հիմնավորումը, որ «...այլ անձինք կարող են կարծել, որ իրականում հափշտակություն տեղի չի ունենում, անձը, օրինակ, վերցրել է իր գույքը կամ խանութից կատարել է առևտուր, սակայն կարևորն այն է, թե ինչպես է իրավիճակն ընկալվում հանցանք կատարած անձի կողմից: Եթե վերջինս գիտակցում է կատարված հափշտակության բացահայտ լինելը, ապա այն պետք է որակվի որպես կողոպուտ, անկախ նրանից՝ իրականում կատարվածը գաղտնի է եղել, թե բացահայտ»⁶, չի կարող համարվել անառարկելի, քանի որ, ինչպես նշվեց, դա ինքնին ենթադրելի է, և օրենքի համատեքստում կրկին նշելու անհրաժեշտությունը բացակայում է: Վերոշարադրյալից ելնելով՝ առաջարկում եմ քրեական օրենսգրքի հոդված 253-ի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ բովանդակությամբ. **«Գողոպուտը՝ բացահայտ հափշտակությունը»:** Այս ձևակերպումը համահունչ կլինի նաև գողության հանցակազմի օրենսդրական նկարագրությանը, քանի որ քրեական օրենսգրքի հոդված 254-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Գողությունը՝ գաղտնի հափշտակությունը»: Այլապես այս դեպքում էլ պետք է նշվեր. «Գողությունը՝ գաղտնի հափշտակությունը, երբ հանցավորը գիտակցել է, որ գործում է գաղտնի»: Նշվածն ապացուցում է, որ օրենսգրքի հավելյալ ծանրաբեռնումը կրկնաբանություններով հղի է ամենաան-

⁵ Տե՛ս **Каранович М. К.** Квалификация преступлений: понятие, особенности и проблемы. Законность и правопорядок в современном обществе, М., 2014, էջ 161:

⁶ ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, էջ 323:

ցանկալի հետևանքներով ոչ միայն տեսական, այլև գործնական, իրավակիրանական մակարդակներում:

Քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես գողության ծանրացնող հանգամանք նշվել է. «...տուժողի մարմնի վրայից, հագուստից, պայուսակից, այլ պահոցից կամ օբյեկտից»: Այս ձևակերպումը «**օբյեկտից**» եզրույթի մասով, խիստ թերի է, այն կարող է առաջ բերել բազմաթիվ տարամեկնաբանություններ և անհստակություններ: *Այս համատեքստում, կարծում եմ, նշված նորմն անհրաժեշտ է լրամշակել, նշելով՝ «տուժողի մոտ գտնվող այլ առարկայից» ձևակերպումը: Նույնը վերաբերելի է «այլ պահոց» հասկացությանը, քանզի պետք է շեշտել, որ այդ պահոցը գտնվում է անմիջապես տուժողի մոտ, ամրացված է նրա մարմնին կամ հագուստին, այլապես նշված ձևակերպումները կարող են էական խնդիրներ առաջացնել հանցագործությունների որակման գործընթացում:*

Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը...»:

Ձերը մնալով խարդախության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումների քննարկումից (Լիա Ավետիսյանի⁷, Աշոտ Սուքիասյանի⁸ վերաբերյալ գործերով և այլն)՝ հարկ է նկատել, որ օրենսդրական նոր բնորոշումը չի լուծում խարդախության և վստահված գույքը հափշտակելու հանցակազմերի, ինչպես նաև խարդախության հանցատեսակի և իրենց բնույթով քաղաքացիաիրավական հարաբերությունների հստակ տարանջատման խնդիրները, որպիսի պարագայում նշված բնորոշումը չի կարող հաջողված համարվել: Այստեղ հույժ կարևոր է «**նախնական դիտավորության**» կամ «**նախապես հափշտակություն կատարելու նպատակի**» վերաբերյալ նշումները, ինչն էապես կոյուրինացնի քննարկվող հանցագործության որակման գործընթացը: *Առաջարկում եմ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասը վերաձևակերպել. «Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է նախապես՝ մինչև հանցանքը սկսելը ...»:*

Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի առաջին մասը նախատեսում է. «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո...»: *Այս ձևակերպումը խսիտ թերի է և*

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Լիա Ավետիսյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշումը:

⁸ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Աշոտ Սուքիասյանի գործով 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ ԵԿԴ/0054/01/15 որոշումը:

կարող է հանգեցնել բազմաթիվ իրավակիրառական խնդիրների: Դրական հանգամանքները, որոնք կարելի է փաստել նշված ձևակերպման համատեքստում, այն են, որ առանձին չի նշվում յուրացնելու կամ վատնելու մասին, ինչպես նաև ներառում է հափշտակության դիտավորության ծագման պահը, ինչի մասին վերն արդեն խոսվել է:

Միննույն ժամանակ հարկ է նկատել, որ հոդվածում կիրառված որոշ ձևակերպումներ բավականաչափ խնդրահարույց են: Կիրառվել են ավելի շատ գեղարվեստական գրականությունից, հոգեբանության կամ փիլիսոփայության գիտություններից վերցրած եզրույթներ, քան քրեաիրավական որոշակի հասկացություններ: Տարակուսանք է առաջացնում «**փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով**» ձևակերպումը, որը հեռու է որոշակի լինելուց: Կամքի ազատության վերաբերյալ բազմաթիվ գիտական աշխատություններ կան⁹, սակայն այս եզրույթները որևէ քրեաիրավական մեկնաբանություն ունենալ չեն կարող: Հարկ է նկատել, որ ազատ կամքով որևէ արարք կատարելը երբևէ չի քննարկվել նաև հանցագործության սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշների համատեքստում, իսկ հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքը նկարագրելիս, երբ տեսական մակարդակով նշվում է «...գիտակցված և կամային վարքագծի ակտիվ կամ պասիվ դրսևորում...»¹⁰, ապա այս պարագայում ևս խոսքն ազատ կամքի մասին չէ, որը, ինչպես նշվեց, այլ գիտական ոլորտներին առնչվող հասկացություն է:

Այս առումով, պետք է փաստել, որ քննարկվող հոդվածն ունի խորքային լրամշակման կարիք, քանզի այս ձևակերպման պարագայում այն կարող է առաջացնել հասկացության շփոթ իրավակիրառ գործունեության ընթացքում՝ հանգեցնելով շահարկումների, տարամեկնաբանությունների և անհաստատության: Կարծում եմ՝ նշված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության հիմնարար սկզբունքին, և այն պետք է վերաձևակերպել: Առաջարկում եմ հետևյալ տարբերակը. «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո...»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի վերաբերյալ գործով արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ¹¹, որոնք, կարծում եմ, այժմ ժամանակավրեպ են:

Նշված նախադեպային որոշումներն անհրաժեշտ է արմատապես վերանայել թե՛ հափշտակության նոր հասկացության և թե՛ այն նկատառումների

⁹ Տե՛ս, օրինակ, https://philosophy.ru/ru/free_will/, <https://arrenk.livejournal.com/2540.html>. և այլն:

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) /Ս. Առաքելյան, Ա. Գաբուլյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 132:

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սևակ Լսկավյանի գործով որոշման 12-12.3-րդ կետերը, Վճռաբեկ դատարանի՝ Արսեն Ավետիսյանի գործով 2022 թվականի ապրիլի 8-ի թիվ ԵԿԴ/0315/01/17 որոշումը:

համատեքստում, որ քաղաքացիաիրավական իրավահարաբերությունների առկայությունը առերևույթ «բացառում» է նշված հարաբերությունների մասնակցի կողմից հետազայում նշված գույքը հափշտակելու անգամ տեսական հնարավորությունը: Հարկ է նշել, որ քննարկվող նախադեպային որոշումներում բավականաչափ անհստակ է այն սահմանագիծը, թե երբ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարող են վերաճել քրեաիրավականի: Այս համատեքստում նոր նախադեպային որոշումներով անհրաժեշտ կլինի նշված սահմանային վիճակներն առավել հստակեցնելու և ընդգծելու:

Եզրակացություն

Մույն հետազոտության արդյունքում կատարված հիմնական եզրակացությունները հանգում են հետևյալին:

1. Օրենսդրական միասնական տրամաբանության ապահովման համատեքստում, կարծում եմ, հափշտակության հասկացության մեջ պետք է վերականգնվի շահադիտական դրդման վերաբերյալ նշումը, կամ ՀՀ քրեական օրենսգրքում ընդհանրապես պետք է հրաժարվել նշված դրդման վերաբերյալ զետեղումներից՝ թողնելով դա պատժի անհատականացման գործընթացի շրջանակներում:

2. Առաջարկում եմ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հափշտակություն՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, երբ սեփականատերը կամ գույքի օրինական տիրապետողը (հանցագործությունից տուժածը) գրկվել է նշված գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորությունից»:

3. Նյութական և դատավարական իրավունքի նորմերում «բնակարան» հասկացության տարբերությունները կարող են խաթարել իրավակիրառ գործունեության ընթացքը, և անհրաժեշտ է այս հասկացությունը սահմանել միասնական կամ նախատեսել օրենսգրքերից միայն մեկում՝ քրեական օրենսգրքում, սակայն զետեղելով այստեղ ներկայիս քրեական դատավարության օրենսգրքում նշված բնորոշումը, իսկ քրեական դատավարության օրենսդրության պարագայում հղում կկատարվի քրեական օրենսգրքի համապատասխան նորմին:

4. Ավագակության հանցատեսակի որակյալ դրսևորումների շարքում չի նախատեսվել «անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելով» ծանրացնող հանգամանքը, ինչը որոշակի առումով տարակուսանք է հարուցում, քանի որ նշված ծանրացնող հանգամանքը նախատեսվել է օրինակ, շորթման հանցակազմում (258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ): Որպես հայեցակարգային մոտեցում ՀՀ քրեական նոր օրենսգրքի հիմքում դրվել էր առանձին հանցակազմ պարունակող արարքները որպես ծանրաց-

նող հանգամանք նախատեսելու անթույլատրելիության սկզբունքը, որը, սակայն, չի հաջողվել կենսագործել, և բազմաթիվ հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նախատեսվել են առանձին հանցակազմ պարունակող արարքներ: Այս դիտանկյունից առկա է քրեական օրենսգրքի թե՛ ընդհանուր և թե՛ հատուկ մասերի լրամշակման անհրաժեշտություն այն հաշվով, որ բացառվեն նման ծանրացնող հանգամանքները և դրանց առկայության պարագայում արարքը որակվի հանցագործությունների համակցությամբ: Իսկ մինչև նշված փոփոխությունների իրականացումը և կենսագործումը, կարծում եմ, որ ավագակության հանցակազմում ևս պետք է նախատեսվի վերը քննարկվող ծանրացնող հանգամանքը, այլապես օրենսգրքի միասնական տրամաբանությունը խաթարվում է:

5. Առաջարկում եմ քրեական օրենսգրքի հոդված 253-ի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Կողոպուտը՝ բացահայտ հափշտակությունը»: Այս ձևակերպումը համահունչ կլինի նաև գողության հանցակազմի օրենսդրական նկարագրությանը, քանի որ քրեական օրենսգրքի հոդված 254-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Գողությունը՝ գաղտնի հափշտակությունը»:

6. Քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես գողության ծանրացնող հանգամանք նշվել է՝ «...տուժողի մարմնի վրայից, հագուստից, պայուսակից, այլ պահոցից կամ օբյեկտից»: Այս ձևակերպումը՝ «օբյեկտից» եզրույթի մասով, խիստ թերի է, այն կարող է առաջ բերել բազմաթիվ տարամեկնաբանություններ և անհստակություններ: Այս համատեքստում, կարծում եմ, նշված նորմն անհրաժեշտ է լրամշակել՝ նշելով «տուժողի մոտ գտնվող այլ առարկայից» ձևակերպումը: Նույնը վերաբերելի է «այլ պահոց» հասկացությանը, քանզի պետք է շեշտել, որ այդ պահոցը գտնվում է անմիջապես տուժողի մոտ, ամրացված է նրա մարմնին կամ հագուստին, այլապես՝ նշված ձևակերպումները կարող են ունենալ էական բացասական ազդեցություն հանցագործությունների որակման գործընթացի համատեքստում:

7. Առաջարկում եմ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասը վերաձևակերպել. «Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է նախապես՝ մինչև հանցանքը սկսելը»:

8. ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածն ունի խորքային լրամշակման կարիք, քանզի գործող ձևակերպման պարագայում այն կարող է արմատական խնդիրներ հարուցել պրակտիկայում՝ հանգեցնելով շահարկումների, տարամեկնաբանությունների և անհստակության: Կարծում եմ՝ նշված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության հիմնարար սկզբունքին, հետևաբար այն պետք է վերաձևակերպել: Առաջարկում եմ հետևյալ խմբագրությունը. «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու

դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո»:

ТИГРАН СИМОНЯН – *Некоторые вопросы, связанные с понятием и способами хищения.* – Хищение составляет основное ядро преступлений против собственности, их центральный элемент. С этой точки зрения, изучение понятия и способов совершения данного преступления всегда актуально и важно. В рамках статьи исследованы некоторые проблемные вопросы, связанные с понятием хищения и его способами, предусмотренными новым (действующим) Уголовным кодексом Республики Армения. Эти вопросы являются достаточно проблематичными, и их разъяснение, а также предложения по дальнейшему законодательному совершенствованию актуально и необходимо.

Цель статьи – исследование существующих проблем законодательного оформления понятия хищения, момента его окончания, а также способов совершения хищения, и в результате представления предложения по совершенствованию законодательных формулировок, требующих немедленного решения.

В статье по отдельным параграфам рассматривается понятие хищения, некоторые особенности его дефиниций, а также проблемы законодательных формулировок и квалификации способов хищения. Объект исследования изучен с использованием как общенаучных, так и специальных методов, таких как догматический, сравнительно-правовой и логический анализ.

По результатам проведенного исследования представлены законодательные предложения по формулировке понятия хищения и способов его совершения, направленные на совершенствование уголовно-правовых норм, в частности:

- в контексте обеспечения единой законодательной логики, в понятие хищения следует вернуть указание на корыстные мотивы или полностью отказаться от упоминания данных мотивов в Уголовном кодексе Республики Армения;
- предлагается считать хищение оконченным с момента, когда собственник или законный владелец имущества утратил реальную возможность распоряжаться или пользоваться данным имуществом;
- различия в понимании понятия «жилище» в нормах материального и процессуального права создают проблемы для правоприменительной практики, поэтому необходимо предусмотреть это понятие только в Уголовном кодексе, внося соответствующие поправки;
- в существующих правовых регулированиях следует предусмотреть среди квалифицированных проявлений разбоя отягчающее обстоятельство «по неосторожности повлекшее смерть человека или причинение тяжкого вреда здоровью»;
- для избежания повторов следует изменить законодательную формулировку грабежа, указав: «Грабеж – открытое хищение» ;
- в одном из квалифицированных видов состава кражи термин «из объекта» является крайне проблематичным, что может вызвать множество разночтений и неясностей. В этом контексте указанную норму следует уточнить, указав: «из другого предмета, находящегося у потерпевшего», подчеркнув, что предмет находится непосредственно при потерпевшем, прикреплено к его телу или одежде;
- часть 1 статьи 255 Уголовного кодекса следует переформулировать, указав: «Мошенничество – хищение имущества путем обмана или злоупотребления доверием, если умысел на хищение данного имущества возник заранее, до начала преступления»;
- статью 256 Уголовного кодекса также следует отредактировать, указав: «Хищение имущества, доверенного преступнику, то есть переданного в его распоряжение, владение или использование, если умысел на хищение данного имущества возник после его получения на законных основаниях». Из существующего понятия следует исключить крайне спорную формулировку «по фактической или юридически свободной волею».

Ключевые слова: хищение, понятие хищения, окончание хищения, корыстный мотив, способы хищения, жилище, свободная воля, гармонизация материальных и процессуальных формулировок

TIGRAN SIMONYAN – *Some Issues Related to the Concept and Methods of Theft.* – Theft is at the core of property crimes; it is their central element. From this perspective, studying the concept and methods of committing this crime is always relevant and important. This article examines some problematic issues related to the concept of theft and its methods as defined by the new (current) Criminal Code of the Republic of Armenia. These issues are quite problematic, and clarifying them, as well as proposing further legislative improvements, is both relevant and necessary.

The purpose of the article is to investigate the existing problems with the legislative definition of theft, its completion, and the methods of committing theft, and to provide proposals for improving legislative formulations that require immediate resolution.

The article discusses, in separate paragraphs, the concept of theft, some peculiarities of its definitions, as well as problems with legislative formulations and the qualification of methods of theft. The object of the study was examined using both general scientific and specialized methods, such as dogmatic, comparative-legal, and logical analysis.

As a result of the research, legislative proposals are presented for the formulation of the concept of theft and methods of committing it, aimed at improving criminal law norms, specifically:

- In the context of ensuring a unified legislative logic, the concept of theft should either be revised to include references to mercenary motives or completely abandon mentions of these motives in the Criminal Code of the Republic of Armenia.
- It is proposed that theft be considered complete when the owner or legal possessor of the property loses the actual ability to dispose of or use the property.
- Differences in the understanding of the concept of "dwelling" in substantive and procedural law create issues for law enforcement practice, so this concept should be defined solely in the Criminal Code, with the necessary amendments.
- Existing legal regulations should include among the qualified acts of robbery (brigandage) an aggravating circumstance of "negligence resulting in the death of a person or causing serious harm to health."
- To avoid repetitions, the legislative formulation of robbery should be changed to: "Robbery – open theft."
- In one of the qualified types of theft, the term "from the object" is highly problematic, potentially leading to many interpretations and ambiguities. In this context, the norm should be clarified to state: "from another item held by the victim," emphasizing that the item is directly with the victim, attached to their body or clothing.
- Part 1 of Article 255 of the Criminal Code should be rephrased to state: "Fraud – Theft of property through deceit or abuse of trust, if the intent to steal the property arose beforehand, before the crime began."
- Article 256 of the Criminal Code should also be edited to read: "Theft of property entrusted to the perpetrator, that is, transferred to their disposal, possession, or use, if the intent to steal the property arose after it was received lawfully." The extremely controversial formulation "by actual or legally free will" should be excluded from the existing concept.

Key words: theft, concept of theft, completion of theft, mercenary motive, methods of theft, dwelling, free will, harmonization of substantive and procedural formulations

ԻՆՉՈ՞Ւ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ 1920 Թ. ԶԻ ՎԻՃԱՐԿԵԼ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԻՏՂՈՍԸ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ԶԻ ՃԱՆԱԶԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում հիմնավորվում է այն դրույթը, որ XX դարում Անդրկովկասում Ադրբեջան անունով հայտնված հանրապետություններից ոչ մեկը չի կայացել ինքնորոշման ակտով և չի ունեցել իրավաբանորեն հաստատված սահմաններ: Նրանցից առաջինը Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ), ստեղծվել է Անդրկովկաս ներխուժած օտոմանյան զորքերի կողմից: Ազգերի լիզան մերժել է Լիզա ընդունվելու ԱԴՀ հայցը՝ անհիմն համարելով նրա տարածքային հավակնությունները թե՛ պատմականորեն, թե՛ ժողովրդագրորեն, նշելով նաև այդ տարածքներն առանձնացելու (ուրեմն և՛ սահմանները նշելու) անհնարինությունը: Պարզվել է, որ ԱԴՀ տարածքային հավակնությունների մասին անկախության հռչակագրի հիմքում դրված «կազմված Արևելյան ու Հարավային Անդրկովկասից» բանաձևը որոշակիացման և դիտարկման ենթակա չէ: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը (ՀՀ), Ազգերի լիզան չի վիճարկել Ռուսահայաստանի էթնիկական հայկական տարածքների վրա (ներառյալ Արցախը) ՀՀ տիրոջ, նշելով նաև ՀՀ ապագա տարածքների մասին կապելով այն Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի ուժի մեջ մտնելու հետ: ԱԴՀ-ն պատմությունը լքել է առանց ճանաչված սահմանների այն բանից հետո, երբ բոլշևիկյան 11-րդ Կարմիր բանակը 1920 թ. ապրիլի 28-ին մտել է Բաքու, վերացրել ԱԴՀ-ն և հիմնել Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (Ադր. ԽՍՀ): Անդրկովկասյան Խորհրդային Հանրապետությունների սահմանների հարցը հայտնվել է քեմալական Թուրքիայի հետ գործարքների մեջ մտած Խորհրդային Ռուսաստանի կառավարության ձեռքում: 1920 թ. արդեն Խորհրդային Հայաստանի (ՀԽՍՀ) մաս

* **Ալեքսանդր Մանասյան** – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

Александр Манасян – доктор философских наук, профессор кафедры истории, теории философии и логики ЕГУ

Alexandr Manasyan – Doctor of Philosophy, Professor at YSU Chair of History, Theory, and Logic of Philosophy

Էլ. փոստ՝ Manasyan-a22@mail.ru. ORCID: <https://orcid.org/0009-0007-5971-6184>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 11.06.2024

Գրախոսվել է՝ 10.10.2024

Հաստատվել է՝ 15.12.2024

© The Author(s) 2024

ճանաչված Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը (Արցախը) իսկվեցին ՀԽՍՀ-ից և մտցվեցին Ադր. ԽՍՀ սահմանները: Նախիջևանը՝ Կարսի (1921 թ.) պայմանագրով հովանավորության հանձնված տարածքի կարգավիճակով, իսկ Արցախը՝ Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության (ՌԿ(Բ)Կ) 1921 թ. հուլիսի 5-ի «որոշմամբ»՝ լայն մարզային ինքնավարության իրավունքով: Այդ «որոշումը» հայտնի է ոչ միայն նրանով, որ կապված է երրորդ երկրի կուսակցական մարմնի հետ, որը չունեւ տարածքային հարցեր լուծելու իրավասություններ, այլև նրանով, որ այն փաստորեն չի ընդունվել: Ստալինը կարդացել է որոշման տեքստը և, այն չդնելով քննարկման ու քվեարկության, փակել է Կոմբյուրոյի նիստը: ԽՍՀՄ տրոհման ընթացքում Բաքվում հայտարարել են Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու մասին՝ ճանաչելով այն ապօրինի կազմավորում, որ հայտնվել է Խորհրդային Ռուսաստանի կողմից Ադրբեջանի գավթման արդյունքում: Բաքվում հասկացել են Ադր. ԽՍՀ՝ իրենց կողմից ապօրինի ճանաչված կազմավորման սահմանների ճանաչման անհեթեթությունը: Դրա համար որոշել են այդ հարցում հավատարիմ մնալ ԱԴՀ ժառանգությանը: Խանգարում էր նրա տարածքային հավակնությունների՝ Ազգերի լիգայի կողմից մերժված՝ «կազմված Արևելյան ու Հարավային Անդրկովկասից» բանաձևը, որի անիմաստ լինելը ակնհայտ էր: Դրա համար «Ադրբեջանական Հանրապետության անկախության մասին» Սահմանադրական ակտում (18 հոկտեմբերի 1991 թ.) Բաքուն այն փոխարինեց ուրիշ, բայց իրավաբանորեն ավելի անիմաստ դրույթով. «Պատմականորեն ձևավորված սահմաններում Ադրբեջանական Հանրապետության տարածքը միասնական է, անբաժանելի, անօտարելի» («Бакинскый рабочий, 7 նոյեմբերի 1991 թ.»), որ սկզբունքորեն ենթակա չէ ո՛չ սահմանգատման, ո՛չ սահմանագծման: Այսպիսի «տարածքներով» և «սահմաններով» Ադրբեջանական Հանրապետությունը (Ադր. Հ) 1991 թ. դեկտեմբերի 21-ին ներկայացավ Ալմա-Աթա, որպեսզի մտնի ԱՊՀ և իր համաձայնությունը տա Եվրոպական համայնքի այն պահանջներին, որ վերջինիս կողմից առաջադրվել էին 1991 թ. դեկտեմբերի 16-ին («Տասներկուսի հայտարարության» մեջ)՝ որպես Արևելյան Եվրոպայի և Եսխորհրդային տարածքի նորանկախ պետությունների ճանաչման պայմաններ: Եվրոպան աչք փակեց այն բանի առջև, որ Ադր. Հ-ն չի բավարարում իր կողմից առաջադրված պահանջներից և ոչ մեկին, և ըստ երևույթին խորհուրդ տվեց Բաքվին անցկացնել անկախության մասին հանրաքվե՝ զոնե այդպիսի ակտով որոշակիացնելու համար իր սահմանները: *Ադրբեջան* անվամբ պետությունների պատմության մեջ ինքնորոշման մասին առաջին այդ հանրաքվեն տեղի ունեցավ 1991 թ. դեկտեմբերի 29-ին: Մակայն հանրաքվեի դրված՝ «Դուք պաշտպանո՞ւմ եք Ադրբեջանական Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Պետական անկախության մասին» ակտը» հարցը ուժի մեջ թողեց պատմականորեն ձևավորված սահմանների մասին իրավական իմաստից զուրկ դրույթը: Ադր. Հ սահմանները մնացին անորոշ: Գիտակցելով իրավիճակի անհեթեթությունը՝ Բաքուն շրջանառությունից հանեց սահմանադրական ակտը՝ տեղադրելով այն նախագահական կայքում, տեքստից ջնջելով «պատմականորեն ձևավորված սահմաններում» բառերը:

Բանալի բառեր – *կովկասյան թաթարներ, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն, Ազգերի լիգա, Ադրբեջանական Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, «Տասներկուսի» հայտարարություն*

Վերլուծությանը կանխատրվող նախաբան կամ Հայաստանի պատմական տիտղոսը Արևելահայաստանում՝ Արցախում հանդերձ

Հոդվածն անդրադարձ է Ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող այն հարցին, թե Անդրկովկասը Պարսկաստանից Ռուսական կայսրությանը անցնելուց հետո ինչպիսի զարգացումների արդյունքում է 1918 թ. հայտնվել *Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն* (ԱԴՀ) անվամբ կազմավորումը: Դիտարկվում են այն փաստարկները, որոնցով Ազգերի լիգան մերժել է իրեն անդամակցելու ԱԴՀ խնդրագիրը: Դրանք հաստատում են, որ նա այդ կազմավորման մեջ չի տեսել պետություն: Հարցը հրատապ է այն առումով, որ մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը (Ադր. Հ) 1991 թ. իրեն հռչակել է Լիգայի անդամ-պետություններից ոչ մեկի կողմից չճանաչված, Արցախում իշխանություն չունեցած այդ «պետության» իրավահաջորդը:

Նախ համառոտ ակնարկ Մեծ Հայքի տարածքների և հյուսիսարևելյան սահմանների մասին ըստ պատմական սկզբնաղբյուրների: Հունա-հռոմեական բազմաթիվ հեղինակներ այդ սահմանների մասին նույն բանն են պնդում. այն անցել է Քուռ գետով¹: Դա ոչ միայն հաստատում է այդ տեղեկության հավաստիությունը, այլև այն, որ հին ժողովուրդներն ու պետությունները Քուռարաքսյան միջագետքի արևելքի վրա ճանաչել են Հայաստանի տիտղոսը: Նույն է հաստատում համաշխարհային պատմագրությունը 428 թ. Մեծ Հայքի անկումին հաջորդած շրջանում: Բնական է, որ միասնական պետության անկումից հետո օտար (ու նաև հայ) պատմագիրները պետք է անդրադառնային հայկական անկախ պետականությունը վերականգնելու փորձերին: Հատուկ է եղել Արցախի տեղը այդ պայքարում:

Նշանակալից հանգրվանը, որին Արցախը հասել է արդեն իսկ 5-րդ դարի վերջերին, Արցախի և Ուտիքի նահանգներում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ հայկական թագավորության հռչակումն էր: Բացառիկ իրադարձությունը, որ կատարվեց նրա իշխանության տարիներին, Աղվեն ամառանոցում 488 թ. Արցախի հոգևոր ու աշխարհիկ տերերի մասնակցությամբ կայացած յուրօրինակ սահմանադիր ժողովում «Սահմանադրություն կանոնականի» ընդունումն էր²: Իրավաբանաբանական նման բարձր մշակույթն է օգնել Արցախի

¹ Քսենոփոն Աթենացու (մ.թ.ա. մոտ 430 - 356 թթ.) «Անաբասիս» և «Կյուրոպեդիա», Դիոդորոս Սիկիլիացու (մ.թ. 90-23 թթ.) «Պատմական գրադարան», Ստրաբոնի (մ.թ.ա. մոտ 63 թ. - մ. թ. 20 թ.) «Պատմական հիշատակարաններ», Պլուտարքոսի (մ.թ. 45-127 թթ.)՝ «Զուգահեռ կենսագրություններ», Գայոս Պլինիոս (ավագ) Սեկունդոսի (մ.թ. 23 թ. - 79 թթ.) «Բնական պատմություն» աշխատություններում Հայաստանի ու հայ ժողովրդի մասին հաղորդում են տեղեկություններ, որ վաղուց դարձել են հանրագիտարանային: Հելլենիզմի դարաշրջանի պատմիչներից առանձնանում են Ապպիանոս Ալեքսանդրացին (մ.թ. II դարի սկիզբ - II դարի 70-ական թթ.) իր «Հռոմեական պատմություն» երկով, Գայոս Կոռնելիոս Տակիտոսը (մոտավորապես 55-125 թթ.) իր «Տարեգրություններ» աշխատությամբ, Դիոն Կասսիոս Կոկկեյանոսը (շուրջ 155-235 թթ.) իր «Հռոմեական պատմություն» մեծածավալ աշխատությամբ:

² Հանրային կյանքում իրավահարաբերությունները կանոնակարգող այդ հիմնարար փաստա-

ժառանգական իշխանական տներին անկախ պետության բացակայության պայմաններում պահպանել երկրամասը վաչկատուն հորդաների՝ մեկը մյուսին հաջորդող արշավանքներից, մաս կազմել Բագրատունյաց թագավորությանը, որին Արաբական խալիֆայությունը ճանաչել է *Արմենիա* անունով³, մոնղոլների հետ հարաբերությունները կարգավորելու հարցում օգնել Կիլիկիայի հայկական թագավորությանը:

X-XI դարերում երկրամասի քաղաքական կենտրոնը տեղափոխվեց Խաչեն: Արցախ/Խաչենի իշխանապետությունները տարբեր կարգավիճակներով պահպանվեցին նաև մոնղոլական արշավանքների և դրանց հաջորդած շրջանում, երբ շրջանառվեց երկրամասի մեկ այլ՝ *Ղարաբաղ* անվանումը⁴: Ամենանշանավորը հինգ մելիքություններ միավորող, տարածաշրջանում լուրջ դերակատարություն ունեցած և որոշակի անկախությամբ օժտված *Խամսայի մելիքություններ (խամսա՝ արաբերեն հինգ)* կազմավորումն էր:

Հաջորդիվ հայկական մելիքությունները հայտնվեցին դեպի հարավ առաջացող Ռուսիայի շահերի դաշտում, որը Արցախի մեջ տեսավ Անդրկովկասի հարավում իր հենարանին: Հասկանալի է դառնում, թե ինչու ռուսական արքունիքը պիտի խոստանար Ղարաբաղի մելիքությունների հիմքի վրա վերստեղծել «Ռուսաստանից բացի՝ բոլորից անկախ» հայկական քրիստոնեական պետությունը⁵: Դա ոգևորեց արցախցիներին, և նրանք անհնարինն արեցին ի նպաստ ռուսների առաջխաղացման: 1724 թվականին Պետրոս Մեծի՝ դեպի հարավ ձախողված արշավանքից հետո պահանջվեց ավելի քան մեկ դար, որ 1828 թ. Անդրկովկասն ամբողջությամբ անցնեի Ռուսաստանի տիրապետության տակ, և նրա կայսեր հրովարտակով ստեղծվեի Հայկական մարզը⁶:

Պատմական այս թռուցիկ ակնարկը ցույց է տալիս, որ Պարսկաստանից Ռուսաստանին անցած Արևելյան Հայաստանի տարածքներում հայ ժողովուրդը անկախ ու կիսաանկախ պետականությունների ձևով շարունակ պահպանել է օտարների կողմից ճանաչված իր տիտղոսը: Հայոց Արևելքում Վաչագան

թուղթը ամրապնդեց Հայաստանում հանրային կյանքի իրավական կարգավորվածության արդեն իսկ նախապատմություն ունեցող ավանդույթը, որով բացատրելի է դառնում հայկական ու համաշխարհային իրավական մտքի այնպիսի բացառիկ երևույթ, որպիսին Մշիթար Գոշի «Դատաստանագիրքն» է (1184):

³ Երբ 701 թ. արաբները գրավեցին Հայաստանը, իսկ այնուհետև Վիրքն ու Աղվանքը, նրանք հսկայածավալ այդ տարածքներից Խալիֆայության կազմում ձևավորեցին նոր վարչական միավոր՝ Արմինիա անունով:

⁴ Ղարաբաղ տեղանվան ստուգաբանության մասին տե՛ս **Манасян А.** Об этимологии топонима Карабах или о монгольском следе в карабахском диалекте // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2020, №3, էջ 61-73, http://www.ysu.am/files/07A_Manasyan_r.pdf

⁵ Տե՛ս Из ордера Ф.А. Потемкина П.С. Потемкину от 3 апреля 1783 г. // Армяно-русские отношения в XVIII веке. Сборник документов. Т. IV, Ер., 1990, էջ 239:

⁶ Ինչպես Արցախի իշխանապետությունների հիմքի վրա հայկական պետության վերականգման գաղափարը, այնպես էլ Հայկական մարզ անվանումով վարչական միավորի ստեղծումը այդ տարածքներում հայ ժողովրդի պատմական տիտղոսի ճանաչման դրսևորումներ էին Ռուսական կայսրության կողմից:

Բարեպաշտի հիմնած թագավորությունը, Արաբական խալիֆայության կազմում Արմենիա կուսակալությունը, Բագրատունյաց թագավորությունը, Խաչենի իշխանությունը, Ղարաբաղի մելիքությունները, Խամսայի մելիքությունը, Ղարաբաղի խանությունը, Ռուսաստանի սահմաններում Հայկական մարզը լիիրավ կամ մասնակի իրավասություններով օժտված կազմավորումներ են եղել և այդ տարածքում հայ ժողովրդի պատմական իրավունքի կրողներ: Եվ այդ ողջ շրջանում Անդրկովկասում ո՛չ Ադրբեջան անվամբ պետական կամ վարչական կազմավորում է եղել, ո՛չ ադրբեջանցի էթնոսիմով ժողովուրդ:

Ռուսաստանի ազգային քաղաքականությունը Անդրկովկասում: *Կովկասյան թաթարներ կեղծ էթնոխմբի ձևավորումը*

Թվում էր՝ քրիստոնեական կայսրության կազմում հայոց արևելյան հատվածին ապահով կացություն է սպասում: Սակայն շուտով պարզվեց, որ կայսրությունը այլ նպատակներ է հետապնդում: Նախ նա մոռացավ Ղարաբաղի մելիքներին տված իր խոստումները և Արցախը նույնիսկ չներառեց Հայկական մարզի մեջ: Նրան պետք չէր ունենալ վարչական միավորներ էթնոսներից որևէ մեկի այնպիսի մեծամասնությամբ, որ հետագայում առաջ բերեր անկախանալու տրամադրություններ: Այդ նպատակով նա նոր գրաված հողերում մեկը մյուսի ետևից իրագործում էր վարչական վերաձևումներ, որոնց անուններից հանվում էին ազգային որակումները⁷: Ի վերջո երկրամասը XX դար մտավ վարչական հինգ նահանգների տեսքով՝ իրենց կենտրոնների անուններով՝ *Երևանի նահանգ, Թբիլիսիի նահանգ, Բաքվի նահանգ, Ելիզավետպոլի նահանգ, Քութայիսի նահանգ*: Այդպես էր կայսրությունը կանխում ազգային պետությունների ստեղծման փորձերը: Ընդ որում այդ հարցում կայսրությունը վտանգներ էր սպասում պետականության դարավոր փորձ ունեցող հայերից ու վրացիներից (մանավանդ՝ հայերից, որոնց խոստացել էր Ղարաբաղի մելիքությունների հիմքի վրա վերականգնել հայկական քրիստոնեական պետությունը)⁸: Ի դեպ, ռուսական արքունիքը անկախ պետության հավակնելու հարցում վտանգ չէր տեսնում իսլամադավան բնակչության մեջ: Վտանգավորը նրա համար այդ համայնքի պարսկամետությունն էր, և դրա լուծումը նա համարեց պարսկական հոգևոր ու մշակութային այն դաշտից հեռացնելը, որտեղ եղել էր

⁷ 1849 թ. Հայկական մարզի հիմքի վրա Երևանի նահանգի ձևավորման մասին տե՛ս Акты, собранные Кавказской археографической комиссией: Том VII, 1878, էջ 487:

⁸ Պատահական չէր, որ 1884 թ. Ալեքսանդր 3-րդ ցարի հաստատած «Հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին» կանոններով 1885 թվականին շուրջ 300 հայկական դպրոց փակվեց: Միայն բողոքների լայն ալիքի և Էջմիածնի վճռական դիմադրության շնորհիվ 1886-ին դպրոցները վերաբացվեցին: Հայերի նկատմամբ նույնպիսի անբարյացակամության դրսևորում էր «Հայկական եկեղեցական հողերը և գույքը հարքունիս բռնագրավելու մասին» 1903 թ. հունիսի 12-ի օրենքը, որով օտարվում էին հայկ եկեղեցուն պատկանող հողերը: Եկեղեցու ու ժողովրդական զանգվածների ընդվզումը այդ օրենքի դեմ այնպիսի ծավալներ ընդունեց, որ Նիկոլայ 2-րդ ցարը 1905-ի օգոստոսի 1-ին այն չեղյալ հայտարարեց:

դարեր շարունակ: Դրա համար գործողության մեջ դրվեց տարածաշրջանի *ի-րանագերծման* հայտնի ծրագիրը: Ինչպես հետագայում պարզվեց, կայսրության որդեգրած այդ ուղեգիծը սկիզբ դրեց էթնոքաղաքական զարգացումների, որոնց հետ մերօրյա դեպքերը դրսևորում են պատճառահետևանքային անմիջական կապեր: Դրանք համառոտ շարադրմամբ ունեցան հետևյալ ընթացքը:

Նախ կայսրությունը հրաժարվեց տեղի իսլամադավան բնակչությանը *պարսկաստանցիք* անվանելուց, քանի որ դա նրան հուշում էր Պարսկաստանի հետ իր ծագումնաբանական կապը: Այդ համայնքը մյուսներից առանձնացնելով *մուսուլմաններ* կրոնադավանաբանական հատկանիշով՝ նա երկրատարածքի ժողովրդագրական պատկերը ներկայացնելու համար շրջանառության մեջ դրեց **«մուսուլմաններ-քրիստոնյաներ»** բանաձևը: Դրան հաջորդեց մեկ այլ քայլ: Նա իսլամադավան զանգվածի մեջ առանձնացրեց տեղի ոչ մեծաթիվ թյուրքերին, նրանց «կնքեց» *կովկասյան թաթարներ* անունով և օժտեց արտոնություններով՝ այդ խումբը մյուսներից ավելի գրավիչ դարձնելու համար: Հաշվարկն անվրեպ էր: Համայնքին ոչ միայն ոչ թյուրք հնաբնակներն էին միանում, այլև Իրանից թափանցող էթնիկապես տարախառն աշխատանքային միգրանտները (այսպես կոչված *օտխոդնիկները*՝ *отходники*)⁹: Ռուսական սահմանը միայն պաշտոնապես հատողների թիվը 1860-1890 թթ. կազմում էր տարեկան 25-30 հազար: Դա ժողովրդագրական գրոհ էր, որ փոխեց Արևելյան Անդրկովկասի դեմքը: 1890 թ. *կովկասյան թաթարներ* էթնիկապես անդեմ զանգվածը ամենամեծաթիվն էր: Փաստորեն, 4-5 տասնամյակում Ռուսաստանը որպես իր հենարան ձևավորեց մինչ այդ գոյություն չունեցած կեղծ, բայց և արտոնյալ համայնք: Շուտով նկատվեց նաև երկրամասի էթնոքաղաքական դեմքը *«մուսուլմաններ-քրիստոնյաներ»* կաղապարով ներկայացնելու աննպատակահարմարությունը: Բանաձևը վտանգավոր էր աճող ներհոսքով երկրամասում հաստատվող ռուսների համար, քանի որ ենթադրում էր քրիստոնյա ռուսների մասնակցությունը ապագա բախումներում, որոնց կայսրությունը պետք է դիմեր տարածաշրջանը կառավարելու համար: Ահա թե ինչու բնակչության ռուսական հատվածի չեզոքությունն ապահովելու համար *«մուսուլմաններ-քրիստոնյաներ»* բանաձևը փոխարինվեց տարածաշրջանի էթնոքաղաքական նկարագիրը բնութագրող նոր բանաձևով՝ *«մուսուլմաններ-հայեր»*: Այն մի կողմից ներկայացնում էր Արևելյան Անդրկովկասում քաղաքական զարգացումների գլխավոր գործոնները, մյուս կողմից՝ նախանշում բորբոքվելիք ապագա կոնֆլիկտների կողմերը:

Թվում էր՝ Անդրկովկասի իսլամադավան զանգվածի իրանագերծման ուղեգիծը ճիշտ էր ընտրված, և ճիշտ էին թվում սոցիալական շարժումների ավանգարդում հայտնված հայերին պատժելու համար 1905 թ. ռուսական հատուկ

⁹ Թեմային նվիրված հսկայական գրականություն կա: Տես, օրինակ, **Белова Н. К.** Об отходничестве из северо-западного Ирана в конце XIX - начале XX века // Вопросы истории N 10, октябрь 1956, էջ 112-121:

ծառայությունների հրահրած հայ-թաթարական բախումները, որոնցում նրանք թիկունքից պաշտպանում էին թաթարներին: Բայց այլ կարծիքի էր Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը, որը քաղաքական այդ ուղեգիծը սխալ որակեց, քանի որ դեպի Իրանը հակված գործոնի փոխարեն կայսրությունը կարճ ժամանակում ստեղծել էր իր համար ավելի վտանգավոր թյուրքամետ գործոնը¹⁰: Կովկասյան թաթարների շատ մտավորականներ, որոնք նախապես իրենց իրանական հանրության անդամ էին համարում, XX դարի նախաշեմին արդեն պանթյուրքական գործիչներ էին:

Էթնոքաղաքական գործընթացները կայսրության փլուզման պայմաններում

1917 թ. փետրվարյան հեղաշրջումից հետո Պետերբուրգում իշխանության եկած Ժամանակավոր կառավարությունը հետմիապետական Ռուսաստանի պետական կարգը որոշելու համար ձեռնամուխ եղավ շրջաններում պետական իշխանության նոր մարմինների ձևավորմանը և Սահմանադիր ժողով (ՍԺ) հրավիրելուն: 1918 թ. հունվարին գումարվեց ՍԺ-ի առաջին նիստը: Բայց երկրում իշխանության շուրջ կրքերը չէին հանդարտվում: Տեղերում իշխանությունը բոլշևիկների գլխավորությամբ գրավում էին բանվորագյուղացիական և զինվորական խորհուրդները: 1917 թ. մարտի 6-ին Բաքվում իշխանությունը խաղաղ ձևով անցավ բանվորների ու զինվորների խորհրդին, որը նույն բերի 13-ին իրեն հայտարարեց բարձրագույն իշխանություն Բաքվում և իր կողմից վերահսկվող շրջաններում: Դրան զուգահեռ Ժամանակավոր կառավարության կողմից Թբիլիսիում ստեղծված Անդրկովկասյան հատուկ կոմիտեն և 1918 թ. փետրվարի 18-ին որպես պետական կառավարման ռեգիոնալ մարմին գումարված Անդրկովկասյան սեյմը չճանաչեցին բոլշևիկների իշխանությունը: Մարտի 26-ին Սեյմը ձևավորեց կառավարություն և 1918 թ. ապրիլի 22-ին հռչակեց Ռուսաստանից անկախ Անդրկովկասյան Դեմոկրատական Դաշնային Հանրապետությունը (ԱԴԴՀ):

Ռուսաստանի տրոհման ընթացքին խոշոր տերությունները ոչ միայն հետևում, այլև միջամտում էին: Հատկապես ակտիվ էին Մեծ Բրիտանիան և Կայսերական Գերմանիան, որը մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը աջակցում էր Եռյակ դաշինքում իր դաշնակից Օսմանյան կայսրությանը՝ այդ թվում և վերջինիս կողմից նաև Անդրկովկասում իրագործվող Հայոց ցեղասպանությանը: Ստամբուլն աշխատում էր թույլ չտալ, որ Անդրկովկասը Ռուսաստանից անջատվի միասնական դաշնային կազմավորման ձևով: Նրա աջակիցները երկրամասում արդեն պանթյուրքականությամբ վարակված «Մուսավաթ» կուսակցությունը և նրա շուրջը համախմբված կովկասյան թաթարներն էին: ԱԴԴՀ-ն երկար կյանք ունենալ չէր կարող և չունեցավ: 1918 թ. մայիսի 26-ին Վրաստանը հռչակեց անկախություն, 27-ին Սեյմի մուսուլմանական թևն ընդունեց *Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն* (ԱԴՀ)

¹⁰ Տե՛ս «Красный архив», № 1, (26), М., 1928, էջ 118-120:

անվամբ անկախ պետություն հիմնելու որոշում, իսկ 28-ին Հայոց ազգային խորհուրդը որոշեց ընդունել Հայաստանի Հանրապետության անկախության մասին հայտարարություն:

Ազգերի լիգան Անդրկովկասի նորահռչակ պետությունների հարցում

Անդրկովկասյան ինքնահռչակ պետությունների միջազգային ճանաչումը աշխարհաքաղաքական բարդ վերափոխությունների պայմաններում էր ընթանում: Նրանք որպես ինքնիշխան պետություն ճանաչվելու տարբեր հնարավորություններ ունեին, և բնական է, որ ամեն կերպ աշխատում էին լուծել Փարիզի խաղաղության խորհրդաժողովում ներկայացված լինելու հարցը: Տարածաշրջանում առաջին անգամ հայտնված ԱԴՀ-ն ամենից շատ արգելքներ պիտի հաղթահարեր: 1918 թ. դեկտեմբերին բարձր խորհրդաժողովին մասնակցելու համար ձևավորված պատվիրակությանը Փարիզ ներկայանալու թույլտվությունը ձգձգվում էր, և միայն 1919 թ. մայիսին այն ընդունվեց: Դրանից հետո դարձյալ կես տարի պահանջվեց, որպեսզի Դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը 1920 թ. հունվարի 10-ին որոշեր դե ֆակտո ճանաչել ԱԴՀ-ն և հունվարի 15-ին այդ մասին հայտներ նրա պատվիրակությանը: Խաղաղության խորհրդաժողովը ադրբեջանական պատվիրակությանը միայն 1920 թ. նոյեմբերի 1-ին թույլատրեց ներկայացնել Լիգայի անդամակցության խնդրագիր: Ազգերի լիգան 1920 թ. գործ ուներ Անդրկովկասում արդեն 1918-ին հռչակված նոր պետական կազմավորումների հետ: Դրանց գոյությունը Լիգան ընդունում էր որպես փաստ, և Փարիզում նրանց պատվիրակությունների ներկայությունը դրա արձանագրումն էր: Խնդիրն այն էր, թե այդ նոր կազմավորումները բավարարո՞ւմ են այն պահանջները, որոնք անհրաժեշտ են Լիգայի Կանոնադրության պայմաններով նրանց de jure ճանաչելու համար: ԱԴՀ դեպքը առանձնահատուկ էր տարբեր առումներով, և դրանցում գլխավորը նրա սահմանների անորոշությունն էր:

1920 թ. դեկտեմբերի 1-ին Լիգայի 5-րդ կոմիտեն իր 4-րդ նիստում անդրադարձել է ԱԴՀ հարցին, որ հռչակվել էր «Արևելյան ու Հարավային Անդրկովկասից կազմված» տարածքներում: Իրավունքի տեսակետից անիմաստ այդ ձևակերպումը նկատի ուներ Լիգայի 5-րդ կոմիտեն՝ իր որոշման առաջին կետով արձանագրելով. «Դժվար է ճշգրիտ որոշել այն տարածքների չափսերը, որոնցում այդ պետության կառավարությունը իրագործում է իր իշխանությունը»: Կոմիտեն դրան հավելել է նաև հարևան Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հետ ունեցած ԱԴՀ սահմանային վեճերը, որ թույլ չեն տալիս «...որոշել Ադրբեջանի ներկա սահմանները»¹¹, որոնցում Ադրբեջանի կառավարությունը իրագործում է իր իշխանությունը: Այս փաստերի հիման վրա Լիգայի 5-րդ կոմիտեն դեկտեմբերի 6-ին Ասամբլեային է ներկայացրել իր եզրակացությունը, որով մերժվում է Լիգային անդամակցելու ԱԴՀ հայցադիմումը:

¹¹ St' u League of Nations. Letter from the President of the Peace Delegation of the Republic of Azerbaijan. Assembly Document 20/48/206, էջ 2:

Քաղաքական բնույթի ոչ մի անդրադարձ Լիգայի 5-րդ կոմիտեն չի արել: Սակայն բերված փաստերից բխում են Լիգային ԱՂՀ անդամակցության արգելքը հիմնավորող հարցադրումներ, որոնց մասին Լիգայի Գլխավոր քարտուղար Էրիկ Դրամոնդը նշել է 1920 թ. նոյեմբերի 24-ին ԱՂՀ հայցին ի պատասխան տված իր Հուշագրի «Իրավաբանական նկատառումներ» բաժնում: Գլխավոր քարտուղարը նշում է, թե արդյո՞ք 1918 թ. մայիսին այդ հանրապետության հռչակումը և 1920 թ. նրա դե ֆակտո ճանաչումը մի քանի պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի կողմից բավարար է, որ, ըստ Ազգերի լիգայի Կանոնադրության 1-ին կետի, Ադրբեջանը համարվի դե յուրե «լրիվ ինքնակառավարվող պետություն» (ԱՄՆ-ն նույնիսկ դե ֆակտո չճանաչեց ԱՂՀ-ն): Հարցի բացասական պատասխանը բխում էր Գլխավոր քարտուղարի Հուշագրից և Լիգայի 5-րդ կոմիտեի ընդունած որոշումից, որոնք հանձնվել են ԱՂՀ խնդրագիրը ներկայացրած պատվիրակությանը: Եվ որպես Լիգայի որոշման ամբողջացում՝ Էրիկ Դրամոնդը իր փաստարկները ավարտում է այն հարցադրմամբ, թե Լիգա ընդունվելու խնդրագիրը ներկայացրած պատվիրակությունը ունի՞ արդյոք լիազորություններ նման դիմում ներկայացնելու Ազգերի լիգա: Եվ այնուհետև, ինչպես Լիգայի գլխավոր քարտուղարն է ընդգծում, ի վիճակի՞ է արդյոք այդ կառավարությունը կատարել պարտավորություններ և տալ Լիգայի անդամակցությունից բխող երաշխիքներ¹²:

Բացի այս բոլորից՝ Լիգայի Կանոնադրությունը խստագույնս պահանջում էր հայցատու պետություններից Լիգա ընդունվելու դեպքում կատարել բոլոր այն պարտավորությունները, որոնք պարտադիր են կազմակերպության անդամ պետությունների համար: Թվում էր, թե Ադրբեջանի անդամակցության հայցը մերժելու Լիգայի 5-րդ կոմիտեի ընդունած որոշման և նրա Գլխավոր քարտուղարի Հուշագրում բերված փաստարկները բավարար են մերժման ակտը ամբողջացնելու համար, և Լիգան պատմական փաստարկներին չի անդրադառնա: Բայց ԱՂՀ դեպքում խնդրատուի առնչությանը երկրատարածքի պատմությանը տրվել է հատուկ նշանակություն:

Պատմական տիտղոսի հարցը ԱՂՀ հայցը մերժելու փաստարկներում

Ազգերի լիգային անդամակցելու ԱՂՀ դիմումը մերժելու փաստարկների մեջ պատմական տիտղոսի բացակայությանը հատուկ կարևորություն է տրված: 1920 թ. նոյեմբերի 24-ին Լիգայի Գլխավոր քարտուղար Էրիկ Դրամոնդի վերը նշված Հուշագրում առաջին հերթին հիշատակվում է հավակնած տարածքների նկատմամբ հայցողի հենց պատմական տիտղոսի/իրավունքի բացակայության փաստը: Գլխավոր քարտուղարը շեշտում է, որ ԱՂՀ-ի հավակնած 40 000 քառ. միլ (64 000 քառ. կմ) այդ տարածքը երբևիցե անկախ պետության կարգավիճակ չի ունեցել և եղել է խոշոր տերությունների՝ Մոնղոլիայի,

¹² St' u Assembly Document 20/48/108, էջ 4:

Պարսկաստանի, Ռուսաստանի մաս: Նույն փաստարկի ծավալման շրջանակում Լիգայի Գլխավոր քարտուղարը ընդգծում է. «Նոր հանրապետության համար ընտրված *Աղբբեջան* անվանումը այնպիսին է եղել, ինչպիսին և հարևան պարսկական երկրամասին է»¹³:

Թվում է՝ Լիգան արձանագրել է սույլ «Արևելյան ու Հարավային Անդրկովկասի» նկատմամբ հայցորդի պատմական տիտղոսի բացակայության փաստը: Մակայն պատմությանը կատարած ժլատ այդ հղումից հետևում են հարցեր, որոնց պատասխանները չկային ո՛չ ԱՂՀ հռչակագրում, ո՛չ Լիգայի անդամության հայցով Բաքվի ներկայացրած խնդրագրում: Դրամոնդի Հուշագրում նշված այդ փաստը կոնֆլիկտների կարգավորման գործընթացներում պատմության ու իրավունքի կապի կարևորության մասին է խոսում, որը իր նշանակությունը չի կորցրել նաև մեր օրերում:

Փարիզի խաղաղության խորհրդաժողովում արդեն գոյություն չունեցող ԱՂՀ-ի պատվիրակության ղեկավար Ա. Թոփչիբաշևը Լիգային անդամակցելու հայցադիմումի մերժման կապակցությամբ կազմակերպության առաջին ասամբլեայի նախագահ Գ. Հիմանսին հղված իր բացատրական նամակում¹⁴ շրջանցել է հենց պատմական տիտղոսի հարցը և քննարկման նյութ դարձրել այն, թե իբր Ազգերի լիգան մերժել է ԱՂՀ-ին իր շարքերն ընդունել միայն այն պատճառով, որ Խորհրդային Ռուսաստանի XI Կարմիր բանակը դեռևս 1920 թ. ապրիլի 28-ին է վերացրել ԱՂՀ-ն, ինչը կասկածներ է հարուցում, թե տալով և՛ այդ պետության փախուստի մեջ գտնվող կառավարությունը ում է ներկայացնում: Ա. Թոփչիբաշևի բացատրությունները անհետևանք են մնացել, քանի որ նրա հակափաստարկը, թե իբր բոլշևիկների իշխանությունը տարածվում է միայն Բաքվում և նրա հարակից շրջաններում, և որ ԱՂՀ կառավարությունը վերահսկում է հանրապետության մեծ մասը, ուղղակի կեղծ էր, և դա հանուրին հայտնի էր: Ի դեպ, Ա. Թոփչիբաշևի 100 տարի առաջ բերած այդ կեղծ փաստարկը շարունակում են շրջանառության մեջ պահել Բաքվի մերօրյա վերլուծաբանները¹⁵:

Եվ այսպես, պատմությունը Լիգայի դիրքորոշման մեջ ներբերվել է պատմական տիտղոսի մասին հարցադրմամբ, որը ինքնին բացառիկ դրվագ է ԱՂՀ կապակցությամբ Լիգայի մոտեցումներում: Պարզվում է, որ ոչ միայն դա, այլև 1918-1920 թթ. ԱՂՀ ասպարեզ իջնելու հետ կապված անցքերը օրակարգային են հենց մեր օրերում: ԱՂՀ կայացմանը վերաբերող այդ «մանրուքներում» հատուկ տեղ ունի նրա «ծննդյան վկայականը»՝ 1920 թ. ապրիլի 27-ին ընդունված Անկախության հռչակագիրը:

¹³ League of Nations. Memorandum by the Secretary General on the Application for the Admission of the Republic of Azerbaijan to the League of Nations. Assembly Document 20/48/108, p. 2.

¹⁴ St' u Архив Лиги Наций (ЛНА), Женева, Швейцария (п. 28, дос. 8466, док. 9440)

¹⁵ St' u **Маммадов И., Мусаев Т.** Армяно-Азербайджанский конфликт: история, право, посредничество. Тула, 2007, 192 էջ:

ԱՂՀ անկախության հռչակագրի համառոտ նկարագիրը

Նախաբանում արձանագրելով, որ Ռուսական կայսրության փլուզումը «Ադրբեջանին հրամայաբար թելադրում է... որ Ադրբեջանի ժողովուրդները դուրս բերվեն ներքին ու արտաքին այն ծանր իրավիճակից, որի մեջ նրանք հայտնվել են», այնուհետև իբրև թե «համաժողովրդական քվեարկությամբ ընտրված Ադրբեջանի մուսուլմանական ազգային խորհրդի» (ԱՄԱԽ) անունից հռչակագիրը առաջին կետով հայտարարում է, որ «այսուհետ Ադրբեջանի ժողովուրդները հանդիսանում են ինքնիշխան իրավունքների կրողներ, և Արևելյան ու Հարավային Անդրկովկասից կազմված Ադրբեջանը՝ լիիրավ ինքնիշխան պետություն»:

Հռչակագիրը չի տալիս Հարավային ու Արևելյան Անդրկովկասին «Ադրբեջան» անունը վերագրելու որևէ հիմնավորում. երկրատարածքի պատմությունը չգիտեր այդ անունով ո՛չ աշխարհագրական տարածք, ո՛չ վարչական միավոր, ո՛չ էլ այդ էթնոնիմով հանրությո՛ւն: Չկարևորելով այդ հանգամանքը՝ փաստաթղթի հեղինակները այնուամենայնիվ գիտակցել են նոր պետությունը հռչակող ԱՄԱԽ-ի լեգիտիմության կարևորությունը՝ հատուկ նշելով, որ հռչակագրի համար իրավաբանորեն պատասխանատու այդ մարմինը ընտրված է համաժողովրդական քվեարկությամբ: Նշել են, սակայն որևէ հղում չեն արել այդ քվեարկության տեղին, ժամանակին և արդյունքներին: Ակնհայտ է՝ փաստի չգոյության պատճառով: Բազմազգ Արևելյան Անդրկովկասում նման քվեարկություն լինել չէր կարող: Հայերը, ուղիները, ռուսները չէին կարող մուսուլմանական ազգային խորհուրդ ընտրել և չեն ընտրել: Մայիսի 27-ին (հենց հռչակագրի ընդունման օրը) Մեյմի իսլամադավան պատգամավորների ժողովում մուսուլմանական ազգային խորհուրդ ձևավորելը ոչ մի հիմք չէր տալիս պնդելու, որ այն ստեղծվել է Արևելյան և Հարավային Անդրկովկասի ժողովուրդների համընդհանուր քվեարկությամբ: Ավելին՝ «**մուսուլմանական ազգային խորհուրդ**» անվամբ որևէ մարմին գոյություն ունենալ չէր կարող: Այն կարող էր լինել միայն *մուսուլմանական* կամ միայն *ազգային*, քանի որ իսլամի տեսակետից «մուսուլմանական» և «ազգային» եզրույթները անհամատեղելի են: Միով բանիվ, անհայտ է մնում, թե ով և որտեղ է հռչակել Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն անվամբ այդ կազմավորումը:

Ադրբեջան անունով առաջին անգամ հայտնվող նորագոյացությունը *ադրբեջանցի* անունը կրող էթնոս չուներ, որպեսզի նշվեր որպես տիտղոս: Դրա համար հռչակագիրը հայտարարում է՝ «այսուհետ Ադրբեջանի **ժողովուրդները** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.) հանդիսանում են ինքնիշխան իրավունքների կրողներ»: Այս ձևակերպումը այլ մեկնաբանություն չունի, քան այն, որ տիտղոսակիր ազգ չունեցող նոր պետության բոլոր ժողովուրդները հավասարապես նրա

հիմնադիրները և ինքնիշխանության կրողներն են¹⁶: Տիտղոսակիր ազգի բացակայության պատճառով առաջին անգամ հայտնվող պետության տարածքները սահմանվեցին աշխարհագրական սկզբունքով՝ «Արևելյան ու Հարավային Անդրկովկասից կազմված»¹⁷: Եթե նույնիսկ անտեսվի պետության սահմանները որոշելու նման եղանակի անիմաստ լինելը, անշրջանցելի է մնում այն փաստը, որ հռչակագրի ընդունման պահին ԱԴՀ-ն որևէ վերահսկողություն չունեի նաև Լեռնային Ղարաբաղում, որին ինքը հավակնում էր՝ հակառակ այն բանին, որ այն Անդրկովկասի արևելքում չէր գտնվում:

Ազգերի լիգայի հինգերորդ կոմիտեի որոշումը Լիգային անդամակցելու Հաստատանի Հանրապետության (ՀՀ) հայցի վերաբերյալ

Ազգերի լիգան ՀՀ-ի դեպքում չի տեսել նրա տարածքային պահանջները մերժելու իրավական արգելքներ: Եվ հարցը ոչ միայն այդ տարածքներում պատմականորեն ճանաչված տիտղոս ունենալու փաստն էր, այլև այն, որ ՀՀ տարածքները հռչակվել էին հայկական գավառներով՝ ըստ էության էթնիկական սահմաններով: Դրանց օրինականությունը իրավունքի տեսակետից անկասկած էր, ինչը հիմք է հանդիսացել, որ Լիգան 1920 թվականի դեկտեմբերի 10-ին չվիճարկի Ռուսահայաստանի տարածքներում ՀՀ տիտղոսը: Ավելին, Լիգայի 5-րդ կոմիտեն իր պարտքն է համարել նշել, որ 1920 թ. մայիսին ՀՀ տարածքը կազմել է 26 130 քառ. մղոն (70 551 քառ. կմ), և որ քննարկման ընթացքում գտնվող Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթների և Տրապիզոնի վիլայեթի մի մասի վրա նրա տիտղոսի ճանաչման դեպքում այն պիտի կազմի 80 880 քառ. մղոն (214 000 քառ. կմ.): Դրանց հիմքում իրավունքի տեսակետից Հայոց ազգային խորհրդի ընդունած ՀՀ անկախության մասին հռչակագրի անխոցելի բնույթն էր: Ահա 1920 թ. մայիսի 28-ին ՀՀ անկախության մասին Հայոց ազգային խորհրդի ընդունած որոշման հիման վրա մայիսի 31-ին հրապարակված Հռչակագիրը՝ «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության

¹⁶ Արևելյան Անդրկովկասում հայերն առանձնանում էին երկրամասի տնտեսական ու մշակութային պատմության մեջ իրենց ներդրումով, իրենց քաղաքական կշռով:

¹⁷ Դժվար չէ քողագերծել երկրատարածքի համար աշխարհագրական անձանոթ անունով պետություն հիմնելու նպատակները: Անդրկովկասում նոր թուրքական պետություն ստեղծելու համար պատմական արմատներ ունեցող ժողովուրդներից որևէ մեկի անունը որպես տիտղոս օգտագործելը թուրքի համար ընդունելի չէր: Նպատակահարմար չէր նաև Ռուսական կայսրության կողմից ստեղծված *կովկասյան թաթարներ* նորահայտ էթնոկոնգլոմերատի անվանը դիմելը, որը նույնիսկ դեռ կարգին կայունացած չէր: Աշխարհագրական անվանումը թույլ է տալիս շրջանցել այդ խութերը և բնիկ ժողովուրդների թուրքացման քաղաքականությունը շարունակել «Ադրբեջան», «ադրբեջանցի» քողածածկերի տակ: Նույն այդ հնարքը կիրառվել է նաև խորհրդային տարիներին, երբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը անվանվել են աշխարհագրական սկզբունքով:

հանդեպ՝ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»¹⁸։ Իրավունքի տեսակետից ասված է հստակ։ Լիզան անվիճելի է դիտել ՀՀ անկախությունը հռչակող մարմնի ինքնությունը և այն սկզբունքը, որով սահմանվում են հռչակվող պետության տարածքները։

Ինչպե՞ս է մերոյա Ադրբեջանական Հանրապետությունը (Ադր. Հ) 1991 թ. դարձել 1918-1920 թթ. ԱԴՀ իրավահաջորդը, և իրավական ի՞նչ հետևանքներ դառնի

ԽՍՀՄ լուծարման ընթացքում, 1991 թ. օգոստոսի 30-ին ընդունվել է Ադրբեջանական Հանրապետության «Պետական անկախության վերականգման մասին» հռչակագիրը, որով հայտարարվել է, որ Բաքվում հրաժարվում են «Միությանական Հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի¹⁹ համաձայն անկախություն ձեռք բերելուց և վերականգնում են 1918-1920 թթ. գոյատևած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը՝ դառնալով նրա իրավահաջորդը։ 1991 թ. հոկտեմբերի 18-ին Բաքուն իրավահաջորդության հետ կապված հարցերը մանրամասնել է «Ադրբեջանական Հանրապետության անկախության մասին» սահմանադրական ակտում²⁰։ Այդ փաստաթղթի առաջին հոդվածով Խորհրդային Ադրբեջանը դիտվում է որպես 1920 թ. Խորհրդային Ռուսաստանի XI Կարմիր բանակի կողմից Ադրբեջանի գավթման հետևանքով հիմնված ապօրինի կազմավորում (իհարկե շրջանցում են այն փաստը, որ վերջինս հիմնել է տարածաշրջան ներխուժած թուրքական բանակը), երկրորդ կետով Ադրբեջանական Հանրապետությունը հայտարարվում է 1918-1920 թթ. Ադրբեջանական Հանրապետության իրավահաջորդ, երրորդ հոդվածով Ադրբեջանին վերաբերող մասով ուժը կորցրած է հայտարարվում 1922 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը։ Հետին թվով խմբագրվել են 1918 թ. ԱԴՀ անկախության հռչակագրում տեղ գտած փաստական ու իրավական անհեթեթությունները, Բայց և ստիպված են եղել ավելացնել նորերը։ ԱԴՀ-ն հռչակած «Ադրբեջանի մուսուլմանների ազգային խորհուրդի» անվանումից հանվել է «մուսուլմանների» բառը։ Բայց դա չի շտկել իրադրությունը, քանի որ այն ժամանակ ադրբեջանական ազգ չի եղել, որ գոյություն ունենա ադրբեջանական ազգային խորհուրդ։ Ակտում փոխվել է Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության անվանումը՝ այն դարձնելով ուղղակի Ադրբեջանական Հանրապետություն։ Երկուսին էլ տվել են նույն անվանումը, որպեսզի իրավահաջորդության ակտը համոզիչ դառնա։

¹⁸ Հայոց պատմություն, հատոր 4, գիրք առաջին։ Եր., 2010, էջ 11։

¹⁹ Տե՛ս Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» от 3 апреля 1990 года. Ведомости Съезда народных депутатов СССР, 199, N 13, էջ 252։

²⁰ Տե՛ս Газета «Бакинский рабочий», 7 ноября 1991 г.

Սահմանադրական ակտում տեղ գտած կեղծիքները հատուկ անդրադարձի նյութ կարող են լինել: Մեր թեմայի տեսակետից թերևս ամենից զավեշտականն այն ուղղումն է, որով Բաքուն փորձել է հստակեցնել տարածքային իր պահանջները: ԱՂՀ հռչակագրի՝ «Արևելյան ու Հարավային Անդրկովկասից կազմված» ձևակերպմանը դիմելը նպատակահարմար չէր, քանի որ հանրայնորեն հայտնի էր իրավունքի տեսակետից դրա անիմաստ լինելը: Սահմանադրական ակտը այն փոխարինել է նոր՝ իրավունքի տեսակետից ավելի անհեթեթ, սահմանազատման ու սահմանագծման չենթարկվող, աշխարհագրորեն իմաստագուրկ դրույթով՝ «Պատմականորեն ձևավորված սահմաններում Ադրբեջանական Հանրապետության տարածքը միասնական, անբաժանելի ու անձեռնմխելի է»:

Այսպիսի «սահմաններով» է 1991 թ. նոյեմբերի 21-ին Բաքուն ներկայացել Ալմա-Աթա: Եվրոպական համայնքը, որ դեկտեմբերի 16-ին հռչակել էր հետխորհրդային տարածքում իր կողմից նորանկախ պետությունների ճանաչման չափանիշների մասին հայտարարությունը, չնկատեց, որ Ադրբեջանական Հանրապետությունը չի բավարարում այդ չափանիշներից և ոչ մեկին, և դեկտեմբերի 30-ին շուտափույթ որոշեց ճանաչել այդ անհայտ տարածքներով ու սահմաններով նորագոյացությունը: Ամենայն հավանականությամբ, ԵԱՀԿ-ի խորհրդով է 1991 թ. դեկտեմբերի 29-ին Բաքուն կազմակերպել անկախության հանրաքվե՝ իր տարածքները ճշտագրտելու համար: Դա Անդրկովկասում *Ադրբեջան* անունով հայտնված կազմավորումներում առաջին հանրաքվեն էր, և հենց այդ ակտով Ադր. Հ-ն կարող էր ձեռք բերել օրինական տարածքներ ու սահմաններ: Բայց այդ՝ հանրաքվեն ևս նրան սահմաններ չտվեց, քանի որ մասնակիցները պետք է հավանություն տային կամ մերժեին տարածքների վերաբերյալ սահմանադրական ակտի իրավաբանորեն անիմաստ այդ բանաձևին՝ «Պատմականորեն ձևավորված սահմաններում Ադրբեջանական Հանրապետության տարածքը միասնական, անբաժանելի ու անձեռնմխելի է»: Անհայտ է մնում, թե կոնկրետ ինչ սահմաններ է Բաքուն հայտարարել անձեռնմխելի, կամ ինչ սահմաններ էին ճանաչել հանրաքվեի մասնակիցները: Նույնը վերաբերում է Եվրոպական համայնքին, որը հանրաքվեից անմիջապես հետո որոշեց ճանաչել Ադրբեջանական Հանրապետությունը և պաշտպանել նրա «պատմականորեն» ձևավորված անհայտ սահմանների անձեռնմխելիությունը:

Լավագույն դեպքում, առաջին անգամ տեղի ունեցած այդ հանրաքվեի աշխարհագրությունը (Բաքվի վարչական վերահսկողության տակ գտնվող բնակավայրերը, որտեղ կայացել է հանրաքվեն) կարող էր դառնալ Ադր. Հ սահմանների որոշման հիմք: Եվ այդ դեպքում պարզ է դառնում, որ այդ հանրապետությունը 1991 թ. դեկտեմբերին սահմաններ է ձեռք բերել առանց Արցախի Հանրապետության, քանի որ մինչ այդ՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ին, օրինաբար անկախություն ձեռք բերած Արցախը չի մասնակցել այդ հանրաքվեին:

Հարց. Ինչո՞ւ տարածքների հարցում Բաքուն մի անհիմաստ ձևակերպումը փոխարինում է մեկ այլ ավելի անհիմաստ ձևակերպմամբ:

Պատասխան. Եթե օրինական հիմքեր ունենար, դրանց կդիմեր: Չկա՛ն:

АЛЕКСАНДР МАНАСЯН – Почему Лига наций в 1920 г. не оспаривала титул Республики Армения в Восточной Армении и не признала законными территориальные притязания Азербайджанской Демократической Республики. – В статье обосновывается тезис о том, что ни одна из республик, появившихся в XX веке в Закавказье под названием *Азербайджан*, не состоялась актом самоопределения и не имела юридически установленных границ. Первая из них - Азербайджанская Демократическая Республика (АДР) – была создана в 1918 г. вторгшимися в Закавказье оттоманскими войсками. Лига наций отказала просьбу АДР о вступлении в ее ряды, признавая ее территориальные притязания не обоснованными ни исторически, ни демографически, и отмечая невозможность определения ее территорий (а значит и границ). Оказалось, что формула **«состоящая из Восточного и Южного Закавказья»** Декларации о независимости АДР, которая легла в основе территориальных ее притязаний, не поддавалась верификации. Что касается Республики Армения (РА), Лига не оспаривала ее титул на этнически армянских (включая Арцах) территориях Российской империи и отметила будущие территории РА после вступления в силу арбитражного решения Вудро Вильсона. АДР покинула историю без признанных территорий и границ, когда XI Красная армия Советской России 28 апреля 1920 г. вошла в Баку, упразднила АДР и обосновала Азербайджанскую Советскую Социалистическую Республику (Аз. ССР). Определение границ закавказских советских республик оказалось у вошедшего в сговор с кемалистской Турцией правительства Советской России. В 1921 году уже признанные как территории Советской Армении (Арм. ССР) Нахичевань и Нагорный Карабах (Арцах) были отторгнуты от Арм. ССР и включены в границы Аз. ССР. Нахичевань - по Карсскому договору (1921 г.) со статусом под покровительственной территории, а Арцах - по «решению» Кавказского бюро Российской Коммунистической (большевистской) партии (далее - Кавбюро РКП/б/) (5 июля 1921 г.) со статусом национальной автономии с широкими правами. Это «решение» известно не только тем, что исходило от партийного органа третьего государства, не имевшего права на решение территориальных вопросов, но и тем, что оно фактически не было принято. Сталин прочел текст и не поставив его на обсуждение и голосование закрыл заседание Кавбюро. В ходе распада СССР в Баку декларировали об отказе от правопреемства Аз. ССР, признав ее незаконным образованием, появившимся в результате аннексии Азербайджана. В Баку понимали нелепость признания законными границ Аз. ССР, которую они считали незаконным образованием. Потому решили в этом вопросе остаться верными наследию АДР. Мешала отвергнутая Лигой наций формула ее территориальных притязаний: **«состоящая из Восточного и Южного Закавказья»**, несостоятельность которой была очевидной. В Конституционном акте «О государственной независимости Азербайджанской Республики» (18 октября 1991 г.) Баку ее заменил другой, но юридически более бессмысленной формулой: «Территория Азербайджанской Республики в исторически сложившихся границах едина, неделима, неотчуждаема» (Газета «Бакинский рабочий», 7 ноября 1991 г.), принципиально не поддающаяся ни делимитации, ни демаркации. С такими «территориями» и «границами» Азербайджанская Республика (АР) 21 декабря явилась в Алма-Ату, чтобы вступить в СНГ и дать согласие на требования Европейского Сообщества, выдвинутых ею 16 декабря 1991 г. в «Заявлении двенадцати» в качестве критериев признания новых государств Восточной Европы и постсоветского пространства. Европа закрыла глаза на то, что АР не удовлетворяет ни одному из этих критериев и видимо советовала Баку проводить референдум о независимости, чтобы хотя бы таким актом

определить границы. Этот первый референдум о независимости в истории образований с названием «Азербайджан» состоялся 29 декабря 1991 года. Но вынесенный на референдум вопрос «Вы поддерживаете Конституционный акт, принятый Верховным Советом Азербайджанской Республики «О государственной независимости?» оставил в силе лишенный юридического смысла тезис об исторически сложившихся границах. Границы АР остались не определенными. Поняв нелепость ситуации, Баку снял из обращения Конституционный акт, поместил его в президентском сайте, устранив из текста слова «в исторически сложившихся границах».

Ключевые слова: Кавказские татары, Республика Армения, Азербайджанская Демократическая Республика, Лига наций, Азербайджанская Республика, Республика Арцах, Заявление «двенадцати»

ALEXANDER MANASYAN – *Why the League of Nations in 1920 did not challenge the title of the Republic of Armenia in Eastern Armenia and did not recognize the territorial claims of the Azerbaijan Democratic Republic as legitimate.* – The article substantiates the thesis that none of the republics that appeared in the 20th century in Transcaucasia under the name *Azerbaijan* were established by an act of self-determination and did not have legally established borders. The first of them - the Azerbaijan Democratic Republic (ADR) - was created in 1918 by Ottoman troops invading Transcaucasia. The League of Nations refused the ADR's request to join its ranks, recognizing its territorial claims as unfounded either historically or demographically and noting the impossibility of defining its territories (and therefore its borders). It turned out that the formula “consisting of Eastern and Southern Transcaucasia” of the Declaration of Independence of the ADR, which formed the basis of its territorial claims, could not be verified. As for the Republic of Armenia (RA), the League did not challenge its title in the ethnically Armenian (including Artsakh) territories of the Russian Empire and marked the future territories of the RA after the entry into force of the Woodrow Wilson arbitration award. The ADR left history without recognized territories and borders when the XI Red Army of Soviet Russia entered Baku on April 28, 1920, abolished the ADR and founded the Azerbaijan Soviet Socialist Republic (Az SSR). The determination of the borders of the Transcaucasian Soviet republics was left to the government of Soviet Russia, which had entered into an agreement with Kemalist Turkey. In 1921, Nakhichevan and Nagorno-Karabakh (Artsakh), already recognized as territories of Soviet Armenia (Armenian SSR), were torn away from Armenian SSR and included within the borders of Az. SSR. Nakhichevan - according to the Treaty of Kars (1921) with the status of a protected territory, and Artsakh - according to the “decision” of the Caucasian Bureau of the Russian Communist (Bolshevik) Party with the status of national autonomy with broad rights (July 5, 1921). This “decision” is known not only because it came from a third state party body that did not have the right to resolve territorial issues, but also because it was not actually adopted. Stalin read the text and, without putting it up for discussion and voting, closed the meeting of the Caucasian Bureau. During the collapse of the USSR, Baku declared its refusal to inherit Az. SSR, recognizing it as an illegal entity that emerged as a result of the annexation of Azerbaijan. Baku understood the absurdity of recognizing the legal borders of Az. SSR, which they considered an illegal entity. Therefore, we decided to remain faithful to the heritage of the ADR in this matter. During the collapse of the USSR, Baku declared its refusal to inherit Az. SSR, recognizing it as an illegal entity that emerged as a result of the annexation of Azerbaijan. Baku understood the absurdity of recognizing the legal borders of Az. SSR, which they considered an illegal entity. Therefore, they decided to remain faithful to the heritage of the ADR in this matter. The formula for its territorial claims, rejected by the League of Nations, was in the way: “**consisting of Eastern and Southern Transcaucasia**”, the inconsistency of which was obvious. In the Constitutional Act “On State Independence of the Azerbaijan Republic” (October 18, 1991), Baku replaced it with another, but legally more meaningless formula: “The territory of the Azerbaijan Republic

within the historically established borders is united, indivisible, inalienable” (Newspaper “Baku Worker”, 7 November 1991), fundamentally not amenable to either delimitation or demarcation. With such “territories” and “borders”, the Republic of Azerbaijan (AR) came to Almaty on December 21 to join the CIS and agree to the demands of the European Community put forward by it on December 16, 1991, in the “Statement of the Twelve” as recognition criteria for new states of Eastern Europe and the post-Soviet space. Europe turned a blind eye to the fact that Azerbaijan does not satisfy any of the criteria it put forward and apparently advised Baku to hold a referendum on independence in order to at least determine the borders with such an act. This first referendum on independence in the history of entities called “Azerbaijan” took place on December 29, 1991. But the question submitted to the referendum, “Do you support the Constitutional Act adopted by the Supreme Council of the Republic of Azerbaijan “On State Independence?” left in force the thesis about historically established borders, devoid of legal meaning. Realizing the absurdity of the situation, Baku removed the Constitutional Act from circulation, placing it on the presidential website, removing the words “within historically established borders” from the text.

Key words: *Caucasian Tatars, Republic of Armenia, Azerbaijan Democratic Republic, League of Nations, Republic of Azerbaijan, Republic of Artsakh, Statement of the “Twelve”*

CONTRA LEGEM ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԵԳԻՏԻՄԱՑՈՒՄԸ ԵՎ ԶՍՊՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ* 

Հայ-ռուսական համալսարան

Ուսումնասիրության նպատակն է պարզել, թե դատարաններն արդյոք օժտված են օրենքին հակառակ (contra legem) իրավունքը զարգացնելու լեգիտիմությամբ: Նախ՝ ներկայացվում է, որ ժողովրդավարական լեգիտիմությունը ներկայումս ճգնաժամի մեջ է: Եվրոպայում ընտրովի քաղաքական գործիչները հրաժարվել են քաղաքականությամբ զբաղվելուց, իրենց դիրքերը զիջել են պոպուլիստներին, ինքնավար (անկախ) մարմիններին կամ ոչ պետական խոշոր կազմակերպություններին: Երկրորդ՝ ճգնաժամի մեջ գտնվող քաղաքական մարմինների ընդունած օրենքների լեգիտիմությունը ոչ թե փաստ է, այլ ենթադրություն (կանխավարկած) է: Օրենքի լեգիտիմության կանխավարկածը հնարավոր է հերքել դատական ընթացակարգերի միջոցով, երբ դատարանը իմպլիցիտ որոշում է, որ օրենքը լեգիտիմ չէ, քանի որ այն հակասում է իրավունքի սկզբունքներին, ուստի իրավունքը հնարավոր է զարգացնել ոչ լեգիտիմ օրենքին հակառակ: Դատարանի լեգիտիմության աղբյուրը անկախության, ազնվության և իրավունքի այլ սկզբունքներն են: Իրավունքի սկզբունքները նաև contra legem դատական ակտի լեգիտիմացման միջոց են: Նման պնդում անելու հիմքն այն է, որ ոչ մի հասարակություն չէր ցանկանա, որ իր երկրի իրավական համակարգում գործի արդարության կամ տրամաբանության նվազագույն պահանջներին հակասող այնպիսի օրենսդրական կարգավորում, որի աղաղակող անտրամաբանությունը և անարդարությունը պարզ է նույնիսկ տասնչորս տարեկան երեխային (օրենքի աղաղակող անտրամաբանության և անարդարության որոշման «տասնչորս տարեկան երեխայի» բանաձև): Ի տարբերություն արմատական իրավաբանական ռեալիզմի՝

* **Արթուր Ղամբարյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

Артур Гамбарян – доктор юридических наук, заслуженный юрист РА, заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор кафедры права Академии государственного управления РА

Artur Ghambaryan – Doctor of Law, Honored Lawyer of the Republic of Armenia, Head of the Chair of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University, Professor at the Chair of Law of the Academy of Public Administration of the Republic of Armenia

Էլ. փոստ՝ artur.ghambaryan@gmail.com, ORCID: <https://orcid.org/0000-0002-6322-4664>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 22.09.2024

Գրախոսվել է՝ 28.10.2024

Հաստատվել է՝ 15.12.2024

© The Author(s) 2024

contra legem իրավունքի զարգացման ժամանակ դատարանը չի վերածվում «սուվերենի», իսկ նրա contra legem որոշումը՝ «սուվերենի որոշման», քանի որ 1) օրենքի տեքստը շարունակում է պահպանել իր նշանակությունը դատարանների համար, 2) դատարանը իրավունքը զարգացնում է ոչ թե ex nihilo, այլ իրավունքի սկզբունքների հիման վրա և պարտավոր է հիմնավորել դրանց կիրառումը: Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը ենթադրում է զսպման կառուցակարգեր, որոնք կոչված են նվազեցնելու ներկայացուցչական ժողովրդավարությունը «յուդոկրատիայով» փոխարինելու ռիսկերը: Զսպման կառուցակարգերը ներառում են contra legem իրավունքի զարգացման ինստիտուցիոնալ և ոլորտային սահմանները, ինչպես նաև՝ ներքին զսպումները:

Բանալի բառեր – *contra legem*, *ժողովրդավարություն*, *լեգիտիմություն*, *օրենքի լեգիտիմության կանխավարկած*, *իրավունքի սկզբունքներ*, *դատարան*

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ուսումնասիրության առարկան

Contra legem իրավունքի զարգացման դոկտրինն առանձնացնում է օրենքին հակառակ գործելու երկու իրավիճակ.

1) հաջողված հեղափոխություններից հետո հին և նոր իրավակարգերի պայքարի դեպքում, երբ նոր իշխանությունն իրավունքը զարգացնում է հին օրենքների հակառակ (*contra legem* իրավունքի զարգացման քելզենյան ուսմունք)¹,

2) օրենքի կոնկրետ դրույթի ադադակող անարդարության կամ անտրամաբանության դեպքում, երբ դատավորը իրավունքի կոնկրետ սկզբունքների հիման վրա գործում է օրենքի կոնկրետ հոդվածին հակառակ (*contra legem* իրավունքի զարգացման դասական դոկտրին):

Սույն աշխատանքում քննարկվում են *contra legem* իրավունքի զարգացման դասական դոկտրինի՝ նկարագրված իրավիճակում օրենքին հակառակ իրավունքի զարգացման լեգիտիմացման հարցերը:

Ժողովրդավարության սկզբունքը պահանջում է, որ հասարակության ընդհանուր շահերը որոշի կա՛մ անմիջապես հասարակությունը, կա՛մ նրա կողմից ընտրված ներկայացուցչական մարմինը: Ընդհանուր առմամբ, միայն ընտրությունների միջոցով ձևավորված մարմինը հանրային կարևոր հարցերով կարող է հասարակության համար սահմանել համապարտադիր վարքագծի կանոններ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը հակասում է ժողովրդավարությանը, քանի որ այս դեպքում դատարանը, որն ընտրված չէ ժողովրդի կողմից, վեճը լուծելիս իրա-

¹ Տե՛ս **Гамбарян А. С.** Указ Президента РФ № 1400 – Правомерный акт contra constitutionem, Вестник Конституционного Суда РА, 2023, № 1 (109), էջ 8-34:

Տե՛ս **Ա. Ղամբարյան**, Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը Հայաստանի Հանրապետության անկախացման գործընթացում // Գիտական Արցախ, 2021, № 3 (10), էջ 86-97:

վունքի սկզբունքներից բխեցնում է այնպիսի վարքագծի կանոն, որը հակադրվում է հասարակության կողմից ընտրված մարմնի սահմանած օրենսդրական դրույթներին: Այս պարագայում ծագում է բնական հարց. իսկ դատարանն արդյոք օժտված է նման վարքագիծ դրսևորելու լեգիտիմությամբ (հասարակական ճանաչման), չէ՞ որ նա իրավական համակարգ է ներմուծում այնպիսի կանոն (վեճը լուծում է այնպիսի կանոնի հիման վրա), որը, ոչ ավել, ոչ պակաս, հակադրվում է ժողովրդավարական լեգիտիմությամբ (հասարակական ճանաչմամբ) օժտված մարմնի սահմանած օրենսդրական կանոններին:

Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի համար հիմնարար նշանակություն ունեն ոչ միայն դատարանի լեգիտիմության, այլ նաև նրա սահմանած contra legem կանոնի լեգիտիմացման հարցերը: Նշված բարդ հարցերին պատասխանելու համար նախ պետք է նկարագրել ներկայացուցչական ժողովրդավարության և ներկայացուցչական մարմինների ընդունած օրենքների լեգիտիմության ժամանակակից վիճակը, այնուհետև՝ անդրադարձ կատարել դատարանների ընդհանուր լեգիտիմության հարցին, իսկ վերջում՝ contra legem դատական ակտի լեգիտիմացմանը: Բացի այդ, օրենքին հակառակ իրավունքը զարգացնելու դոկտրինի դեպքում արդյոք չի ստեղծվի մի իրավիճակ, երբ ժողովրդավարական լեգիտիմություն չունեցող դատարանը հանդես է գալիս որպես «սուվերեն», որը առաջին հայացքից ոչնչից (ex nihilo) բխեցնում է այնպիսի կանոն, որն հակադրվում է օրենքի կարգավորմանը, կամ այս դեպքում ժողովրդավարական պետությունն արդյոք չի վերաճի յուրոկրատիայի (Richterstaat) կամ «դատավորների պետության»: Այս հարցերի պատասխանը պահանջում է ներկայացնել նաև contra legem իրավունքի զարգացումը զսպելու կառուցակարգերը:

1.2. Քաղաքական դերակատարների լեգիտիմությունը և դատարանները

Հետխորհրդային դատարանները կոչված չեն հանրային-քաղաքական բնույթի լայնածավալ հարցերով (օրինակ՝ ընտանիքի կամ առողջապահության մոդելը, վերարտադրողականություն, սեռականություն և այլն) իրականացնել իրավունքի զարգացում, առավել ևս չեն կարող այդ հարցերում հակադրվել ընտրովի քաղաքական դերակատարներին: Վերջիններս ավանդաբար ունեն հաղթաթուղթ՝ ժողովրդավարական լեգիտիմություն (հասարակական ճանաչում), որն օգտագործում են դատարանների ակտիվությանը հակադրելու համար: Դեռևս 1962 թ. ամերիկացի հայտնի սահմանադրագետ Ա. Բիքելը «Իշխանության ամենաքիչ վտանգավոր ճյուղը. Գերագույն դատարանը քաղաքականության ոլորտում» վերտառությամբ հայտնի աշխատությունում, հետևելով Լինքոլնին, պնդում էր, որ այն ինչ որոշում է Դատարանը, չի համարվում որպես վերջնական «քաղաքական կանոն», քանի դեռ դա չի հաստատվել ընտրված ինստիտուտների և պաշտոնատար անձանց կողմից²: Նույնիսկ ԱՄՆ-ում, որտեղ Գերագույն դատարանն աչքի է ընկել իր դատական

² Տե՛ս **Alexander M. Bickel.**, The Least Dangerous Branch: The Supreme Court at the Bar of Politics. Yale University Press. New Haven and London, 1986, էջ 12:

ակտիվությամբ, քաղաքական հարցերով «եզրափակիչ խոսքի իրավունքը» դոկտրինալ հարթությունում վերապահվել է ընտրովի քաղաքական մարմիններին: Այնուամենայնիվ, XXI դարում քաղաքական դերակատարների ժողովրդավարական լեգիտիմության հաղթաթուղթը չունի նույն ընկալումը և նույն արժեքը, ինչ XX դարում էր (այս մասին հաջորդիվ):

Դատարանները թեև քաղաքական կյանքի (նեղ իմաստով) պրոակտիվ դերակատարներ չեն, սակայն նրանք հասարակության քաղաքական համակարգի սուբյեկտներ են, որոնք իրենց վերապահված ոլորտներում մշակում և իրականացնում են դատական քաղաքականություն: Դատական քաղաքականության սահմանները կախված են տվյալ համակարգում դատարանների և քաղաքական իշխանության մարմինների միջև հարաբերությունների կառուցման ավանդույթներից, դատարանների ակտիվության կամ ինքնասահմանափակման մշակույթից: Օրինակ՝ Ֆրանսիայում դատական համակարգի նկատմամբ առկա է ավանդական հակակրանք: Այսպես, 1964 թ. Շառլ դը Գոլը հայտարարեց. «Չկա դատական իշխանություն, որը չբխի Հանրապետության Նախագահից»: Նման հայտարարություն 1766 թ. արել է նաև Լյուդովիկոս XV-ը. «Միայն իմ թելադրանքով է, որ իմ դատարանները գոյություն ունեն և իշխանություն ունեն»³: Առ այսօր ֆրանսիացի մասնագետներից կարելի է լսել «մեղադրանքներ», որ դատարանները գործում են քաղաքական մարմինների դեմ. օրինակ՝ նրանք նշում են, որ դատավորը դարձել է հասարակության գործիք պետության դեմ, կամ դատարանն իրեն հռչակում է իրավունքների և ազատությունների պահապան և անհրաժեշտության դեպքում այդ գործառույթն իրականացնում է հենց քաղաքական իշխանության դեմ⁴: Ի տարբերություն Ֆրանսիայի՝ հետխորհրդային Ռուսաստանում, հաշվի առնելով պատմական առանձնահատկությունները⁵, քաղաքական դերակատարների կողմից դատարանների նկատմամբ որևէ հակակրանք դրսևորելու ավանդույթ չկա: Դրա պատճառը ոչ թե քաղաքական իշխանության կողմից դատարանների նկատմամբ ունեցած հարգանքն է, այլ այն, որ դատարանները, որպես կանոն, քաղաքական իշխանությանն առիթ չեն տվել «դժգոհելու» իրենցից: Ռուս մասնագետները նշում են. «Ռուս դատավորներն այլևս չեն ամաչում գործադիր իշխանություններից իրենց կախվածությունից, և դատական գործընթացի մեղադրական հակվածությունն ընկալվում է որպես օրենքի մեկնաբանման ստանդարտ մոտեցում»⁶: Հետխորհրդային Հայաստանում գործում է նույն

³ Матьё Б. Право против демократии?: монография, пер. с франц. М., Норма, 2021, с. 132.

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 134-135:

⁵ Տե՛ս Գамбарյան А. Развитие права советскими судьями вопреки закону (contra legem) // Судебная власть и уголовный процесс, 2023, № 2, էջ 7-26:

⁶ Легитимность права: коллективная монография, под общ. ред. Тонкова Е. Н., Честнова И. Л., Алетеия, 2019, с. 10.

տրամաբանությունը. ՀՀ դատարանները, բացառությամբ առանձին դեպքերի⁷, քաղաքական իշխանությանն իրենցից «դժգոհելու» առիթ նույնպես չեն տվել: Միայն 2018 թ. ՀՀ-ում տեղի ունեցած հեղափոխությունից հետո է, որ դատարաններն առաջացրին հեղափոխական իշխանության գայրույթը: Ժողովրդավարական բարձր լեգիտիմությամբ օժտված Վարչապետի և դատարանների այդ հակադրությունն ավարտվեց ՀՀ քաղաքական իշխանության «հաղթանակով»⁸. ՀՀ վարչապետի հրապարակային կոչով ՀՀ դատարանների շենքերը շրջափակելու և տարաբնույթ այլ հակաիրավական ճանապարհներով քաղաքական դերակատարները կարճ ժամանակում «հնազանդեցրին» ՀՀ դատարաններին: ՀՀ վարչապետը հպարտությամբ հայտարարեց. «Այսօր Հայաստանում կա՝ դատավոր, որ Վարչապետի ասածը կարող է չանել»⁹: Դատարանը, օրենքի կոնկրետ նորմին հակառակ իրավունքը զարգացնելով, չի վերածվում քաղաքական իշխանության ընդդիմության, քանի որ դատարանն իրավունքը կարող է *contra legem* զարգացնել ոչ թե հանրային-քաղաքական բնույթի լայնածավալ հարցերով, այլ առավելապես մասնագիտական (իրավաբանական) հարցերով (օրինակ՝ օրենքի մեկնաբանման կանոններ, նորմերի հակասությունների լուծման եղանակներ), այն էլ՝ «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի հիման վրա (այս մասին հաջորդիվ): Այս կապակցությամբ առարկայագուրկ են ռուս գիտնական Լ. Գոլովկոյի հետևյալ մտահոգությունները. «Դատավորները չեն կարող լինել գործող իշխանությունների ընդդիմությունը, հակառակ դեպքում դատավորները կարգելափակեն ինստիտուտների բնականոն գործունեությունը և կփոխեն իրենց տեսակը, քանի որ այդ դեպքում նրանք կիրականացնեն քաղաքական դերակատարություն, որի համար վերջիններս չունեն լեգիտիմություն»⁹: Քիչ հավանական է, որ հետխորհրդային դատարանը խիզախություն կունենա արգելափակելու գործող իշխանությունների բնականոն գործունեությունը, սակայն հակառակը ոչ միայն հնարավոր է, այլ նաև փաստ է: Ինչպես նշվեց, Հայաստանի նորագույն պատմությանը հայտնի է գործող քաղաքական իշխանությունների կողմից դատարանի գործունեությունը ուղիղ իմաստով արգելափակելու (դատարանների շենքերը շրջափակելու) դեպք: Այո՛, դատարաններն ըստ բնույթի չեն կարող (չպետք է) հանրային-քաղաքական նշանակություն ունեցող հարցերով հակադրվել հասարակության ընտրած ներկայացուցիչներին, սակայն պետք է նաև նկատի ունենալ, որ XXI դարում եվրոպական ներկայացուցչական ժողովրդավարությունը խորը

⁷ Տե՛ս **Ա. Ղամբարյան**, Վստահության հանրաքվե կազմակերպելու ՀՀ սահմանադրական դատարանի առաջարկը և քաղաքական իշխանության ինքնասահմանադրականացման բաց թողնված հնարավորությունը, Լրաբեր Հայ-ռուսական համալսարանի (հումանիտար և հասարակական գիտություններ), 2021, № 3 (39), էջ 84-96:

⁸ <https://factor.am/157111.html>

⁹ Суд и государство, под ред. Л.В. Головки, Б. Матьё, Статут, 2018, էջ 74:

ճգնաժամի մեջ է, քաղաքական դերակատարները շատ հարցերով քաղաքական որոշումներ կայացնելու իրենց իրավասությունը փոխանցել են ժողովրդավարությանը չառնչվող եղանակով ձևավորված մարմիններին (ինքնավար մարմիններ, փորձագետներ և այլն):

1.3. Ժողովրդավարական լեգիտիմության ճգնաժամը

Դատարանների լեգիտիմության, հատկապես դատարանների կողմից *contra legem* իրավունքի զարգացման լեգիտիմության հարցերը պետք է քննարկել ներկայացուցչական ժողովրդավարության (ժողովրդավարական լեգիտիմության) ճգնաժամի համատեքստում: Ռուս¹⁰, անգլիացի¹¹, ֆրանսիացի¹², գերմանացի¹³ մասնագետները հայտարարում են ներկայացուցչական ժողովրդավարության ճգնաժամի՝ ընտրությունների և ներկայացուցչական ժողովրդավարության նկատմամբ հասարակության վստահության կորստի, ներկայացուցչական լեգիտիմության կորստի մասին:

Ինչքան էլ ցանկալի չէ, այնուամենայնիվ ներկայացուցչական ժողովրդավարության ճգնաժամը ճանապարհ է հարթում այնպիսի ինստիտուտների (ինքնավար վարչական մարմինների, դատարանների, գիտնականների, փորձագետների և այլն) համար, որոնք իրենց լեգիտիմությունը բխեցնում են ոչ թե ժողովրդի ֆիկտիվ կամքից, այլ ուրիշ ակունքներից (ազնվությունից, իրավունքի այլ սկզբունքներից, անկախությունից, պրոֆեսիոնալիզմից և այլն): Այս հարցում հետաքրքիր է Բերտրան Սաթյոյի՝ 2017 թ. Ֆրանսիայում հրատարակված աշխատանքը, որտեղ հեղինակը հանգամանալից ներկայացնում է, որ ներկայացուցչական ժողովրդավարությունը խորը ճգնաժամի մեջ է, քանի որ մի կողմից՝ քաղաքական իշխանությունը կորցրել է քաղաքական որոշումներ կայացնելու ունակությունը, մյուս կողմից՝ հասարակությունը զրկվել է քաղաքական որոշումների կայացման համար անհրաժեշտ հասարակական քննարկումներ (դեբատներ) կազմակերպելու կամ մասնակցելու հնարավորությունից:

Նախ ըստ Բ. Սաթյոյի եվրոպական ժողովրդավարության ճգնաժամի հիմնական պատճառներից մեկն այն է, որ եվրոպական հասարակությունները պետք է ենթարկվեն իրավական նորմերին, որոնց հիմնական մասը սահմանվում է այնպիսի մարմինների կողմից, որոնք ստեղծվում են ժողովրդավարության հետ առնչություն չունեցող կարգով: Օրինակ՝ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողովը), որի անվանման մեջ թեև օգտագործվում է «ժողովր-

¹⁰ Տե՛ս **Мальцев Г.В.**, Социальные основания права. М., Норма, 2011, էջ 749, **Денисенко В.В.**, Кризис позитивного права в условиях общественной модернизации // Кризис права: история и современность: монография / под общ. ред. В. В. Денисенко, М. А. Беляева, Е. Н. Тонкова., СПб., Алетейя, 2023, էջ 98-100:

¹¹ Տե՛ս **Крауч К.** Постдемократия. Пер. с англ. 2-е изд. М.: Издательский дом НИУ ВШЭ, 2023:

¹² Տե՛ս **Матьё Б.** Право против демократии?: монография. Пер. с франц. М., Норма, 2021:

¹³ Տե՛ս **Хёффе О.** Есть ли будущее у демократии? О современной политике. Пер. с нем. М., Дело, 2015:

դավարություն» ձևակերպումը, և որը տարածում է ժողովրդավարական գաղափարներ, հետապնդում է գաղափարախոսական նպատակներ, սակայն նրա անդամները ենթարկվում են այնպիսի կանոնների, որոնք ժողովրդավարության հետ որևէ կապ չունեն¹⁴։ Ի դեպ, նույնը կարելի է ասել նաև հետխորհրդային տարածքում գործող ԵԱՏՄ տնտեսական հանձնաժողովի մասին, որի ձևավորմանն անդամ պետությունների հասարակությունները մասնակցություն չունեն, սակայն այդ հանձնաժողովը կարող է սահմանել նորմատիվ բնույթի վարքագծի կանոններ, որոնք անմիջապես պարտականություններ են սահմանում անդամ պետությունների ֆիզիկական և իրավաբանական անձանց համար։ Ընդ որում, այդ հասարակությունների համար ԵԱՏՄ տնտեսական հանձնաժողովի նորմատիվ ակտերը հասանելի չեն, նրանք տեղեկացված չեն այդ ակտերի ընդունման կարգի մասին, ուստի պատահական չէ, որ այդ մարմինը և նրա սահմանած ակտերը տառապում են ժողովրդավարական լեգիտիմության դեֆիցիտով։

Երկրորդ ըստ Բ. Մաթոյի՝ Եվրոպայում քաղաքական իշխանությունները կորցրել են քաղաքական որոշումներ կայացնելու հնարավորությունը, և նրանց հետ մրցակցում են ժողովրդավարական ներկայացուցչական լեգիտիմություն չունեցող, սակայն մտավոր, մասնագիտական և ֆինանսական կարողությունների հաշվին լեգիտիմություն ձեռք բերած մարմինները։ Նա նշում է. *«Ժողովրդի կամքն այլևս քաղաքական որոշումների կայացման համար շարժիչ գործոն չէ ոչ թե այն պատճառով, որ քաղաքական գործիչները կոռումպացված են կամ հավատարիմ չեն իրենց խոստումներին, այլ այն պատճառով, որ նրանք հիմնականում կորցրել են որոշումներ կայացնելու իշխանությունը։ Ժողովրդավարական ճգնաժամի հիմնական պատճառներից մեկը ժողովրդի կամքի արտահայտման և քաղաքական իշխանության կողմից կարևոր որոշումների ընդունման միջև կապի բացակայության գիտակցումն է։ Եվ դա տեղի է ունենում ոչ թե այն պատճառով, որ այս իշխանությունը վերստեղծվել է պետությունից դուրս, այլ որովհետև այդ իշխանությունը զուրկ է քաղաքական տրամաբանությունից և պատկանում է իրավական, տնտեսական և ֆինանսական «օլիգարխներին», որոնք զրկված են ցանկացած ժողովրդավարական լեգիտիմությունից, բայց գիտելիքի, ուժի, իրավասության, գույքի կամ տեղեկատվության առկայության շնորհիվ իրենց վերագրում են լեգիտիմություն»¹⁵։* Քաղաքական իշխանությունները ստեղծել են այնպիսի իրականություն, որտեղ քաղաքական գործիչների լուծման ենթակա մի շարք ոլորտներ փաստացի փոխանցվել (զիջվել) են ինքնավար (անկախ) մարմիններին (օրինակ՝ ինքնավար վարչական մարմիններին, դատարաններին, փորձագետներին) կամ ոչ պետական խոշոր կազմակերպություններին (օրինակ՝ GAFA-ին - Google,

¹⁴ Տե՛ս Матё Б. նշվ. աշխ., էջ 78, 81, 91։

¹⁵ Նույն տեղում, էջ 95։

Apple, Facebook և Amazon): Բ. Մաթյոն և Օ. Հյոֆեն քննադատում են այս իրավիճակն այն հիմնավորմամբ, որ քաղաքական որոշումներ կայացնելու իրավունքը «գիտականերին» փոխանցելը հանգեցնում է օլիգարխիկ իշխանության հաստատման¹⁶ կամ էքսպերտոկրատիայի¹⁷, մինչդեռ ժողովրդավարությունը պահանջում է, որ տեխնիկական, տեխնոկրատական, վարչական իշխանությունը և փորձագետների իշխանությունը ենթարկվեն քաղաքական իշխանությանը: Այս դատողություններից կարելի է հետևություն անել, որ եվրոպական ժողովրդավարության ճգնաժամի հիմնական պատճառները թաքնված են այն օբյեկտիվ իրականության մեջ, որի ստեղծմանը քիչ չէ նաև արևմտյան քաղաքական գործիչների մասնակցությունը: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ եվրոպական ժողովրդավարությունն ինքն է հրաժարվել քաղաքականությունից. դա տեղի է ունեցել քաղաքական գործիչների շնորհիվ կամ նրանց գիտությամբ: Չէ՞ որ այդ քաղաքական գործիչներն են վերջին տարիներին վերապետական կամ ոչ պետական կազմակերպություններին փաստացի հնարավորություն տվել, որ նրանք անդամ պետության հասարակությունների համար սահմանեն վարքագծի այնպիսի կանոններ, որոնց ընդունման կարգը ժողովրդավարական լեգիտիմության հետ որևէ առնչություն չունի: Բացի այդ, եվրոպական քաղաքական գործիչները տարբեր փոքրամասնությունների զգացմունքներն իբրև թե հարգելու նպատակով ընդունել են այնպիսի օրենքներ, որոնք փաստորեն քաղաքականությունից դուրս են մղել հանրային նշանակություն ունեցող հարցերով քաղաքական (ինտելեկտուալ) դեբատներ վարելու գործիքը¹⁸: Այդ քաղաքական գործիչներն իրենք իրենց զրկել են հանրային-քաղաքական բնույթի լայնածավալ հարցերով (օրինակ՝ ընտանիքի մոդել, առողջապահության մոդել, վերարտադրողականություն, սեռականություն և այլն) քաղաքական բանավեճեր վարելու հնարավորությունից: Մա էլ իր հերթին պարարտ հող է ստեղծել դեմագոգիայի տարածման և ինտելեկտուալ քաղաքական գործիչներին պոպուլիստներով փոխարինելու համար. չէ՞ որ պոպուլիստները (դեմագոգները) ձգտում են ուղղակի հարաբերվել ժողովրդի հետ, ավելի ճիշտ՝ խաղալ ժողովրդի զգացմունքների, նրանց կոլեկտիվ բնագոյների հետ: Ընդ որում, ամերիկացի քաղաքագետ Ջ. Բժեզինսկին նշում է. «Նախկինում երբեք պոպուլիստական ժողովրդավարությունը չի հասել միջազգային գերակայության»¹⁹: Պոպուլիստը կխուսափի ռացիոնալ քաղաքական դեբատներին մասնակցելուց: Միգուցե նաև հենց պոպուլիստներն են ստեղծել այս իրավիճակը, որպեսզի իրենք իրենց առավել հարմարավետ (կոմֆորտ)

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 68:

¹⁷ Տե՛ս **Хёффе О.** նշվ. աշխ., էջ 277:

¹⁸ Տե՛ս **Джонатан Р.** Добрые инквизиторы. Власть против свободы мысли. Пер. с. англ. М.: 2020:

Արդյոք դատական սանկցավորումը *յուրիսդիկցիոն* դատական վերահսկողություն է, թե՞ ոչ: Այս հարցի պատասխանը կախված է այն բանից, թե քննչական գործողությունների դատական սանկցավորումը արդյոք իրականացվում է արդարադատության ձևով, թե ոչ: Հայ դատավարագետներն այս կապակցությամբ նշում են. «Թեև դատական վերահսկողության իրականացման դատավարական կարգը նմանություններ ունի քրեական արդարադատության դատավարական կարգի հետ (այն ընթանում է դատական նիստում, դատավորը կարող է լրացուցիչ նյութեր պահանջել, որոշ դեպքերում առկա է մրցակցություն և այլն), սակայն քրեական արդարադատության և նախնական դատական վերահսկողության դատավարական ձևի որոշ տարրերի նմանությունը չի վերացնում նրանց դատավարական կարգի միջև եղած էական տարբերությունները: Դատական վերահսկողության և քրեական արդարադատության դատավարական կարգի միջև առկա նմանությունները հիմք են տալիս պնդելու ոչ թե արդարադատության ձևով դատական վերահսկողություն իրականացնելու մասին, այլ առավելագույնը՝ նախաքննության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս արդարադատության դատավարական ձևի որոշ տարրի առկայության մասին»¹³:

Քննչական գործողությունների դատական սանկցավորման (նախնական դատական վերահսկողության) վարույթում բացակայում է իրավական վեճը, բացակայում են վիճող կողմերը, ուստի քննչական գործողությունների նկատմամբ նախնական դատական վերահսկողությունը չի կարելի համարել յուրիսդիկցոն, ուստի այն քրեադատավարական իրավունքի ճյուղի տեսանկյունից չի կարելի

¹² Ст. у Адильшаев Э.А., Жеребятsev И.В., Шамардин А.А. Судебное санкционирование как форма реализации правосудия в уголовном судопроизводстве России: монография. М., 2013, էջ 26:

¹³ Ա. Ղամբարյան, Հ. Ավետիսյան, Արդարադատությունը և դատական վերահսկողությունը քրեական դատավարությունում // Օրինականություն, 2006, № 37, էջ 31-34:

համարել նաև արդարադատության ձևով իրականացվող վերահսկողություն:

Այսպիսով՝ քրեական դատավարության գիտության մեջ արդարադատությունը և դատական վերահսկողությունը դիտվում են դատարանի առանձին գործառույթներ: Դոկտրինայ այս մոտեցումը իր ազդեցությունն է թողել նաև օրենսդրության վրա:

ՀՀ քր. դատ. օր.-ում արդարադատությունը և դատական վերահսկողությունը (դատական երաշխիքների վարույթը) որպես կանոն ներկայացվում են որպես դատարանի առանձին գործառույթներ: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս կամ դատական այլ երաշխիքներ ապահովելիս դատավորը պարտավոր է լինել և երևալ անկողմնակալ: Ինչպես նկատում ենք, Օրենսդիրը քրեական արդարադատության իրականացումը և դատական երաշխիքների ապահովումը (մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը) դիտել է որպես դատարանի ինքնուրույն գործառույթներ:

Արդարադատության և դատական վերահսկողության գործառույթների տարանջատման՝ Օրենսդրի այս մոտեցումը վերաբերում է քրեական դատավարությանը, սակայն դա չի նշանակում, որ նույն մոտեցումը պարտադիր պետք է ցուցաբերել նաև սահմանադրական և վարչական դատավարություններում:

2.3. Սահմանադրական արդարադատությունը և դատական սահմանադրական վերահսկողությունը

ԽՍՀՄ փլուզումից հետո սահմանադրական իրավունքի գիտությունում, «սահմանադրական վերահսկողություն» հասկացությանը զուգահեռ, աստիճանաբար ներմուծվեց նաև «սահմանադրական արդարադատություն» եզրույթը: Խորհրդային ժամանակաշրջանում «արդարադատություն» եզրույթը գործածվում էր բացառապես քրեական և քաղաքացիական վեճերի կապակցությամբ, որտեղ լուծվում էր սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության հարց: Որոշ իրավագետներ կարծում են, որ սահմանադրական դատարանների նորմավերահսկողությունը չի կարող համարվել արդարադատություն, քանի որ այդ գործառույթի շրջանակներում լուծվում է ոչ թե սուբյեկտիվ իրավունքի, այլ օբյեկտիվ իրավունքի պաշտպանության հարց, ուստի այդ գործառույթը չի կարող համարվել արդարադատություն: Օրինակ՝ Վ. Ա. Ռժևսկին և Ն. Մ. Չեպուրնովան անթույլատրելի են համարում «սահմանադրական արդարադատություն» եզրույթն օգտագործել դատական սահմանադրական վերահսկողության իմաստով: Նրանց կարծիքով՝ «սահմանադրական արդարադատություն» հասկացությունը կարելի է օգտագործել միայն անուղղակի դատական վերահսկողության դեպքում, երբ ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիների և կազմակերպությունների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության վերաբերյալ գործերով վիճարկվում է կոնկրետ նորմատիվ

իրավական ակտերի սահմանադրականությունը՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու պատճառաբանությամբ: Տվյալ դեպքում ընդհանուր իրավասության դատարանը կոնկրետ գործով իրավակիրառ որոշում կայացնելիս պարզապես չի կիրառում հակասահմանադրական նորմը, սակայն այդ նորմը անվավեր չի ճանաչում: Մյուս բոլոր դեպքերում, երբ սահմանադրաիրավական հարցերը կապված են կոնկրետ գործի հետ, այսինքն՝ երբ անմիջականորեն չի շոշափվում կոնկրետ սուբյեկտիվ իրավունք, ապա տեղի է ունենում ոչ թե սահմանադրական արդարադատություն, այլ դատական սահմանադրական վերահսկողություն¹⁴: Նման դեպքերում դատարանի որոշումներն ունեն նորմատիվ (համապարտ) բնույթ:

Այսպիսով, արդարադատության և սահմանադրական դատական վերահսկողության տարբերակման կողմնակիցները իրենց մոտեցումների հիմքում դնում էին դատական պաշտպանության անմիջական առարկան՝ սուբյեկտիվ կամ օբյեկտիվ իրավունքը: Ըստ այդմ, արդարադատության իրավաբանական բնույթը անհատական-կարգավորիչ է, քանի որ դատական գնահատման առարկան սուբյեկտիվ իրավունքի վերաբերյալ վեճն է, իսկ դատական սահմանադրական վերահսկողությունը՝ նորմատիվ - պահպանիչ բնույթի է, քանի որ դատական որակման առարկան օբյեկտիվ իրավունքի վերաբերյալ վեճն է¹⁵:

Անկասկած, արդարադատությունը բացառապես որպես սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության ձև դիտարկելը ոչ միայն աղքատացնում է այս գործառնության բովանդակությունը, այլև չի համապատասխանում ժամանակակից իրավակարգավորումներին: Սահմանադրական իրավունքի ժամանակակից դոկտրինում «արդարադատություն» եզրույթը կիրառվում է նաև սահմանադրական դատավարության կարգով լուծվող սահմանադրաիրավական վեճերի նկատմամբ¹⁶: Երբեմն ուղիղ նշվում է, որ սահմանադրական արդարադատությունը ակտերի սահմանադրականության նկատմամբ դատական վերահսկողության անմիջական ձև է, սակայն այս մոտեցման կողմնակիցները սահմանադրական արդարադատության մաս են համարում ոչ միայն սահմանադրական դատավարությունը, այլ նաև սահմանադրական դատարանակազմությունը¹⁷:

Ն. Վ. Վիտրուկը նշում է, որ սահմանադրական արդարադատության բովանդակությունը սահմանադրական վերահսկողությունն է, իսկ ձևը՝ դատավարությունը: Ընդ որում, նա դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտ է համարում ոչ միայն նորմատիվ իրավական ակտերը, այլ նաև

¹⁴ Տե՛ս **Ржевский В.А., Чепурнова Н.М.** Судебная власть в Российской Федерации: конституционные основы организации и деятельности. М., Юрист, 1998:

¹⁵ Տե՛ս **Дмитриев В. В.** Судебный конституционный контроль и правосудие: проблемы соотношения // Вестник РУДН. Серия: Юридические науки. 2004, №1, էջ 142-143:

¹⁶ Տե՛ս **Конституционный судебный процесс: учебник / С. В. Нарутто, С. Э. Несмеянова, Е. С. Шугрина.** М.: Норма : ИНФРА-М, 2014, էջ 16:

¹⁷ Տե՛ս **Конституционный судебный процесс: учебник / Отв. ред. Саликов М.С. М., 2003, էջ 10-11:**

պետական իշխանության մարմինների որոշումները և գործողությունները: Սահմանադրական արդարադատությունը սահմանադրական վերահսկողության բարձրագույն ձևն է¹⁸:

Այս մոտեցմանն ընդհանուր առմամբ պետք է համաձայնվել, սակայն պետք է հստակեցնել, թե վերահսկողության որ տեսակի մասին խոսքը: Բանն այն է, որ ընդհանուր իրավասության դատարանները քրեական, քաղաքացիական կամ վարչական գործերով արդարադատության շրջանակներում կարող են իրականացնել անուղղակի սահմանադրական դատական վերահսկողություն, այսինքն՝ չկիրառեն այն նորմատիվ իրավական ակտը (անուղղակի դատական վերահսկողություն), որը, իրենց կարծիքով, հակասում է Սահմանադրությանը (սույն դեպքում չենք քննարկում դատարանների կողմից նման դեպքերում Սահմանադրական դատարան դիմելու պարտականության կամ հայեցողության հարցը): Ուստի պետք է նշել, որ սահմանադրական արդարադատություն իրականացվում է բացառապես սահմանադրական դատավարության ձևով: Քրեական, վարչական կամ քաղաքացիական դատավարության շրջանակներում սահմանադրական արդարադատություն չի կարող իրականացվել¹⁹:

Այս մոտեցումը պետք է կիրառել նաև վարչական արդարադատության և նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության հարցերի դեպքում:

3. Վարչական արդարադատությունը և դատական վերահսկողությունը ՀՀ վարչական դատավարությունում

3.1. Ընդհանուր դրույթներ

Վարչական դատավարության գիտության մեջ օգտագործվում են «վարչական դատավարություն», «վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ», «վարչական արդարադատություն», «դատական վերահսկողություն» և «նորմավերահսկողություն» հասկացությունները, որոնց հարաբերակցությունը հստակեցման կարիք ունի:

3.2. Վարչական դատավարության և վարչական արդարադատության հասկացությունը և սահմանները

Ինչպես նշվեց, վարչական իրավունքի գիտության մեջ դեռևս հանդիպում են վարչական դատավարությունը և վարչական արդարադատությունը նույնացնելու վերաբերյալ մոտեցումներ²⁰: ՀՀ վարչադատավարական օրենսդրության տե-

¹⁸ Տե՛ս **Витрук Н.В.** Конституционное правосудие. Судебно-конституционное право и процесс: учеб. Пособие. 2-е изд., перераб. и доп., М., Юрист, 2005, էջ 50-51:

¹⁹ Տե՛ս **Ռ. Խանդանյան**, նշվ. աշխ., էջ 39-47:

²⁰ Տե՛ս **Семенихина А. Ю.** Развитие административной юстиции в России: теоретические, правовые и организационные аспекты: дисс. ... канд. юрид. наук. М., 2016, էջ 9:

ասանկյունից հիմքեր չկան պնդելու, որ վարչական դատավարությունը և վարչական արդարադատությունը համընկնում են: Դրանք ոչ թե նույնաբովանդակ հասկացություններ են, այլ հարաբերակցվում են որպես ամբողջը և մասը: Ընդունելի է գրականության մեջ առկա այն մոտեցումը, ըստ որի՝ «վարչական արդարադատություն» և «վարչական դատավարություն» հասկացությունները չեն համընկնում: Վարչական արդարադատությունը դատավարական-իրավական կարգավորման տեսանկյունից վարչական դատավարության տեսակ է²¹:

Վարչական դատավարություն ասելով կարելի է հասկանալ *յուրիսդիկցիոն և ոչ յուրիսդիկցիոն* իրավաբանական ընթացակարգեր, որոնց շրջանակներում լուծվում են տարաբնույթ իրավական վեճեր, կամ իրականացվում է նախնական վերահսկողություն վարչական մարմինների գործունեության նկատմամբ:

ՀՀ վարչական դատավարությունում *յուրիսդիկցիոն* իրավաբանական վարույթի շրջանակում լուծվում են մասնավոր անձի և վարչական մարմնի կամ վարչական մարմինների (պետական մարմինների) միջև վեճերը:

Մասնավոր անձի և վարչական մարմնի միջև *յուրիսդիկցիոն* իրավաբանական վարույթները վերաբերում են այն դեպքերին, երբ՝

1) ֆիզիկական կամ իրավաբանական անձը վարչական դատավարությունում վիճարկում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտի, գործողության կամ անգործության իրավաչափությունը (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 3-րդ հոդվածի 1-ին մաս, 1.1.-րդ մաս, 1.2.-րդ մաս),

2) վարչական մարմինը դիմում է ՀՀ վարչական դատարան վարչական դատավարության կարգով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու, որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր):

Վարչական մարմինների (պետական մարմինների) միջև *յուրիսդիկցիոն* իրավաբանական վարույթը վերաբերում է այն դեպքերին, երբ՝

1) մի վարչական մարմին դիմում է ՀՀ վարչական դատարան ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ իրավասության վերաբերյալ վեճը վարչական դատավարության կարգով լուծելու պահանջով (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ),

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք դիմում են ՀՀ վարչական դատարան ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 3-րդ հոդվածի 3-րդ մաս):

²¹ Տե՛ս Բ. Տեր-Թովմասյան, Վարչական արդարադատության ինստիտուտը վարչական իրավունքի համակարգում: Իրավ. գիտ. թեկնած.ատենախոսություն, 2008, էջ 86-87:

Օրենսդիրը 2022 թ. ՀՀ վարչական դատավարության շրջանակներում ներառել է նաև ոչ յուրիսդիկցիոն իրավաբանական վարույթներ, որտեղ լուծվում են ոչ թե իրավական վեճեր, այլ վարչական մարմինների գործողությունների նկատմամբ իրականացվում է նախնական դատական վերահսկողություն: Խոսքը ՀՀ վարչական դատարանի նախնական թույլտվությամբ (սանկցիայով) բանկերում և ֆինանսական այլ կազմակերպություններում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները ստանալու մասին է: Այսպես՝ ՀՀ վարչական դատարանը նախնական դատական վերահսկողություն է իրականացնում հարկային մարմինների գործունեության նկատմամբ հետևյալ հարցերով՝

1) ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա բանկերում և ֆինանսական այլ կազմակերպություններում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հարկման նպատակով ստանալը (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 3-րդ հոդվածի 6-րդ մաս),

2) հարկային հսկողության շրջանակում օրենքով պահպանվող բանկային գաղտնիք համարվող տեղեկություն ստանալը (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 3-րդ հոդվածի 7-րդ մաս):

Այսպիսով՝ ՀՀ վարչական դատավարության կարգը ներառում է տարբեր ընթացակարգեր, որոնց շարքում առանձնանում են մասնավոր անձանց կողմից ՀՀ վարչական դատավարության կարգով վարչական մարմնի ակտերի (որոշումների, գործողությունների և անգործության) օրինականությունը վիճարկելու ընթացակարգը (վարչական արդարադատություն) և մասնավոր անձին ՀՀ վարչական դատավարության կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը:

3.3. Վարչական արդարադատության և վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթի հարաբերակցությունը

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն դատարանը: Վարչական դատավարության կարգով մասնավոր անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթն արդյո՞ք համարվում է վարչական արդարադատություն:

Վարչական արդարադատության էությունն այն է, որ մասնավոր անձը դատական կարգով վիճարկում է վարչական մարմնի ակտի իրավաչափությունը, ուստի դատարանի կողմից անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթը չի կարող համարվել վարչական արդարադատություն:

Վարչական արդարադատության և վարչական պատասխանատվության

ենթարկելու (վարչական իրավախախտումների) վերաբերյալ վարույթի հարաբերակցությունը թեև ինքնին պարզ է, սակայն երբեմն փորձ է արվում վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը կապել վարչական արդարադատության հետ: Այսպես՝ 18.06.1998 թ. ընդունված «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի (չի գործում) 3-րդ հոդվածում սահմանված էր, որ արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է՝ «...վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և լուծելու միջոցով»: Պրոֆեսոր Գ. Դանիելյանը, վերլուծելով այս դրույթը, նշում է, որ գործող օրենսդրությունը վարչական արդարադատությունը ներառում է «վարչական իրավախախտումների գործեր քննելու և լուծելու» գործընթացը²², այնուհետև քննադատում է Օրենսդիրն այն բանի համար, որ «վարչական արդարադատություն» հասկացության մեջ ներառել է վարչական իրավախախտումների գործեր քննելու և լուծելու գործընթացը: Իրականում չկա որևէ հիմք պնդելու, որ 1998 թ. Օրենսդիրը «վարչական արդարադատություն» հասկացության մեջ ներառել է նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը: Բանն այն է, որ 18.06.1998 թ. ընդունված «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքում «վարչական արդարադատություն» եզրույթը չէր գործածվում, ուստի հարգարժան գիտնականը հերքում է մի բան, որը իրականում օրենսդիրը չի պնդել: Նշված օրենքում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և լուծելու կարգը չի որակվել որպես վարչական արդարադատություն: Այդ օրենքում «վարչական արդարադատություն» հասկացությունը չէր գործածվում:

Եթե վերացարկվենք օրենքի կարգավորման վերաբերյալ Գ. Դանիելյանի նկատառումներից, ապա անկասկած գիտնականը իրավացի է, երբ նշում է, որ այդ գործընթացը ոչ մի առնչություն չունի վարչական արդարադատության տեսության հետ: Այս առումով ՀՀ վարչական դատավարությունում վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը չի համարվում վարչական արդարադատություն:

Այսպիսով՝ վարչական դատավարությունը՝ որպես պետական գործունեություն, լայն հասկացություն է, որը ներառում է ինչպես վարչական արդարադատությունը, այնպես էլ մասնավոր անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթը:

Այժմ անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե «վարչական արդարադատություն» հասկացությունն արդյոք ներառում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողությունը: Ինչպես նշվեց, սահմանադրական և համատեսական հարթություններում «արդարադատություն» եզրույթը ներառում է նաև դատական վերահսկողությունը:

²² Տե՛ս Գ. Դանիելյան, Վարչական արդարադատության հասկացության բնորոշման նախադրյալները // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2004, № 1 (112), էջ 8:

3.4. Վարչական արդարադատությունը և դատական վերահսկողությունը

3.4.1. Վարչական արդարադատության և դատական վերահսկողության հարաբերակցությունը

Ցարական Ռուսաստանի դոկտրինում (բացառությամբ առանձին գիտնականների, օրինակ՝ Ն. Կորկունովի) տարածված էր այն մոտեցումը, որ վարչական արդարադատության օբյեկտ են համարվում վարչական իշխանության անօրինական կարգադրությունները (распоряжений), իսկ վարչական կարգադրություն ասելով առավելապես հասկացվում էին անհատական և կոնկրետ նորմերը²³։ Ասվածը նշանակում է, որ պատմական առումով վարչական արդարադատության շրջանակներում դատական ստուգման օբյեկտ է համարվել անհատական իրավական ակտը, սակայն հետագայում դոկտրինալ առումով վարչական արդարադատության բովանդակությունը հարստացվեց, և ճանաչում ստացավ այն մոտեցումը, որ դատական ստուգման օբյեկտ կարող են համարվել նաև նորմատիվ իրավական ակտերը (այս մասին հաջորդիվ)։ Օրինակ՝ 1973 թվականին հրապարակված վարչական արդարադատության մասին առաջին աշխատանքում նշվում էր, որ վարչական արդարադատության որոշ համակարգերում թույլատրվում է միայն այնպիսի վեճերի քննությունը, որտեղ բարձրացվում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հարց, իսկ մյուսներում (Ֆրանսիա, Գերմանիա) նախատեսված են նաև կառավարման մարմինների ընդունած նորմատիվ ակտերի օրինականության վիճարկման հնարավորություն²⁴։ Այսինքն՝ վարչական արդարադատության օբյեկտը ոչ միայն անհատական, այլ նաև նորմատիվ իրավական ակտերն են։ Ընդհանուր առմամբ, ներկայումս վեճերի տեղիք չի տալիս այն մոտեցումը, որ վարչական արդարադատությունը ներառում է նաև նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողությունը։

Դատարաններին նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ վերահսկողության գործառույթ վերապահելը էապես փոխեց դատարանների տեղը և դերը հասարակության քաղաքական համակարգում, իշխանության տարանջատման համակարգում։ ԽՍՀՄ փլուզումից հետո պրոֆեսոր Մ. Սավիցկին նշեց. «Իրական դատական իշխանությունը կարող է առաջանալ դատարանի կողմից որակապես նոր գործառույթներ ձեռք բերելու արդյունքում, ոչ մի դեպքում չի սահմանափակվում այն փաստով, որը նախկինում սովորաբար կոչվում էր արդարադատություն։ Զսպումների և հակակշիռների համակարգի համատեքստում դատական իշխանությանը բնութագրում է ոչ այնքան արդարադատությունը (ավանդական իմաստով), որքան օրենսդիր և գործադիր իշխանությունների որոշման և գործողությունների վրա ակտիվ ազդեցություն

²³ Տե՛ս Գессен В. М. Основы конституционного права. Изд. 2-е. Петроград: 1918, <https://constitution.garant.ru/>

²⁴ Տե՛ս Чечот Д. М. Административная юстиция. Теоретические проблемы. Л., Изд. Ленингр. ун-та, 1973, էջ 30:

ունենալու, «դրանք հավասարակշռելու» իրավական հնարավորությունը»²⁵:

Վարչական իրավունքի մեկ այլ մասնագետ նշում է. «Նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը դատական իշխանության՝ պետական իշխանության այլ ճյուղերի՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա ազդեցության հիմնական ձևերից մեկն է: Դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտերի ստուգումը իշխանության տարանջատման մեխանիզմում զսպումների և հակակշիռների ապահովման կարևոր գործիք է: Նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը օրենսդիր իշխանություններին «հակաիրավական» օրենքներ ընդունելու փորձերը «զսպելու» ամենակարևոր միջոցն է: Մյուս կողմից, գործադիր մարմինների նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատարանի վերահսկողությունը թույլ է տալիս նրանց գերծ պահել ապօրինի, լիազորությունների անցմամբ իրականացվող նորմաստեղծ գործունեությունից»²⁶:

Ինչպես նշվեց, վարչական արդարադատությունը ներառում է նաև նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը, սակայն այս հարցում պետք է կատարել կարևոր ճշգրտում. «վարչական արդարադատություն» հասկացությունը ներառում է միայն ենթաօրենսդրական իրավական ակտերի օրինականության նկատմամբ ուղղակի դատական վերահսկողությունը: Անուղղակի դատական վերահսկողությունը վարչական արդարադատություն չէ²⁷: Ռուս տեսաբանները նույնպես նշում են, որ վարչական արդարադատություն է համարվում միայն դատարանի ուղղակի վերահսկողությունը²⁸: Անուղղակի դատական վերահսկողությունը դուրս է վարչական արդարադատության ծավալներից, քանի որ այն հիմնականում իրականացվում է ոչ թե վարչական դատավարության կարգով, այլ քրեական կամ քաղաքացիական դատավարություններում, երբ դատավորը լուծում է կոնկրետ քրեական կամ քաղաքացիական գործեր:

3.4.2. Ուղղակի և անուղղակի դատական վերահսկողությունը

Դատավարագիտության մեջ առանձնացվում են նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ ուղղակի (անմիջական) և անուղղակի (միջնորդավորված) դատական վերահսկողության տեսակները²⁹: Ուղղակի

²⁵ Савицкий В. М. Организация судебной власти в Российской Федерации: учеб. пособие. М., 1996, с. 29

²⁶ Старилов Ю.Н. Судебный нормоконтроль как способ обеспечения законности публичного управления // Юридические записки (научно-практический журнал), 2014, № 4, с. 27.

²⁷ Տե՛ս Բ. Տեր-Թովմասյան, Վարչական արդարադատության ինստիտուտը վարչական իրավունքի համակարգում: Իրավ. գիտ. թեկնած. ատենախոսություն: 2008, էջ 8, Թ. Խանդանյան, Վարչական արդարադատությունը հետխորհրդային երկրներում. կայացման և զարգացման հիմնախնդիրները: Մենագրություն: Եր., 2012:

²⁸ Տե՛ս Боннер А.Т. Применение нормативных правовых актов в гражданском процессе: автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 1980 // Избранные труды: в 7 т. Т. II. Источники гражданского процессуального права. М., Проспект, 2017, էջ 74:

²⁹ Տե՛ս Боннер А. Т., Квиткин А. Т. Судебный контроль в области государственного управления. М.,

վերահսկողության դեպքում դատական վարույթը նախաձեռնվում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը և օրինականությունը ստուգելու նպատակով, որի արդյունքում իրավասու դատարանը վիճարկվող նորմատիվ իրավական ակտը (վիճարկվող դրույթը) ճանաչում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին հակասող և անվավեր կամ դրան համապատասխանող:

Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության և օրինականության նկատմամբ ուղղակի դատական վերահսկողություն իրականացնում են ՀՀ սահմանադրական դատարանը և ՀՀ վարչական դատարանը:

Անուղղակի վերահսկողության դեպքում դատարանը քրեական կամ քաղաքացիական վեճը լուծելիս եզրակացնում է, որ կիրառման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հակասում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին, և այդ պատճառաբանությամբ հրաժարվում է այն կիրառել:

Հայ և ռուս տեսաբանները ուղղակի և անուղղակի դատական վերահսկողության տեսակները անվանում են լայն և նեղ իմաստով դատական վերահսկողություն: Այսպես, նրանք նշում են. «Նեղ առումով դատական վերահսկողությունը ի հայտ է գալիս այն դեպքում, երբ կառավարման մարմնի ակտերը դատարանի կողմից հատուկ ուսումնասիրվում է օրինականության տեսանկյունից՝ նրանց գործողությունների օրինականության հաստատման համար շահագրգիռ անձանց և կառավարման մարմինների դիմումների հիման վրա: Ինչ վերաբերում է լայն իմաստով՝ ակտերի (գործողությունների) օրինականության նկատմամբ դատական վերահսկողությանը, ապա դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ այս կամ այն ակտի (գործողության) օրինականությունը չի հանդիսանում դատարանի հատուկ քննության առարկա, այլ ուսումնասիրվում է դատարանի իրավասությանը վերագրված ցանկացած քաղաքացիական և քրեական գործի լուծման կապակցությամբ»³⁰:

Ինչպես նկատում ենք, տեսաբանները նեղ իմաստով դատական վերահսկողությունը նույնացնում են ուղղակի դատական վերահսկողության հետ, իսկ լայն իմաստով վերահսկողությունը՝ անուղղակի դատական վերահսկողության հետ:

Առանձին մասնագետներ «ուղղակի և անուղղակի դատական վերահսկողություն» անվանման փոխարեն օգտագործում են «վերացական և կազուալ

1973, էջ 25, Никитин В. Судебный контроль за нормативными правовыми актами в гражданском и арбитражном процессе: монография. М.: Волтерс Клувер, 2010, էջ 26:

³⁰ Ն. Ասլիյան, Ա. Պետրոսյան, Իրավական պետություն և օրինականություն: 2-րդ հրատ., Եր., 2001, էջ 212, Беляев В. П., Умарова М. А. Судебный контроль в системе государственного контроля: общетеоретический формат. М., Юрлитинформ, 2021, էջ 109:

(կոնկրետ) վերահսկողություն» անվանումը: Ըստ այս մոտեցման կողմնակիցների՝ վերացական վերահսկողությանը նորմատիվ իրավական ակտերի օրինականության ստուգման ունիվերսալ մեխանիզմ է, իսկ կազուալ (կոնկրետ) վերահսկողությունն այս կամ այն գործը քննելիս դատարանի կողմից իրավական նորմերի ընտրության ընթացակարգի մասն է³¹:

Վերացական և կոնկրետ դատական վերահսկողություն անվանումները հատուկ են սահմանադրական դատավարությանը: Վերացական դատական վերահսկողությունը վերաբերում է այն դեպքերին, երբ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը ստուգվում է՝ անկախ կոնկրետ իրավահարաբերություններից, նույնիսկ մինչև այդ ակտը կիրառելը: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ վերացական վերահսկողության հարցով ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել Ազգային ժողովի պատգամավորների 1/5-ը, Կառավարությունը, Հանրապետության նախագահը և Մարդու իրավունքների պաշտպանը՝ անկախ կոնկրետ իրավահարաբերությունների (իրավական վեճի) առկայությունից:

ՀՀ վարչական դատավարության կարգով նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը կարող է վիճարկվել ինչպես վերացական, այնպես էլ կոնկրետ: ՀՀ վարչական դատավարությունում ուղղակի-վերացական դատական վերահսկողությունն առկա է այն դեպքում, երբ ՀՀ վարչական դատարան են դիմում Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև Երևանի ավագանու խմբակցությունը՝ Երևանի ավագանու ակտերը վիճարկելու դեպքում (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 192-րդ հոդվածի 3-րդ մաս): Ուղղակի դատական վերահսկողության այս տեսակը համարվում է վերացական, քանի որ նշված սուբյեկտները կարող են դատարանում վիճարկել նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը՝ անկախ կոնկրետ իրավական վեճի առկայությունից:

ՀՀ վարչական դատավարությունում ուղղակի-կոնկրետ դատական վերահսկողությունն առկա է այն դեպքում, երբ մասնավոր անձի կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտն անհատական իրավական ակտով կիրառվել է (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Ուղղակի և անուղղակի դատական վերահսկողության տեսակները ոչ թե միմյանց բացառում են, այլ փոխլրացնում են: Եթե վարչական դատավարության կարգով հնարավոր չէ ուղղակիորեն վիճարկել նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը, ապա վարչական, քրեական կամ քաղաքացիական վեճը լուծող դատավորը կարող է օգտագործել անուղղակի դատական վերահսկողության կառուցակարգը: Օրինակ՝ հեռարձակող կազմակերպությունը իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու մասին Հեռուստա-

³¹ См. у Ярко В. В., Спицин И. Н. Судебный нормоконтроль в гражданском и арбитражном процессе: современное состояние и пути совершенствования // Вестник Санкт-Петербургского университета, 2018, Право, № 4, էջ 555:

տեսության և ռադիոյի հանձնաժողովի թիվ 98-Ա 07.07.2022 թ. որոշումը վիճարկել է ՀՀ վարչական դատարանում: Վերջինս նշված վարչական գործով անուղղակի դատական վերահսկողություն է իրականացրել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի՝ 01.07.2021 թ. թիվ 109-Ա որոշման նկատմամբ, որով սահմանվում է անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները: Հանձնաժողովի թիվ 109-Ա որոշումը կիրառվել էր նաև հայցվորի նկատմամբ՝ դրվելով նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 98-Ա որոշման հիմքում: ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/4324/05/22 վարչական գործով 14.12.2022թ. վճռում նշել է. «Ուսումնասիրելով վիճարկվող որոշման հիմքում դրված Հեռուստատեսության և Ռադիոյի հանձնաժողովի 01.07.2021թ. թիվ 109-Ա որոշումը՝ Դատարանն արձանագրում է, որ անգամ եթե անտեսվի այն, որ իրավական ակտի հերթական համարից անմիջապես հետո իրավական ակտում նշվել է «Ա» տառը, որը նշանակում է, որ իրավական ակտն անհատական բնույթի է, և նշված որոշումը իր բովանդակությամբ և բնույթով թեև նորմատիվ է (Դատարանի գնահատմամբ), քանի որ տարածվում է անորոշ թվով անձանց վրա, սակայն հաշվի առնելով, որ այն պաշտոնապես չի հրապարակվել (առկա չէ «Arlis.am» իրավական տեղեկատվական համակարգ կայքէջում) և չի ընդունվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝ Դատարանը այն չի կարող գնահատել որպես նորմատիվ իրավական ակտ և կիրառել Հայցվորի նկատմամբ: Ավելին, հիմք ընդունելով վերը շարադրված իրավական նորմերը, Դատարանը փաստում է, որ սույն գործով Պատասխանողը իրավասու չէր նշված որոշումը կիրառել Հայցվոր ընկերության նկատմամբ և այն դնել վիճարկվող որոշման կայացման հիմքում»:

Նշվածն անուղղակի դատական վերահսկողության դասական օրինակ է, քանի որ դատավորը փաստել է, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 01.07.2021 թ. թիվ 109-Ա որոշումը չի հրապարակվել, ուստի այն հակասում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին, սակայն այդ որոշումը ոչ թե անվավեր է ճանաչել, այլ պարզապես այն չի կիրառել:

3.4.3. Ուղղակի դատական վերահսկողությունը և նորմավերահսկողությունը

Գրականության մեջ նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ ուղղակի դատական վերահսկողությունը երբեմն անվանում են նաև նորմավերահսկողություն: Ընդհանուր առմամբ ուղղակի դատական վերահսկողությունը և նորմավերահսկողությունն ունեն նույն բովանդակությունը, պարզապես այս անվանումների հարաբերակցությունը կախված է այն բանից՝ հեղինակը դատական վերահսկողության օբյեկտ է համարում իրավական նորմը, թե՞ նոր-

մատիվ իրավական ակտը (նորմի ամրագրման ձևը), որի մասին կնշվի հաջորդիվ:

Այս բաժնում կարևոր է հստակեցնել, որ «նորմավերահսկողություն» հասկացությունը չի կարող վերաբերել անհատական իրավական ակտերի կամ անհատական իրավական կարգադրագրերի իրավաչափության դատական ստուգմանը: Բանն այն է, որ առանձին հեղինակներ նորմավերահսկողության օբյեկտ են համարում ոչ միայն նորմատիվ, այլ նաև ոչ նորմատիվ ակտերը, ինչպես նաև իրավական բնույթի գործողությունները, ֆեդերացիայի կենտրոնի և սուբյեկտների միջև կնքված պայմանագրերը³² կամ իրավասության վերաբերյալ վեճերը³³: Օրինակ՝ վարչական իրավունքի ռուս հեղինակավոր մասնագետները նշում են. «Պետական կառավարման ոլորտում դատական վերահսկողության հիմնական բովանդակությունը նորմավերահսկողությունն է, այսինքն՝ ՌԴ քաղաքացիները և այլ լիազորված անձինք դատարանում կարող են վիճարկել նորմատիվ և անհատական իրավական ակտերը»³⁴:

Այս մեջբերումից ևս պարզ է դառնում, որ նորմավերահսկողության օբյեկտ է համարվում ոչ միայն իրավական նորմը (նորմատիվ իրավական ակտը), այլ նաև անհատական իրավական ակտերը:

Անհատական իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը «**նորմավերահսկողություն**» անվանելն առարկության տեղիք չի տա միայն այն դեպքում, եթե նման պնդման կողմնակիցները, հետևելով Հ. Քելզենի մոտեցմանը, իրավական **նորմ** ասելով հասկանում են ոչ միայն նորմատիվ, այլ նաև անհատական կարգադրագրերը:

Այնուամենայնիվ, հետխորհրդային իրավագիտությունում անհատական կարգադրագրերը իրավական նորմ որակելու Հ. Քելզենի մոտեցումը տարածում չունի, ուստի գիտնականների մեծ մասը նորմավերահսկողություն ասելով հասկանում է միայն նորմատիվ իրավական ակտերում և իրավունքի պաշտոնական այլ աղբյուրներում (օրինակ՝ նորմատիվ պայմանագրերում) ամրագրված իրավական նորմերի օրինականության դատական ստուգումը:

3.4.4. Դատական վերահսկողությունը և դատական հսկողությունը (վերաքննիչ վարույթը)

Դատական իշխանության տեսության մեջ վերադաս դատական ատյաններ-

³² St' u Ярошенко Н.И. Нормоконтроль: конституционно-правовые основы и роль в механизме реализации конституционно-правовой ответственности: диссертация ... канд. Юрид. наук. Челябинск, 2006, էջ 13:

³³ St' u Ярошенко Н. И. Судебный конституционализм в Российской Федерации: понятие и система оснований // Рос. Юстиция, 2013, № 8, էջ 4-6:

³⁴ Бахрах Д. Н., Российский Б. В., Старилов Ю. Н. Административное право: учебник для вузов. 2-е изд., изм. и доп. М., Норма, 2005, с. 758

րի գործունեությունը որակվում է որպես դատական վերահսկողության տեսակ³⁵։ Հարց է ծագում՝ ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխով սահմանված կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման արդյունքում կայացրած դատական ակտերի վերանայումն արդյո՞ք դատական վերահսկողություն է։

ՀՀ վերաքննիչ դատարանի գործունեությունը ինքնին չի համարվում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ ուղղակի դատական վերահսկողություն, քանի որ ՀՀ վերաքննիչ դատարանի ստուգման անմիջական օբյեկտը ոչ թե ՀՀ վարչական դատարանում վիճարկված ենթաօրենսդրական ակտն է, այլ ՀՀ վարչական դատարանի դատական ակտը։ Այս առումով ընդունելի է այն գիտնականների մոտեցումը, ովքեր վերաքննիչ ատյանի գործունեության կապակցությամբ օգտագործում են «դատական հսկողություն» անվանումը³⁶։

Դատական վերահսկողությանը բնութագրական է արդարադատության բոլոր հատկանիշները։ Միևնույն ժամանակ, այն ունի հետևյալ առանձնահատկությունը. դատական հսկողություն իրականացնում են բարձր աստիճանի դատարանները, որոնք ստուգում են ցածր աստիճանի դատարանների ակտերի իրավաչափությունը։ Այլ կերպ ասած՝ դատական հսկողությունն իրականացվում է դատական համակարգի ներսում։

Եզրակացություններ

Արդարադատության և դատական վերահսկողության հարցերը շարունակում են մնալ իրավագիտության տեսության և պրակտիկայի կենտրոնում, քանի որ դրանք վերաբերում են իրավական պետության հիմնարար սկզբունքներին և քաղաքացիների իրավունքների պաշտպանության հարցերին։ Հոդվածում կատարվել է խորքային միջճյուղային վերլուծություն արդարադատության և դատական վերահսկողության փոխհարաբերությունների վերաբերյալ, ինչը թույլ է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել դրանց գործառնությունների և դերի մասին իրավական համակարգում։

«Վարչական արդարադատություն» և «դատական վերահսկողություն» հասկացությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս դրանց բազմազանությունն ու բարդությունը։ Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, դատական վերահսկողությունը պարզապես արդարադատության լրացուցիչ գործառնություն չէ, այլ կարևոր մեխանիզմ է, որը ապահովում է օրենքի գերակայությունն ու արդարությունը վարչական գործընթացներում։ Դատական վերահսկողությունը, որը իրականացվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ձևերով,

³⁵ Տե՛ս **Воскобитова Л. А.** Теоретические основы судебной власти: учебник. М., Норма: ИНФРА-М, 2017, էջ 161։

³⁶ Տե՛ս **Гладышева О. В.** Актуальные вопросы судебного права: учебное пособие для вузов. М., Юрайт, 2020։

արդյունավետորեն պաշտպանում է քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները պետական մարմինների անօրինական գործողություններից: Սա, իր հերթին, նպաստում է դատական համակարգի նկատմամբ վստահության և իրավական անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Որպեսզի վարչական արդարադատությունը չսահմանափակվի միայն վարչական ակտերի օրինականության դիտարկմամբ, կարևոր է նաև ներառել նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը, ինչը իշխանության տարանջատման և իրավական պետության հաստատման համար կարևորագույն գործիք է:

Բացի այդ, անհրաժեշտ է շարունակել հետազոտությունները, որոնք կօգնեն կատարելագործելու վարչական արդարադատության և դատական վերահսկողության գործընթացները, ինչպես նաև կնպաստեն արդարացի, թափանցիկ և արդյունավետ դատավարությանը: Կարևոր է, որ իրավական համակարգը, որը արձագանքում է ժամանակակից մարտահրավերներին, մշտապես աշխատի քաղաքացիների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Այսպիսով, արդարադատության և դատական վերահսկողության փոխհարաբերությունների հետազոտությունը ընդգծում է, որ այդ երկու գործառնությունները միմյանց լրացնող և համատեղ աշխատող համակարգ են, որոնք միասին ապահովում են արդար, թափանցիկ և արդյունավետ դատական գործընթացներ, որոնք ծառայում են հասարակության և յուրաքանչյուր քաղաքացու շահերին:

РАФИК ХАНДАНЯН – Административно-процессуальные взаимоотношения между правосудием и судебным надзором. – В статье представляется глубокий и всесторонний анализ взаимосвязи правосудия и судебного контроля в рамках административных судебных отношений. В первую очередь, статья затрагивает теоретические вопросы, касающиеся границ правосудия и судебного контроля, а также способов их применения. Основная цель статьи — показать, какую роль играют правосудие и судебный контроль в административном судопроизводстве Республики Армения, и как они влияют на законность нормативных правовых актов и деятельность административных органов.

В работе подчеркивается, что судебный контроль, являясь частью правосудия, представляет собой важный инструмент в правовом государстве, обеспечивающий законность решений административных органов. Рассматриваются как прямые, так и косвенные формы судебного контроля, описывая их функциональное значение в административном, уголовном и конституционном судопроизводствах.

Особое внимание уделяется судебному контролю за нормативными правовыми актами, отмечая, что этот процесс важен для обеспечения законности в сфере государственного управления. В статье изучается, как суды осуществляют проверку законности нормативных правовых актов, и как это отражается в судебной практике Республики Армения. Также анализируется взаимосвязь административного правосудия и процедур привлечения к административной ответственности, отмечая, что административное правосудие имеет свои особенности, которые важны при разрешении споров между административными органами и частными лицами.

В статье также обсуждается различие между прямым и косвенным судебным контролем,

выделяя абстрактные и конкретные формы контроля. Прямой судебный контроль рассматривается как процесс непосредственной проверки законности нормативных правовых актов, в то время как косвенный контроль осуществляется, когда суд вынужден затронуть вопрос законности в ходе рассмотрения конкретного дела.

В заключительной части статьи отмечается, что правосудие и судебный контроль в административных судебных отношениях имеют четко взаимосвязанный характер, что способствует развитию правового государства и повышению подотчетности государственных органов.

Ключевые слова: правосудие, судебный контроль, административное судопроизводство, нормативные правовые акты, правовое государство, прямой судебный контроль, косвенный судебный контроль, нормоконтроль, судебная система РА (Республики Армения), превосходство закона

RAFIK KHANDANYAN – *Administrative Procedural Relations between Justice and Judicial Oversight.* – The article presents a deep and comprehensive analysis of the relationship between justice and judicial control within the framework of administrative judicial relations. First and foremost, the article addresses theoretical questions concerning the boundaries of justice and judicial control, as well as their methods of application. The main objective of the article is to demonstrate the role of justice and judicial control in the administrative proceedings of the Republic of Armenia and how they affect the legality of normative legal acts and the activities of administrative bodies.

The work emphasizes that judicial control, as part of justice, is an important instrument in a legal state that ensures the legality of administrative decisions. It examines both direct and indirect forms of judicial control, describing their functional significance in administrative, criminal, and constitutional proceedings.

Particular attention is given to judicial control over normative legal acts, noting that this process is crucial for ensuring legality in the realm of public administration. The article investigates how courts carry out the verification of the legality of normative legal acts and how this is reflected in the judicial practice of the Republic of Armenia. It also analyzes the interrelationship between administrative justice and procedures for imposing administrative liability, highlighting that administrative justice has its own characteristics that are significant in resolving disputes between administrative bodies and private individuals.

The article further discusses the distinction between direct and indirect judicial control, identifying both abstract and concrete forms of control. Direct judicial control is viewed as the process of immediate verification of the legality of normative legal acts, while indirect control is exercised when the court is compelled to address the issue of legality in the context of a specific case.

In the concluding section of the article, it is noted that justice and judicial control in administrative judicial relations have a clearly interconnected nature, which contributes to the development of a legal state and enhances the accountability of public authorities.

Key words: justice, judicial control, administrative proceedings, normative legal acts, rule of law, direct judicial control, indirect judicial control, norm control, judicial system of the RA (Republic of Armenia), supremacy of law

MIGRATION AS A CONSEQUENCE OF GLOBALIZATION: MIGRANTS' RIGHTS IN GLOBALIZED WORLD

LILIT GEVORGYAN * 

Mediterranea International Centre for Human Rights Research

Migration has become the most egregious consequence of globalization, as the interconnectedness of economies and societies transcends geographical boundaries across the countries of the world. This paper explores the nexus between migration and globalization, with a specific focus on migrants' rights within the context of a globalized economy. It delves into the challenges and opportunities, positives and negatives presented by globalization for migrants, examining how economic, political, social, cultural, and legal factors influence their rights and experiences. By analyzing existing literature and empirical evidence, this paper seeks to elucidate the complexities of migrant rights in the face of global economic forces. Furthermore, it explores policies and recommendations aimed at promoting the protection and empowerment of migrants in the globalized era. Through this examination, the paper aims to contribute to a deeper understanding of the intersection between migration and globalization and to inform more inclusive and equitable policies for migrants worldwide. By exploring the reasons and interconnectedness of globalization and migration, this paper tries to provide some legal perspectives for future consideration:

Key words: *rights of migrants in a globalized world, causes of migration, globalization and migration, violation of rights of migrants, consequences of globalization*

INTRODUCTION

Globalization is an economic, social, cultural progress in which individuals of different cultural, ethnic, social backgrounds collaborate with each other in all spheres of life more tightly than previously. Ubiquitous migration is one of the most visible and significant aspects of globalization involving growing numbers of people moving along countries and across borders, looking for better lifestyles, employment, and opportunities. It is supposed to consider that globalization has laid the foundation of migration, but, in reality, migration of people around the world started far before globalization. Globalization just increased

* **Lilit Gevorgyan** – “Mediterranea International Centre for Human Rights Research” of the Università «Mediterranea» di Reggio Calabria (Calabria, Italy). Post-Doctoral program in “Globalization and Migration”

Լիլիթ Գևորգյան – «Միջերկրական Մարդու իրավունքների հետազոտությունների միջազգային կենտրոն» Università «Mediterranea» di Reggio Calabria (Կալաբրիա, Իտալիա), հետդոկտորական ծրագիր «Գլոբալիզացիա և միգրացիա» մասնագիտությամբ

Лилит Геворгян – «Международный центр исследований в области прав человека Mediterranea» университета «Средиземноморье» в Реджо-Калабрии (Калабрия, Италия). Постдокторская программа по направлению «Глобализация и миграция»

E-mail: gevorgyanlilit39@gmail.com. ORCID: <https://orcid.org/0009-0006-1230-6009>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 12.09.2024

Գրախոսվել է՝ 14.10.2024

Հաստատվել է՝ 15.12.2024

© The Author(s) 2024

migration volumes underpinning a new social class that is called “Migrants”. Migration has always been an important part of social activity. Globalization has given a number of supplementary opportunities to the migration process by opening the borders of nations and activating displacement of people. Policy-makers should recognize this progressive state of affairs, and appreciate the potential and actual contribution of migrants to sustainable changes in a globalized world. Policies should be concentrated not only on migrants themselves, but also on the process of migration considering that migration is a choice and, in some cases, an option that has consequences. This means reducing the constraints for people to migrate, ensuring that migrants’ rights are respected in host areas, recognizing and supporting migrants’ contributions in all spheres of modern life and, also, the issues connected to their rights and responsibilities. This all will provide for better cooperation of globalization and migration providing an opportunity to better interact with each other and become harmoniously interconnected¹.

Over the centuries millions of people have migrated despite physical, cultural, economic obstacles in search of a better life. The concept of migration includes moving to reside in a country other than the country of birth of the person who migrates. The UN gives an alternative definition of a migrant. “A migrant is a person who regardless of reasons and status /legal or illegal/ lives outside of the homeland or the country of residence for more than one year”. International migrants can be recorded according to their country of birth, country of citizenship, last country of previous residence, duration of time spent away from birthplace or last place of previous residence, purpose of stay (visa type). There are two roots according to which migrants are specified: In one sense the migrants are defined by their nationality, in another sense he or she is defined by their residence². Whatever the definition or the wording of the migrant, it is easier to say, “The migrant is someone who voluntarily or involuntarily lives legally or illegally outside of his/her primary or main country of residence”. There is a widespread academic opinion that globalization has brought about profound and extensive changes in the way people live, work, and interact and these changes in the minds of people have led to changes in their behavior. One significant consequence of this global phenomenon is the unprecedented surge in migration. People cross borders, seeking new opportunities, and building lives in foreign lands at an unprecedented rate. This migration, fueled by economic, social, and political factors in the globalized world, has become a defining feature of the 21st century.

The United Nations (UN) adopted a landmark resolution on steering the use of artificial intelligence toward global good on March 21, 2024, entitled "Seizing the opportunities of safe, secure and trustworthy artificial intelligence systems for sustainable development" (document [A/78/L.49](#)),⁵⁷ which it adopted without a vote. The Assembly resolved to bridge the artificial intelligence (AI) and other digital divides between and within countries and promote safe, secure, and trustworthy AI systems to accelerate progress towards fully realizing the 2030 Agenda for Sustainable Development. The resolution encourages countries to safeguard human rights, protect personal data, and monitor AI risks on a non-legally binding basis, complementing the work of other UN bodies like the International Telecommunication Union (ITU), UNESCO, and the Human Rights Council. While the UN cannot pass laws or regulations on AI, the General Assembly can initiate studies and make recommendations to promote the development of international law.⁵⁸

Council of Europe

On May 17, 2024, the Council of Europe (CoE) adopted the first-ever international treaty to ensure the respect of human rights, the rule of law, and democratic legal standards in the use of AI systems (the "AI Convention").⁵⁹ The AI Convention is intended as a "global legally binding instrument." It covers the entire AI lifecycle and is open to European and non-European countries. It emphasizes a risk-based approach, requiring transparency, oversight, and accountability in AI systems across public and private sectors. The AI Convention requires each CoE signatory to (i) take measures to ensure accessible and effective remedies for human rights violations resulting from the activities within the lifecycle of artificial intelligence systems and (ii) ensure that procedural guarantees, safeguards, and rights, under applicable domestic and international law, are available to affected individuals." The AI Convention will be open for signature by the EU and countries on and from September 5, 2024⁶⁰.

G7

The G7 nations have advanced the Comprehensive Policy Framework for the Hiroshima AI Process. In May 2023, the Hiroshima AI Process was initiated during the G7 Hiroshima Summit under Japan's leadership to foster international dialogue. In

⁵⁷ See [<https://documents.un.org/doc/undoc/ltd/n24/065/92/pdf/n2406592.pdf>], [<https://news.un.org/en/story/2024/03/1147831>]; [<https://press.un.org/en/2024/ga12588.doc.htm>].

⁵⁸ See **White & Case LLP**, *AI Watch: Global regulatory tracker - United Nations*, 2024 [<https://www.whitecase.com/insight-our-thinking/ai-watch-global-regulatory-tracker-united-nations>].

⁵⁹ See **Council of Europe**, *Council of Europe Framework Convention on Artificial Intelligence and Human Rights, Democracy and the Rule of Law*, CETS No. 225, September 5, 2024 [<https://rm.coe.int/1680afae3c>]; see also [<https://www.coe.int/en/web/portal/-/council-of-europe-adopts-first-international-treaty-on-artificial-intelligence>]; [<https://www.coe.int/en/web/artificial-intelligence/the-framework-convention-on-artificial-intelligence>].

⁶⁰ The CoE has several binding and non-binding instruments that influence AI system development and use. Key examples include the European Convention on Human Rights, the Guidelines on AI and Data Protection, the European Ethical Charter on AI in judicial systems, and the Convention for the Protection of Individuals regarding Automatic Processing of Personal Data.

December 2023, this culminated in the creation of the world's first global framework, the Hiroshima AI Process Comprehensive Policy Framework⁶¹, which is based on four pillars: (i) the International Guiding Principles for Organizations Developing Advanced AI Systems (the "Guiding Principles")⁶² (ii) the International Code of Conduct for Organizations Developing Advanced AI Systems (the "Code of Conduct")⁶³ designed to supplement the Guiding Principles and provide voluntary guidance to organizations developing Advanced AI systems; (iii) analysis of priority risks, challenges, and opportunities of generative AI; and (iv) project-based cooperation supporting the development of responsible AI tools and best practices. The Guiding Principles and the Code of Conduct are not legally binding, but they are expected to impact international politics significantly. The G7 does not have the authority to create laws related to AI or its implementation. However, the G7's AI Regulations state that its members must follow their obligations under international human rights law. Private sector activities should adhere to global frameworks such as the United Nations Guiding Principles on Business and Human Rights and the OECD Guidelines for Multinational Enterprises.⁶⁴

OECD

The **Organization for Economic Co-operation and Development (OECD)** has made significant progress in establishing principles and guidelines for AI's ethical development and use. The OECD's AI Principles⁶⁵, endorsed by numerous countries, highlighting the importance of transparency, accountability, and fairness in AI systems. These principles have laid the groundwork for various national and international AI strategies. The OECD's Recommendation of the Council on Artificial Intelligence⁶⁶, adopted by 46 governments as of July 2021, contains the OECD's AI Principles and Five recommendations to be implemented in the adherents' national policies and international cooperation for trustworthy AI. The adhering governments have committed to promoting, implementing, and adhering to the Recommendation. These Principles align with other AI initiatives, including the G7's Hiroshima AI Process Comprehensive Policy Framework.

In summary, creating a unified framework for AI governance poses challenges to international organizations and multilateral bodies due to AI technologies' complex and evolving nature. There is a collective effort to establish global standards for ethical and responsible AI use; however, it is challenging due to many factors, including aligning diverse geopolitical interests and regulatory philosophies. These efforts underscore the importance of continued international cooperation to address the multifaceted challenges posed by AI.

⁶¹ See **G7 Hiroshima Summit**. *Hiroshima AI Process Comprehensive Policy Framework*. May 2023 [https://www.japan.go.jp/kizuna/_userdata/pdf/2024/spring2024/hiroshima_ai_process.pdf].

⁶² See **G7 Hiroshima Summit**. *Hiroshima Process International Guiding Principles for Organizations Developing Advanced AI Systems*. October 30, 2023. [https://digital-strategy.ec.europa.eu/en/library/hiroshima-process-international-guiding-principles-advanced-ai-system].

⁶³ See *Ibid*.

⁶⁴ See **White & Case LLP**, *AI Watch: Global regulatory tracker - G7, 2024*, [https://www.whitecase.com/insight-our-thinking/ai-watch-global-regulatory-tracker-g7].

⁶⁵ See Principles for trustworthy AI, [https://oecd.ai/en/ai-principles].

⁶⁶ See Recommendation of the Council on Artificial Intelligence [https://legalinstruments.oecd.org/en/instruments/oecd-legal-0449].

Conclusion

The regulation of AI varies worldwide, with each country taking different approaches based on its priorities, legal traditions, and cultural values. As AI technology advances and has a more significant impact, countries work to balance promoting innovation and safeguarding public interests while managing potential risks. While some countries like the EU have established detailed and enforceable regulatory frameworks, others, including the U.S., the UK, and Israel, have adopted more flexible, industry-specific guidelines or non-binding principles to encourage innovation and development.

International organizations and multilateral bodies are becoming more involved in shaping the global AI governance landscape. They recognize technology's significant implications for human rights, economic development, and international security. Initiatives by the UN, Council of Europe, G7, and OECD highlight a collective effort to establish ethical standards and guidelines beyond national borders, promoting responsible and sustainable AI development worldwide.

While the rapid advancement of AI technologies underscores the importance of having consistent, flexible, and globally aligned regulatory frameworks, due to the complex nature of AI regulation, the involvement of diverse actors, and the geopolitical context, a unified global solution for AI governance is unlikely to be achieved. Most efforts to regulate AI and manage its opportunities and risks will occur nationally.

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՎԹՅԱՆ – Արհեստական բանականության կարգավորման համաշխարհային ջանքերի ընդհանուր բնութագիրը. – Սույն հոդվածում ուսումնասիրվում են տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից կիրառվող մոտեցումները արհեստական բանականության (ԱԲ) տեխնոլոգիաների արագ զարգացումների համատեքստում: Քանի որ ԱԲ-ն շարունակում է արագ զարգանալ, կարևորվում է համապարփակ կարգավորող շրջանակների ձևավորումը՝ անդրադառնալու ԱԲ-ի էթիկական, սոցիալական և տնտեսական բարդ խնդիրներին: Հոդվածը ներկայացնում է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Չինաստանի, Ճապոնիայի, Սինգապուրի, Իսրայելի, Հնդկաստանի և Եվրոպական Միության՝ ԱԲ ոլորտի կարգավորման ռազմավարությունները, որոնք ձևավորվում են նրանց քաղաքական, տնտեսական և մշակութային համատեքստերում: Բացի այդ, հոդվածն անդրադառնում է ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, G7-ի, ՏՀԶԿ-ի և համանման միջազգային և միջկառավարական կազմակերպությունների՝ ԱԲ-ի էթիկական և պատասխանատու օգտագործման գլոբալ չափանիշներ և ուղեցույցներ սահմանելու նախաձեռնություններին: Առաջադրվող խնդիրների վերլուծությունը կարևոր ռեսուրս է՝ հասկանալու ԱԲ ոլորտի կառավարման արագ զարգացող միջավայրը: Այն օգտակար կարող է լինել տարբեր երկրների քաղաքականության մշակման, բիզնեսների կողմնորոշման, ինչպես նաև ԱԲ կիրառող մասնագետների և հետազոտողների համար՝ աջակցելու հանրային շահերի պաշտպանությանը, մարդու իրավունքների պահպանմանը և հնարավոր ռիսկերը մեղմելուն:

Բանալի բառեր – արհեստական բանականություն, արհեստական բանականության կարգավորումներ, արհեստական բանականության կառավարում, արհեստական բանականության քաղաքականության շրջանակներ, պատասխանատու արհեստական բանականություն, էթիկական արհեստական բանականություն

ТАТЕВИК ДАВТЯН – Обзор мировых усилий по регулированию искусственного интеллекта. – Настоящая статья предоставляет глобальный взгляд на усилия по регулированию искусственного интеллекта (ИИ) — трансформирующей силы, которая меняет бизнес, правительства и общества по всему миру. В статье рассматриваются различные подходы, которые страны и международные организации применяют в ответ на быстрые достижения в области технологий ИИ. По мере развития ИИ возникает растущая потребность в комплексных нормативных рамках для решения сложных этических, социальных и экономических проблем, связанных с ИИ. В статье приводятся стратегии регулирования ИИ ключевых юрисдикций, таких как США, Великобритания, Канада, Китай, Япония, Сингапур, Израиль, Индия и Европейский союз, учитывающие их уникальные политические, экономические и культурные контексты. Также в статье анализируются инициативы международных и межправительственных организаций, таких как ООН, Совет Европы, G7 и ОЭСР, направленные на установление глобальных стандартов и руководящих принципов для этичного и ответственного использования ИИ. Статья является ценным ресурсом для понимания развивающегося ландшафта управления ИИ. Она служит основой для дальнейших исследований и разработки политики, направленной на баланс между инновациями, защитой общественных интересов, соблюдением прав человека и снижением потенциальных рисков.

Ключевые слова: Искусственный интеллект, Регулирование искусственного интеллекта, Управление искусственным интеллектом, Рамки политики искусственного интеллекта, Ответственный искусственный интеллект, Этический искусственный интеллект

ԳՈՒՅՔԻ՝ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՆԱԼՈՒ «ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ» ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Քաղաքացիական բռնազանձման կառուցակարգը նորույթ է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, և դրա ինչպես համապարփակ, այնպես էլ առանձին ինստիտուտների հետազոտության անհրաժեշտությունը խիստ արդիական է: Այս առումով առանձնապես կարևոր է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի հետ կապված հարցերի քննարկումը, քանի որ դրա իրավաչափ կիրառումը ունի առանցքային նշանակություն քննարկվող կառուցակարգի շրջանակում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման, ինչպես նաև մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորման տեսանկյուններից: Միջազգային փաստաթղթերի, հայրենական օրենսդրության և դատավարագիտության մեջ ձևավորված մոտեցումների հիման վրա աշխատանքում ներկայացվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման վարույթի ընդհանուր իրավական բնութագիրը, դրա փուլերը, ապացուցողական կանխավարկածների էությունը և դատավարական նշանակությունը, գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործողության պայմանները և դրա ուժով ենթադրվող փաստը, ինչպես նաև սույն վարույթում կիրառելի «հավանականությունների հավասարակշռման» կամ «ապացույցների գերակշռման» չափանիշը: Հոդվածում հեղինակը ներկայացնում է գիտագործնական մի շարք եզրահանգումներ, որոնցից են գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի դատավարագիտական ընկալումներին անհամապատասխանությունը, դրա՝ վարկածի բնույթ ունենալը և ապացուցման միջոցների որոշակի շրջանակով ապացուցման ենթակա լինելը և այլն:

* **Տիգրան Մարկոսյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի իրավաբանական կլինիկայի դասախոս-կոորդինատոր, Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ

Тигран Маркосян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского процесса ЕГУ, преподаватель-координатор юридической клиники юридического факультета ЕГУ, член Квалификационной комиссии управляющих по делам о банкротстве, член Комиссии по защите конкуренции РА

Tigran Markosyan – PhD in Law, Associate Professor at YSU Chair of Civil Procedure, Lecturer-Coordinator at the Legal Clinic of YSU Faculty of Law, Member of the Commission for the Qualification of the Bankruptcy Managers, Member of the Competition Protection Commission of the RA

Էլ. փոստ՝ tigranmarkosyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0002-4671-1663>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 31.10.2024

Գրախոսվել է՝ 15.10.2024

Հաստատվել է՝ 15.12.2024

© The Author(s) 2024

Հոդվածում ներկայացված եզրահանգումները կարող են ուղենիշային լինել իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև առկա կարգավորումների հետագա զարգացման համար:

Բանալի բառեր – քաղաքացիական բռնազանձում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման վարույթ, *in rem*, դատական ապացուցում, ապացուցման բեռ, կանխավարկած, վարկած, հերքում, հավանականությունների հավասարակշռում, ապացույցների գերակշռում

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձումը ավանդաբար իրականացվել է մեղադրական դատավճռի հիման վրա՝ որպես հետևանք նպատակ ունենալով հանցանք կատարած անձանց զրկելու այդպիսի գործունեության արդյունքում ստացված օգուտներից: Ըստ այդմ, այն ուղղված է հանցավոր ճանապարհով ստացված կապիտալի նվազեցմանը, որը կարող է օգտագործվել հետագա հանցավոր գործունեության ընթացքում, նոր հանցագործություն կատարելու խթանների վերացմանը, ինչպես նաև այն իրողության երաշխավորմանը, որ հանցանքի միջոցով չի կարելի վաստակել: Մյուս կողմից՝ անհիմն հարստացումը խախտում է սոցիալական արդարության սկզբունքը, և դրա լայն տարածումը ստեղծում է գույքային հարաբերություններում քառսի սպառնալիք և, ի վերջո, կարող է հանգեցնել սոցիալական ցնցումների¹:

Այդուհանդերձ, մեղադրական դատավճռի հիման վրա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձումը երբեմն անհնար է դառնում քրեական հետապնդումը բացառող տարատեսակ հանգամանքների (մեղադրյալի մահ, համաներում և այլն) ուժով²: Բացի այդ, նման գույքի բռնազանձմանը հաճախ խոչընդոտում է իրավասու մարմինների վրա դրված բարձր ապացուցողական շեմը և միջազգային համագործակցության անարդյունավետությունը³:

Շարադրվածով կարելի է պայմանավորել այն իրողությունը, որ ներկայումս, քրեական վարույթում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման ինստիտուտին զուգահեռ, լայն տարածում է ստացել քրեական վարույթից դուրս ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման կառուցակարգը, որի նախաձեռնման համար մի դեպքում հիմք է համապատասխան քրեական վարույթը, սակայն կախված չէ դրա արդյունքից, իսկ մյուս դեպքում բռնազանձումը նախաձեռնվում է գույքի դեմ՝ անկախ որևէ քրեական վարույթի առկայությունից⁴: Ըստ այդմ, այն հայտնի է «քաղաքացիական բռնազանձում», «*in rem*

¹ St' u Шедрин Н.В. Проблемы и перспективы криминализации незаконного обогащения публичных должностных лиц // Имущественные отношения в Российской Федерации, Право, 2018, էջ 63-64:

² St' u Теодор Гринберг, Линда Сэмюэль, Вингейт Грант, Ларисса Грей, Возврат похищенных активов: Руководство по конфискации активов вне уголовного производства; Пер. с англ. — М.: Альпина Паблишерз, 2010, էջ 35-36:

³ St' u Resolution 2218, Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, adopted by the Parliamentary Assembly on 26 April 2018 (17th Sitting), 3.

⁴ St' u Использование ареста и конфискации без вынесения обвинительного приговора Совет

բռնագանձում» և այլ անվանումներով⁵:

Քաղաքացիական բռնագանձումը, քրեական վարություն բռնագանձման ինստիտուտի հետ որոշ ընդհանրություններով հանդերձ, ունի սկզբունքային տարբերություններ, որոնցից է մեղադրական դատավճռի պահանջի բացակայությունը⁶: Մյուս կողմից՝ այն ուղղված է ավելի լայն շրջանակի ապօրինի գույքի դեմ: Մասնավորապես, քաղաքացիական բռնագանձումը կիրառելի է ինչպես հանցավոր ճանապարհով, այնպես էլ ապօրինի այլ եղանակով ձեռք բերված գույքի առնչությամբ⁷:

Քաղաքացիական բռնագանձման կառուցակարգի գոյությունը թույլ է տվել ոչ միայն շեղվել «ողջամիտ կասկածից վեր» ապացուցողական շեմից, այլև օրենսդրորեն ձևակերպել որոշակի կանխավարկածներ կամ գույքի սեփականտիրոջ վրա դնել ապացուցման պարտականությունը՝ պայմանով, որ նրան տրվեն դատավարական համարժեք երաշխիքներ⁸:

Հիշյալ մոտեցումն ամրագրված է նաև միջազգային մի շարք փաստաթղթերում: Այսպես, օրինակ՝ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 8-րդ մասը անդամ պետություններին առաջարկում է քննարկել այն մասին պահանջներ սահմանելու հնարավորությունը, որ հանցագործություն կատարած անձը, այնքանով, որքանով այդպիսի պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին և դատական ու այլ քննության բնույթին, ապացուցի հանցագործություններից ստացված այնպիսի ենթադրյալ եկամուտների կամ այլ գույքի օրինական ծագումը, որոնք ենթակա են բռնագանձման, իսկ Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին 1988թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է ենթադրյալ եկամուտների կամ բռնագանձման ենթակա այլ գույքի օրինական ծագումն ապացուցելու բեռի տեղափոխումն ապահովելու հնարավորությունը այն պայմանով, որ այդպիսի միջոցը համապատասխանի ազգային օրենսդրության սկզբունքներին, դատական և այլ քննության բնույթին: Այս առումով ուշագրավ է նաև ԵՄ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 2218 բանաձևի հղումը Իռլանդիայի, Իտալիայի, Նիդերլանդների և Միացյալ Թագավորության ընդունած օրենսդրություններին, որոնք հեշտացրել են ապօրինի

Европы, 2021, էջ 10:

⁵ Տե՛ս **Теодор Гринберг, Линда Сэмюэль, Вингейт Грант, Ларисса Грей**, նշվ. աշխ., էջ 35:

⁶ Տե՛ս **Жан-Пьер Брюн, Ларисса Грей, Кевин Стивенсон, Клайв Скотт**; Руководство по возврату активов для специалистов-практиков, Пер. с англ. — М.: Альпина Паблишер, 2012, էջ 28-29, 161-163:

⁷ Տե՛ս **Venice Commission**, CDL-AD (2022)048, Amicus curiae Brief for the Constitutional Court of Armenia on certain questions relating to the Law on the Forfeiture of Assets of Illicit Origin, adopted by the Venice Commission at its 133rd Plenary Session (Venice, 16-17 December 2022), կետ 25:

⁸ Տե՛ս **Довидас Виткаускас, Григорий Диков**՝ Защищая право на справедливое судебное разбирательство, предусмотренное Европейской конвенцией по правам человека. - М.: Развитие правовых систем, 2018, էջեր 133-138:

ծագում ունեցող գույքի բռնագանձումը՝ իջեցնելով ապացուցման շեմը՝ փաստական բնույթի կանխավարկածների օգտագործմամբ, իսկ որոշ դեպքերում նաև de facto տեղափոխելով ապացուցման բեռը պատասխանողի վրա⁹:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով¹⁰ (այսուհետ՝ նաև Օրենք) ներդրված քաղաքացիական բռնագանձման կառուցակարգի հիմքում ևս դրված է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, որի իրավաչափ կիրառումը ունի առանցքային նշանակություն հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման, ինչպես նաև մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորման տեսանկյուններից:

Այս համատեքստում հարկ է նախնառաջ որոշակի անդրադարձ կատարել ապացուցողական կանխավարկածների էության և դատավարական նշանակության բացահայտմանը:

Այսպես, քաղաքացիական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Դրան համապատասխան՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները¹¹:

Ապացուցման պարտականությունը իրավաչափ չափանիշների հիման վրա բաշխելու ընթացակարգում իրենց առանձնահատուկ տեղն ունեն ապացուցողական կանխավարկածները: Նյութական և դատավարական օրենսդրության նորմերով սահմանվում են ապացուցողական կանխավարկածներ, որոնք ապացուցման առարկայի մեջ մտնող որոշակի փաստերի գոյության կամ բացակայության վերաբերյալ իրավական ենթադրություններ են, որոնք հերքելու պարտականությունն օրենքով դրված է դատավարության կոնկրետ

⁹ St' u Resolution 2218, Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, adopted by the Parliamentary Assembly on 26 April 2018 (17th Sitting), 3:

¹⁰ Ընդունվել է 16. 04. 2020թ.: Ուժի մեջ է մտել 23. 05. 2020թ.: St' u ՀՀՊՏ 2020.05.13/50(1605) Հոդ.580:

¹¹ St' u, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/10332/02/20 քաղաքացիական գործով 2021 թվականի դեկտեմբերի 30-ի որոշումը:

մասնակցի վրա: Ուստի ապացուցողական կանխավարկածներն ապացուցման այնպիսի հատուկ կանոններ են, որոնք ոչ թե կոնկրետացնում են ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը, այլ նախատեսում են այդ կանոնից որոշակի բացառություններ, որոնց ուժով պահանջի կամ առարկության հիմքում ընկած փաստի գոյությունն օրենքի ուժով ենթադրվում է, քանի դեռ վարույթի մյուս կողմը հակառակը չի ապացուցել¹²: Ըստ այդմ, որպես կանխավարկած ամրագրող նորմի տարրեր առանձնացվում են դրա հիպոթեզը (կանխավարկածի գործողության պայմանները), դիսպոզիցիան (ենթադրվող փաստը) և «հակականխավարկածը», այսինքն՝ կանխավարկածի հերքման հնարավորության նախատեսումը: Ընդ որում, հենց վերջին տարրն է կանխավարկածը այդպիսին դարձնում¹³:

Ապացուցողական կանխավարկածները իրականացնում են դատավարական որոշակի գործառույթներ, որոնցից են՝ կանխավարկածի գործողության համար անհրաժեշտ փաստերի (փաստեր-հիմքեր) և կանխավարկածը հերքող փաստերի էականության պայմանավորումը և ապացուցման առարկայի շրջանակում ներառումը, ապացուցման բեռից ազատումը և հակառակի ապացուցման բեռի սահմանումը, ինչպես նաև դատավարական խնայողությունը¹⁴:

Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի հետ կապված կարգավորումները կենտրոնացված են Օրենքի 22-րդ հոդվածում, որի 1-ին մասը սահմանում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով: Մինչդեռ ժամանակ, քննարկվող հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ պատասխանողը կարող է հերքել գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ:

Վկայակոչված կարգավորումների ուսումնասիրությամբ դժվար չէ նկատել, որ օրենսդիրը այս հարցի կապակցությամբ որդեգրել է իրար չհամընկնող երկու մոտեցումներ: Մասնավորապես,

¹² Տե՛ս **Ս. Գ. Մեդրյան** Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 105-106, 111:

¹³ Տե՛ս **Мильков ПИП, Жагорина СПА** Доказательственные презумпции в гражданском и арбитражном процессе: теоретический аспект // Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского, Право, 2011, էջ 285:

¹⁴ Տե՛ս **Зацепина О.Е.** Классификация правовых презумпций // Актуальные проблемы российского права, Право, էջ 84:

1. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը.

2. գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործում է, եթե հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով:

Այլ կերպ ասած՝ Օրենքը գույքի՝ ապօրինի ծագում ունենալու փաստը մի դրույթում ամրագրել է որպես իրավական ենթադրություն, իսկ մյուս դրույթում՝ ապացուցման ենթակա փաստ: Այնինչ թե՛ առաջին, թե՛ երկրորդ մոտեցումներն էլ ունեն խնդրահարույց կողմեր:

Ամենից առաջ պետք է նշել, որ «ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում» ձևակերպումը չափազանց լայն է, քանի որ այն ներառում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ողջ վարույթը: Այն իրավասու մարմնի¹⁵ նախաձեռնած ընթացակարգ է, որն սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով, իսկ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունն էլ իր հերթին ընթացակարգ է, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն:

Ասվածից հետևում է, որ ուսումնասիրությունը և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը հարաբերակցվում են ինչպես մասը և ամբողջը: Այլ կերպ ասած՝ ուսումնասիրությունը հիշյալ վարույթի ինքնուրույն փուլն է, որը նախորդում է դատական վարույթին, այսինքն՝ ունի «մինչդատական» բնույթ¹⁶: Նման պայմաններում ակնհայտ է, որ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը կարող է գործել միայն դատական քննության ժամանակ, քանի որ դրան նախորդող «մինչդատական» փուլն ուղղված է հայց հարուցելու հիմքերի, այդ թվում՝ գույքի ապօրինի ծագում ունենալու հարցը պարզելուն:

Այս դիրքորոշման օգտին է խոսում նաև Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, որը դատարանի կողմից գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի կիրառումը պայմանավորում է հայցվորի կողմից պատասխանողին պատկանող գույքի՝ օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով չհիմնավորված լինելու հանգամանքի ապացուցմամբ: Այլ կերպ ասած՝ այս

¹⁵ Օրենքի իմաստով՝ Գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանում:

¹⁶ Տե՛ս **Vahe Hovhannisyan, Tigran Markosyan**. The institutional features of the judicial oversight on the legitimacy of the "pre-judicial" phase of the proceedings for confiscation of property of illicit origin // Bulletin of Yerevan University C: Jurisprudence, 2 (39) 2023, էջ 178:

կանխավարկածը գործում է, եթե հայցվորը ապացուցում է գույքի՝ օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով չհիմնավորված լինելու հանգամանքը և դա անում է դատական քննության փուլում:

Նշյալ հետևությամբ էլ հերքվում է Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում ձևակերպված այն միտքը, որ քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը ինքնաբերաբար գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը:

Այդուհանդերձ, քննարկվող կանխավարկածի հիպոթեզի (կանխավարկածի գործողության պայմանները) և դիսպոզիցիայի (նույնը ինքը՝ ենթադրվող փաստը) ուսումնասիրությունը հանգում են միևնույն փաստին: Այսպես, քննարկվող կանխավարկածի ուժով ենթադրվող փաստը ապօրինի ծագում ունեցող գույքն է, որը Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ունի հետևյալ սահմանումը. «գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը սույն օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները)», իսկ կանխավարկածի գործողության պայմանները, ինչպես նշվեց, դատական քննության փուլում հայցվորի կողմից պատասխանողին պատկանող գույքի՝ օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով չհիմնավորված լինելու հանգամանքի ապացուցումը:

Արդյունքում ստացվում է, որ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործում է, եթե հայցվորը ապացուցում է գույքի ապօրինի ծագում ունենալու փաստը: Այլ խոսքով՝ այս կանխավարկածի հիպոթեզը և դիսպոզիցիան համընկնում են, ինչը չի համապատասխանում ապացուցողական կանխավարկածների դատավարագիտական ընկալմանը:

Նման պայմաններում կարելի է եզրահանգել, որ թեև Օրենքն օգտագործում է «գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկած» ձևակերպումը, այնուամենայնիվ տվյալ դեպքում խոսքը ոչ թե կանխավարկածի, այլ վարկածի մասին է: Այսինքն՝ ենթադրություն, որը դեռևս ենթակա է ապացուցման: Ընդ որում, օրենսդիրը արդարացիորեն սահմանափակել է իրավասու մարմնի կողմից այս փաստի հաստատման համար անհրաժեշտ ապացուցողական նյութի շրջանակը միայն հասանելի և դրա շնորհիվ հայտնի դարձած օրինական եկամուտների վերաբերյալ տվյալներով, քանի որ հակառակ մոտեցումը, այսինքն՝ օրինական եկամուտների վերաբերյալ հնարավոր բոլոր ապացույցների ներկայացման պահանջը իրավասու մարմնի համար կլիներ անիրագործելի: Այս առումով ուշագրավ է Օրենքի ընդունման հիմնավորման հետևյալ հատվածը. «Հաշվի առնելով, որ գույքի ծագման վերաբերյալ ապացույցները, այն ծավալով, որով դրանք ձեռք բերելու հնարավորություն չունի իրավասու մարմինը, գտնվում են գույքը ձեռք-

բերած անձի մոտ՝ օրենքի նախագիծը նախատեսում է հայցի բավարարման հնարավորություն, եթե իրավասու մարմինը ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը չի հիմնավորվում հայցվորին հասանելի օրինական եկամուտների վերաբերյալ տվյալներով: Համապատասխանաբար, պատասխանողը կարող է հերքել կանխավարկածը՝ ապացուցելով գույքի օրինական ձեռքբերումը՝ ներկայացնելով այն փաստաթղթերը, որոնք օրենքի ուժով հասանելի են միայն պատասխանողին»:¹⁷

Միևնույն ժամանակ, Օրենքի և դրան առնչվող փաստաթղթերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս քննարկվող կանխավարկածի հիման վրա որպես ենթադրվող փաստ դիտարկել ոչ թե գույքի՝ ապօրինի ծագում ունենալը, այլ այդ գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ չափով օրինական եկամուտների բացակայությունը:

Բանն այն է, որ հիշյալ փաստը ուղղակիորեն չի հիշատակվում Օրենքում, փոխարենը գույքը ապօրինի ծագում ունեցող է համարում այն դեպքում, երբ գույքի ձեռքբերումը հիմնավորված չէ օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով: Սակայն ակնհայտ է, որ այս երկու փաստերի միջև առկա է որոշակի տրամաբանական կապ, քանի որ գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ չափով օրինական եկամուտների առկայության դեպքում դրանք վարույթի ընթացքում կհիմնավորվեին, իսկ համապատասխան հիմնավորման բացակայությունը վկայում է անհրաժեշտ չափով օրինական եկամուտների բացակայության մասին՝ իհարկե չբացառելով բացառիկ իրավիճակները, երբ ինչ-ինչ պատճառներով գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ չափով օրինական եկամուտների առկայության փաստը չվկայակոչվի կամ չհիմնավորվի: Այդ իսկ պատճառով կարելի է արձանագրել, որ այս դեպքում գույքի ձեռքբերումը օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով հիմնավորված չլինելու փաստի ուժով ենթադրվող փաստ է դառնում այդ գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ չափով օրինական եկամուտների բացակայությունը:

Նման հետևությունը ամրապնդվում է նաև Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը» և 3-րդ մասի «հերքել գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ» ձևակերպումներով, որոնցում որպես հակականխավարկած հիշատակվում է գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ չափով օրինական եկամուտների առկայության ապացուցումը: Այստեղ էլ պետք նկատել, որ պատասխանողի համար նման պարտականությունը ծագում է, այսինքն՝ ապացուցման բեռը տեղափոխվում է գույքի սեփականատիրոջ վրա միայն այն դեպքում, երբ իրավասու մարմինը ապացուցի, որ օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալները չեն համապատասխանում ձեռք բերված

¹⁷ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1931/about>

գույքին¹⁸:

Հարկ է նշել նաև, որ թե հայցվորի կողմից գույքի՝ ապօրինի ծագում ունենալու ենթադրության, թե պատասխանողի կողմից հակառակի ապացուցումը ենթարկվում է ոչ ստանդարտ ապացուցողական շեմի: Խոսքը «հավանականությունների հավասարակշռման» կամ «ապացույցների գերակշռման» չափանիշի մասին է:

Այդ առնչությամբ Եվրոպական միության 2014 թվականի հանցավոր գործունեության արդյունքում ստացված ակտիվների սառեցման և բռնագանձման վերաբերյալ թիվ 2014/42/EU դիրեկտիվի¹⁹ 21-րդ կետը սահմանում է, որ գույքի բռնագանձումը կարող է հնարավոր լինել, եթե դատարանը հանգում է այն եզրակացության, որ վիճելի գույքը ձեռք է բերվել հանցավոր գործունեության արդյունքում: Նշվածը չի նշանակում, որ պետք է հաստատվի հանցավոր գործունեությունից ձեռք բերված լինելու հանգամանքը, սակայն անդամ պետությունները կարող են բավարար համարել, որ դատարանը հավանականությունների հավասարակշռման կամ այլ ողջամիտ ենթադրությունների հիման վրա ավելի հավանական համարի գույքի՝ հանցավոր գործունեությունից ստացված լինելը, քան այլ գործունեությունից ստացված լինելը:

Ըստ էության, նույն տրամաբանությունն է արտացոլված Օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 19.12.2022 կարծիքում, որի համաձայն՝ «Ինչ վերաբերում է ապացուցման չափորոշիչին, ՄԻԵԴ-ն օրինական է համարել, որ համապատասխան ներպետական մարմինները բռնագանձման որոշումներ կայացնեն՝ հիմնվելով ապացույցների գերակշռության վրա, որոնք ենթադրում են, որ պատասխանողների օրինական եկամուտները չէին կարող բավարար լինել խնդրո առարկա գույքը ձեռք բերելու համար: Իրոք, ամեն անգամ, երբ ծանր հանցագործություններից ստացված եկամուտների մասով քաղաքացիական դատավարության արդյունքում բռնագանձման մասին որոշում է կայացվել, Դատարանը նման վարչություն գույքի ապօրինի ծագման վերաբերյալ «ողջամիտ կասկածից դուրս» ապացույցներ չի պահանջել: Փոխարենը, հավանականությունների հավասարակշռության կամ ապօրինի ծագման մեծ հավանականության վերաբերյալ ապացույցը, որը զուգորդվում է սեփականատիրոջ՝ հակառակն ապացուցելու կարողության հետ, բավարար է համարվել թիվ 1.1 Արձանագրության 1-ին Հոդվածի համաձայն համաչափության թեստի նպատակների համար»²⁰:

¹⁸ St' u **Venice Commission**, CDL-AD(2022)048, Amicus curiae Brief for the Constitutional Court of Armenia on certain questions relating to the Law on the Forfeiture of Assets of Illicit Origin, adopted by the Venice Commission at its 133rd Plenary Session (Venice, 16-17 December 2022), կետ 33:

¹⁹ St' u Directive 2014/42/EU of The European Parliament and of The Council of 3 April 2014 on the freezing and confiscation of instrumentalities and proceeds of crime in the European Union:

²⁰ St' u **Venice Commission**, CDL-AD(2022)048, Amicus curiae Brief for the Constitutional Court of Armenia on certain questions relating to the Law on the Forfeiture of Assets of Illicit Origin, adopted by the Venice Commission at its 133rd Plenary Session (Venice, 16-17 December 2022), կետ 23:

Այսպիսով, կատարված հետազոտության հիման վրա կարելի է անել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը հանցավոր և այլ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդյունավետ կառուցակարգ է, որը բաղկացած է «մինչդատական» և դատական փուլերից:

2. «Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկած» ձևակերպումը բովանդակալի առումով չի համապատասխանում ապացուցողական կանխավարկածների դատավարագիտական ընկալմանը, քանի որ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործում է, եթե հայցվորը ապացուցում է գույքի ապօրինի ծագում ունենալու փաստը: Այլ խոսքով՝ այս կանխավարկածի հիպոթեզը (կանխավարկածի գործողության պայմանները) և դիսպոզիցիան (ենթադրվող փաստը) համընկնում են:

3. Օրենքում նախատեսված կանխավարկածի հիման վրա որպես ենթադրվող փաստ կարող է դիտարկվել ոչ թե գույքի ապօրինի ծագում ունենալը, այլ այդ գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ չափով օրինական եկամուտների բացակայությունը:

4. Գույքի ապօրինի ծագում ունենալու փաստը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում ունի վարկածի բնույթ:

5. Օրենսդիրը արդարացիորեն սահմանափակել է դատախազության կողմից գույքի՝ ապօրինի ծագում ունենալու վարկածի հաստատման համար անհրաժեշտ ապացուցողական նյութի շրջանակը միայն հասանելի և դրա շնորհիվ հայտնի դարձած օրինական եկամուտների վերաբերյալ տվյալներով, քանի որ հակառակ մոտեցումը, այսինքն՝ օրինական եկամուտների վերաբերյալ հնավոր բոլոր ապացույցների ներկայացման պահանջը դատախազության համար կլիներ անիրագործելի:

6. Գույքի ձեռքբերման օրինականությունը ապացուցելու պարտականությունը ծագում է, այսինքն՝ ապացուցման բեռը տեղափոխվում է գույքի սեփականատիրոջ վրա միայն այն դեպքում, երբ դատախազությունը ապացուցում է, որ գույքի ձեռքբերումը չի հիմնավորվում օրինական եկամտի հասանելի աղբյուրների վերաբերյալ տվյալներով:

7. Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու վարկածը ենթակա է հաստատման և հերքման ապացուցման «հավանականությունների հավասարակշռման» կամ «ապացույցների գերակշռության» չափանիշով:

ТИГРАН МАРКОСЯН – Правовой характер и содержание «презумпции» незаконного происхождения имущества. – Механизм гражданского взыскания является новшеством в правовой системе Республики Армения, и необходимость его всестороннего изучения, а также исследования отдельных институтов, имеет большую актуальность.

В этом контексте обсуждение вопросов, связанных с презумпцией незаконного происхождения имущества, имеет особое значение, поскольку его правомерное применение критически важно для поддержания баланса общественных и частных интересов в рамках рассматриваемого механизма, а также для гарантии эффективной защиты прав человека.

На основе подходов, выработанных в международных документах, отечественном законодательстве и процессуальном правоведении, в работе представлена общая правовая характеристика производства по обращению взыскания на имущество незаконного происхождения, его этапы, сущность и процессуальное значение доказательных презумпций, условия действия презумпции незаконного происхождения имущества и предполагаемый факт ее силы, а также критерий «баланса вероятностей» или «преобладания доказательств», применимый в данном производстве.

В статье автор представляет ряд научно-практических выводов, среди которых несоответствие процессуальных представлений о презумпции незаконного происхождения имущества, его гипотетический характер и возможность доказывания определенными средствами доказывания и т. д.

В результате можно констатировать, что выводы, изложенные в статье, могут стать ориентиром для дальнейшего развития правоприменительной практики, а также действующих регулирований.

Ключевые слова: гражданская конфискация, производство о конфискации имущества незаконного происхождения, *in rem*, судебное доказательство, бремя доказывания, презумпция, гипотеза, опровержение, баланс вероятностей, преобладание доказательств

TIGRAN MARKOSYAN – The Legal Nature and Content of the “Presumption” of Illicit Origin of Property. – The civil confiscation proceedings is a novelty in the Armenian legal system and the comprehensive study of both complex and individual issues holds significant relevance.

In this regard, the issues of the presumption of illegal origin of property is of particular importance, as its proper application is crucial for achieving a balance between public and private interests, as well as for ensuring human rights protection.

This work is based on international documents, domestic legislation, and procedural studies, outlining the general proceedings for confiscating property deemed to have an illicit origin, its stages, the nature of evidentiary presumptions and their procedural significance, the conditions under which the presumption of illegal origin is applied, and the implications of this presumption. It also addresses the concept of "balancing of probabilities" relevant to these proceedings, or the criterion of "preponderance of evidence."

In conclusion, the findings presented in this article may provide valuable insights for the ongoing development of legal practice and the refinement of existing regulations.

Key words: civil confiscation, proceedings for confiscation of property of illicit origin, *in rem*, judicial proof, burden of proof, presumption, hypothesis, rebuttal, balance of probabilities, preponderance of the evidence, civil confiscation, proceedings for confiscation of property of illicit origin

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝
Издательский редактор
Publishing Editor

Արմեն Հովակիմյան
Армен Овакимян
Armen Hovakimyan

Վերստնագրող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Թողարկման պատասխանատու՝
Ответственный выпуска
Issued by

Հասմիկ Եսայան
Асмик Есаян
Hasmik Yesayan

Տեխնիկական խմբագիր՝
Технический редактор:
Technical Editor:

Հասմիկ Նազարեթյան
Асмик Назаретян
Hasmik Nazaretyan

Ստորագրված է տպագրության 15. 12. 2024: